

2004

73

-23

1021-62

ՄԱՅՐ

ԱՐԴԵՒԹԵԱՄ

Վագլիարէն բնադրէն թարգմանված

Ուրու եղլու և այս հոգու հոգ, և
այս այլ մօլ իմոյ . ուր ապահոված ունի ովակ
և առանձին . առապահութեաց ըստ մշակ է առաջ քառամ :
Առակ . դ . 3 , 4 :



Ի ԶՄՐԴԻՑԵԱ

Ի Տպարանի Կուլիկլմոս Կոփիթիթի

1840

Գիշ 4 դաշտական .

5065-мк



1361-72

ՅԱԼՈՅԻ

ԵՐԵ

Ել. Ե:	Անյըներան ողբերաբարու-	
	լեռնացը վըսյ	1:
Ել. Բ:	Անյըներան ունեցած էլ -	
	խառնաւլեռնացը վըսյ	25:
Ել. Գ:	Գառըյեալ մայքանիան իշխանու-	
	լեռնացը վըսյ	55:
Ել. Դ:	Անյըներան ունեցած դժունու-	
	բուռլեռնացը	99:
Ել. Ե:	Պատկառալեռներան յան-	
	ցանքաներացը վըսյ	135:
Ել. Օ:	Քրիստոնեան զարգան-	
	լեռն վըսյ	178:
Ել. Ե:	Գառըյեալ քրիստոնեան	
	զարգանլեռն վըսյ	217:
Ել. Բ:	Ներկառալիւն	250:

ՄԵՅԻ ՈՐԴԵԼՈՒԾՈՒԹ

Գ. Ա. Ա. Ա.

Մայրելուն պարզաբանութեանցը Հռոյ:

ՄԵՅԻՆ կեանքին առջի տարիներուն վերակացուն և առաջնորդը մայրն է : Տղի մը առառնի վարքին աղէկ ու գէշ ըլլալը ըստ մեծի մասին մօրմէն կախված է : Եւ ինչու համար ասանկ չի պիտի ըլլայ : Ո՞ր քաները այնչափ ամուր կըտպաւորին, և այնչափ Եղելօք կըդիմանան, որչափ անոնք՝ որ մանկական հասակին թարմութեան և ընդունակութեան ատենը մտաց մէջ կառնըվին : Ո՞ր վարժապետը այնչափ կընայ հաւատարմութիւն և պատիւ շահիլ, որչափ մէկ խելացի մայր մը : Եւ ո՞ւր կընայ դըտ-

Նըվել դիտութիւն ձեւք բերելու աշխորժակ , թէ չէ երբոր մայրական ծունկերուն բոլորտիքը կըհաւաքի զաւակաց փոքրիկ հօտը , Աստուծոյ ու երկնից վրայ լսելու համար :

Դշմարիտ է թէ մարդուս վարքին աղեկ կամ գէշ ըլլալը անհամար պատճառներէ կախվածէ : Ուկ կերպով մը չենք կընար ըսել թէ մի միայն մօրմէն կախեալ է անիկա : Այս կայն կարելի է թէ մօրը դօրութիմը ամէնէն մեծ է , ինչու որ ամէնէն առջինն է . և ամէն մարդ դիտէ որ տըղայոց միտքերուն մէջը տպաւորված բաները ընդհանրապէս հաստատուն կըմնան :

Բարեպաշտ և հաւասարիմ մայր մը կարելի է թէ անաւակ զաւակ մը ունենայ : Կարելի է թէ բոլոր սանձերը կոտրտէ ան զաւակը , ու Աստուծ թող տայ անոր որ իր կամքին ձամշան երթայ : Աս կերպովս տառապեալ ու սիրտը կոտրած մայրը իր

Ատեղծողին մեծութեանը առջևը մի
 այն կրնայ խոնարհիլ , որ կըսէ
 “Գիտցէք որ ես եմ Աստուած” .
 Առաջ. ԽԵ. 10 : Բայց խղճմտանքը՝ ու
 րով մէկը կրնայ գիտնալ թէ ինքը եթ
 պարտաւորութիւնը կատարելի է , աս
 տառապանքին լեղիութիւնը կըվեր-
 ցունէ : Մանաւանդ թէ ասանկ դիպ-
 ւածներ քիչ կըհանդիպին : Ենառակ
 զաւակները ընդհանրապէս ան ձը-
 նողըներուն պտուղներն են , որոնք ի-
 րենց ընտանեացը բարոյական ու աս-
 տուածապաշտութեան վարժութիւնը
 զանց ըրին : Կան ծնողըներ՝ որ իրենք
 անառակ են , և ասանկ չէ թէ միայն
 իրենց զաւկըներուն թող կուտան ան-
 զուսպ մեծնալ , հապա իրենց օրինա-
 կովը մեղքի կըհրաւիրեն անոնք : Կան
 ուրիշներ ալ՝ որոնք արդար և առա-
 քինի են , ունակ աստուածապաշտ ,
 բայց այսու ամենայնիւ իրենց զաւկը-
 ներուն բարոյական վարժութիւնը
 զանց կընեն , և հետեւապէս անոնք

անհնազանդութեան ու մեղաց մէջ
կըմեծնան : Հոդ չէ քննել թէ ի՞նչ է
աս զանցառութեան պատճառը : Հեւ
ըիք է գիտնալ թէ սոլորաբար զան-
ցառութեան ետևէն անհնազանդու-
թիւն և կամապաշտութիւն կուղայ :

Ասկից է որ ամէն վիճակի մէջ
գտնըված երեւելի մարդոց զաւկընե-
րը շատ անգամ իրենց ծնողացը անար-
դանք են : Եթէ մայրը սորված չէ իր
զաւկըները կառավարել , եթէ կը-
նայի որ միայն հայրը հնազանդեցունէ
անոնք և զսպէ , երբոր տունէն հետու
է ան , բոլոր տունին կառավարու-
թիւնն ալ հետու է . տղաքը ձղված
են վայրենի գաղան դառնալու , ան-
հնազանդութեան համարներ սորվե-
լու , խաբէական վարպետութիւններ
բանեցունելու , ապատամբութեան և
չարութեան վարք մը ստանալու՝ որ
իրենց մայրը անարդենուն առաջ
կուղայ : Բայց թէ ոք տղաք իմաս-
տուն մօր մը զօրաւոր կառավարու-

թեանը տակ ըլլան , գրեթէ միշտ ա-
 սոր հակառակը կըպատահի : Ետենօք
 բարեպաշտ մայր մը կար , որ շատ
 անզամ իր սենեակը կերթար , ու
 ձեռքը իր տղին մատղաշ գլխուն վր-
 բայ դնելով Եստուծոյ օրհնութիւնը
 իր զաւկին վրայ կըխնզըէր : Ես ա-
 ղօթքները ու տըւած վարժութիւն-
 ները տղին սրտին մէջը խորունկ մը
 տպաւորեցան : Պարստաւորեցաւ տղան
 ատ մայրը պատուել : Օգաց իր սըր-
 տին մէջը որ իր մօրը վարքին մէջը
 անանկ բարութիւն մը կար , որ
 յարգութեան և սիրոյ արժանաւոր
 էր : Իր ետքի կեանքին մէջը չէր կըր-
 նար սրտին մէջէն դուրս հանել ան-
 տպաւորութիւնները՝ որ պղտիկուց
 ընդունել էր : Յէպէտ անզպամ սը-
 րիկայ մը եղաւ , թէպէտ բարեկամ-
 ները՝ և տունը՝ ու բոլոր աւաքինու-
 թիւնները երեսէ ձգեց , բայց իր մօ-
 րը աղօթքներուն յիշտակութիւնը
 պահապան հրեշտակի մը պէս իր եւ

տեհն գնաց՝ ուր որ ինքը գնաց : Եաւ
 ւաստիի վիճակ մոռեալով՝ անսոնց վա-
 րած խիստ անշնորհք կեանքին խառ-
 ներով պատաժ կէս զիշերվան կերու-
 խումի ատենը իրեն կըթւէր թէ իր
 մօրը փափուկ ձեռքը տակաւին իր
 գլխուն վրայ է, ու Եստուծոյ կաղա-
 չէկոր որ իր դաւիններէ, և օրէնէ
 անիկա : Եփրիկէի կողմերը զնաց, ու
 անոր զարհութելի ծովեղերքներուն
 բարբարս բնակիչներէն ալ անարդ
 անպիտան եղաւ . բայց ան մայրական
 կակուղ ձեռքը տակաւին իր գլխուն
 վրայ էր, և անոր ջերմեւանդ աղօթք-
 ները տակաւին իր սրտին մէջը կըթա-
 փանցէին : Եւ ի՞նչ սքանչելի բան
 էր աս ներգործութիւնը՝ որ անօրէ-
 նութեան մէջ անցած շատ տարիներէն
 ետքը, ետ դարձուց ան անառակ
 որդին, զդ ջացած ու Եստուծոյ զա-
 ւակ եղած . բարձրացուց անիկո՞ ե-
 կեղեցին խիստ պայծառ զարդերուն

մէկը ըրաւ , ու շատ տղոց և աղջիկ-
 ներու փառաց մէջ մտնալնուն ա-
 ռաջնորդ դրաւ : Ես ի՞նչ զօրութիւն
 է որ մայրական ջանացողութիւնը ու-
 նի : Եւ ի՞նչ քաջալերութիւն կուտայ
 ասիկա ամէն մէկ մօր , հաւատարիմ
 ըլլաւ իր ջանացողութեանը մէջ , իր
 զաւակը Վատուծոյ համար մեծցունե-
 լու : Օձէ որ աս մայրը իր պարտաւո-
 րութիւնը դանց ընէր , թէ որ ուրիշ
 շատ Վրիստոնեայ մայրերու պէս ան-
 հոգ ըլլար , խիստ հաւանական է թէ
 իր որդին անոնց հետ պիտի գտնըվէր ,
 որոնք յաւիտեան դուրս պիտի ձգվին
 երկինքէն : Ո՞րը զօրութիւնն էր՝ որ
 տղան փրկեց : Ես մարդը վերջապէս
 մէկ խիստ յաջողակ քարոզիչ մը ե-
 ղաւ . և ամէն ան հոգիները՝ որոնց
 փլկութեանը ինքը գործիք եղաւ ,
 յաւիտենական դարերուն մէջ պիտի
 օրէնքն զ Եստուած , որ անանկ մայր
 մը ունէր ան :

Կարելի է որ մանկութեան հասա-

կին մէջ մոքին մէջը աս կերպով
 տպաւորված ներդործութիւնը շատ
 տարիներ կորարված երևայ : Երբոք
 մէկ որդի մը իր ծնողացը բնակարա-
 նը կըճգէ , ու զբաղմունքով լեցուն
 աշխարհիս մէջը կըմտնայ , անհամար
 փորձութիւններ իրարու վրայ անոր
 դէմը կելան : Ու որ առաքինու-
 թեան և ինքը ինքը կառավարելու
 հաստատուն սկզբունքներովը ամուր-
 ցած իր մայրը չե ձդեց , անտարակոյս
 աս փորձութիւններուն առջեր պիտի
 յաղթը վի իյնայ : Կարելի է թէ նաև
 մէկ մօր մը բոլոր աս ըրածներէն ու
 կըցածին չափ ընելիքներէն ետև ալ
 ատեն մը իյնայ : Հնար է որ դանա-
 զան չարութեանց մէջ խորունկ թաղ-
 վի : Հնար է որ տունը սորված դասե-
 րը բոլորովին մոռնայ , բայց ան ներ-
 գործութիւնը որ մօրը վարժութիւն-
 ներովը և մօրը աղօթքներովը ընդու-
 ներ է , զեռ իր սրտին մէջը աղքու և
 զօրաւոր կերպով մը իր գործը ա-

ուաջ կըտանի : Պիտի մտմըտայ իր
 մօրը թափած արցունքներուն վրայ՝
 երբոր խղճնտանքին խայթոցը կէս
 գիշերուն զինքը արթուն կըպահէ ,
 կամերբոր վտանգը կըսպառնայ իրեն
 որ շուտով պատրաստըվի Վատուծոյ
 ատեանը կանգնելու : Իր ընտանեացը
 բարեպաշտութեան խորհուրդները իւ-
 րեն զուարձութիւններուն մեղանչա-
 կան գաւաթին մէջը շատ անգամ դառ-
 նութիւն պիտի խառնեն , և պիտի
 պարտաւորեն զինքը սրտանց հառա-
 չելու ան առաքինութեանը ու խաղա-
 ղութեանը վրայ՝ որ իր էտին ձգեր
 էր : Ուէ և մեծ միջոցով հեռու
 կեղոսոս անունով բնակարաններու
 մէջ անարգ ու անպիտան մնայ , սիր-
 ոը կոտրած մօրը վրայ երբեմն ինքը
 պիտի մըտմտայ : Վահնկ հնար է թէ
 շատ տարիներէն ետքը , զուցէ շա-
 տոնց իր մայրը զերեղման իջած , ա-
 նոր առաքինութիւններուն յիշատա-
 կութիւնովը իր մեղքերը ձգէ :

Քանի մը տարի առաջ պարոնին
 մէկը բազմամարդ քաղաքի մը մէջ
 պատի եկեղեցի մը կերթար՝ ուր որ
 նաւաստիները սովորութիւն ունեին
 երթալ : Եկեղեցին Ճիշտ դիմացը
 նաւաստիներու պանդոկ մը կար . պան-
 դոկին դուռը հովերուն երեսէն ծեծ-
 ված նաւաստի մը նատեր էր, ու թևե-
 րը իր կուրծքը փաթթած բերնին
 ծխախոտը փչելով ժողովուրդին կընա-
 յէր՝ որ իրարու ետևէ եկեղեցին մէջ
 կըհաւաքէին : Պարոնը դէպ ’ի նաւաս-
 տին զնաց ու ըստ . “ Յարեկամ ,
 մեր հետը դուն ալ եկեղեցի չե՞ս եր-
 թար ” : “ Չէ ” , պատասխան տըւաւ
 նաւաստին համարձակութեամք : Պա-
 րոնը՝ որ մարդուն երեսէն իմանալով
 նախատիլը յանձն առեր էր , անու-
 շութեամք մը ըստ . “ Յարեկամ ,
 կերեւայ որ դուն շատ կարծր օրեր տե-
 սեր ես . Հրամանքդ մայր ունի՞ս մի՞ ” :
 “ Նաւաստին գլուխը վերցուց , խորունկ

մը պարոնին երեսը նայեցաւ, ու սլատասիսան չի տըւաւ :

Պարոնը իր խօռքը շարունակելով
ըսաւ . “Դիցուք թէ հիմայ քու մայ-
րդ հոս ըլլար, ի՞նչ խրատ կուտար
քեզի” : Աս խօռքին վրայ աղքատ նա-
ւաստիին աչքերը արցունքով լեցան .
ջանաց որ մէկ վայրկեան մը անոնք
ծածկէ, բայց չի կրցաւ . և շուտ մը
Եր խորառւբորտ ձեռքին կոնակովը
արցունքը սրբելով՝ ելաւ կանգնե-
ցաւ, ու սրտին խուվուլթենէն պատ-
ճառած զրեթէ անորոշ ձայնով մը ը-
սաւ . “Կերթամ եկեղեցի” : Փողոցին
դիմացի կողմը անցաւ, եկեղեցիին
դուռնէն ներս մտաւ, ու զնաց ժողո-
վուրդին մէջը նատաւ :

Աս մարդը ետքը ի՞նչ եղաւ յայտ-
նի չէ . սակայն զրեթէ ճշմարիտ է որ
ինքը մայր մը ունէր, որ իրեն աղէկ
վարժութիւն տըւած էր . և երբոք
պարոնը անիկա յիշեց՝ թէպէտ և
կարծրասիրտ նաւաստի մըն էր, իր

սիրտը հալեցաւ : Հնա՛ր է որ աս խօս
սակցութիւնը առ մասդը իր մեղքեւ
ըէն դադրեցուց ու անիկա դէպի իր
Փրկիչին ձգեց : Ինչ որ եղաւ եղաւ ,
մայրական ներգործութեան ուժը կը-
ցուցընէ : Եւ կերևայ թէ աստանդա-
կանութեան ու մեղաց մէջ անցած
տարիները չեն կընար քերել աւրել
սրտին մէջէն ան տպաւորութիւնները ,
որ մէկ մօր մը տրւած վարժութիւն-
ներէն ու աղօթքներէն հոն տպաւո-
րեցան :

Մեծ նեղութիւն է անհնազանդ
գաւկըներ ունենալ իրենց մանկու-
թեան ատենը : Տայց տասնապատիկ
մեծ նեղութիւն է զաւակ մը ունենալ
որ անհնազանդութեան մէջ մեծնայ ,
ու անարդ անառակ մարդ մը ըլսայ :
Քանի՝ քանի՝ Ճնողքներ իրենց օրեւ-
րը ցաւերով ու զիշելները առանց
քունի անցուցին իրենց որդոցը անա-
ռակ վարքերուն համար : Քանի՝ քա-
նի Ճնողքներու սիրտը կոտրեցաւ և

Երենց Ճերմըկած մտղերը տրտմութիւնով գերեզմանը իջան , միայն իւրենց անհոգութեանը համար , որ զանց ըրին զաւակներնին Տէրոջը խրատովը ու վարժութիւնովը մեծ ցունել :

Ո՛վ մայրեր , Ճեր ապառնի երջանեկութիւնը Ճեր զաւկըներուն Ճեռքնէ : Հնար է որ անոնք Ճեր բոլոր ուրախութիւնները տրտմութեան խաւարով ծածկեն , բոլոր Ճեր վայելչութիւնները լեղիցունեն , և Ճեզ անանեկողորմելի ընեն , որ Ճեր թշուաւութեանը՝ մահը միայն դեղ ըլլայ :

Աս փոքրիկ աղջիկը՝ որ դուն հիմայ ծունկերուդ վրայ կը փայփայես , և որ ուրախութեամբ լեցուն սենեակիդ մէջը կը խաղայ , աս փոքրիկ աղջիկը աշխարհի մը մէջ մտաւ՝ ուր որ փորձութիւնները չորս կողմէն իրարու վըրայ դիղված են : Ա՞ր բանը ուժ պիտի տայ անոր աս փորձութիւններուն դէմ դնելու , թէ չէ՝ աստուածալաշ-

տութեան հաստատուն սկզբունքները : Եւ ինքը ուր պիտի ձեւք ձգէան սկզբունքները , թէ որ մայրը իւրեն ինկած պարտաւորութիւննը դանցընէ և գէշ օրինակներ տայ անոր : Թէ որ քու հիմակվան անհող ըլլալովդ ասկից ետքը անիկա մեղքերու և փորձութիւններու մէջ իյնայ , քու մտացդ հանգստութիւնը ի՞նչ պիտի ըլլայ : Ո՛վ մայր , շատ քիչ գիտես գուն ան թշուառութիւնը , որուն մէջը քու սիրական աղջիկդ ասկից ետքը քեզ պիտի մաշեցունէ :


Հատ զօրաւոր օրինակներ հնարէ աստեղս առաջ բերել : Դիւրին է ևս անհամար կենդանի չարչարվողներուն հարցունել , որոնց քաշաճները իրենց զաւակացը անառակութենէն պատճառած չարիքներուն վկայութիւնն են : Գնայ մտիր ան մթին սենակը ոչ միայն երեւակայութեամբ , հապա իրօք , ուր որ մայր մը իր աղջըկանը վրայ նստեր կուլայ և չուզեր

միսիթարիւ, վասն զի անիկա կորսըն-
 ցուց առաքինութիւնը ու երկինքը .
 բայց անչնար է խմանալ թէ ի՞նչ
 պէս անտանելի է ան ցաւը, որ ասանկ
 անպատիւ եղած ու սիրտը կոտրած
 մօր մը վրայ պիտի հասեի : Վսիկա ա-
 նանկ մէկ ցաւ մըն է՝ որուն լեղիու-
 թեան համը առնողը, ու ծանրութիւ-
 նը դգացողը միայն կընայ հասկընալ :
 Վնա՞ մտիր ան տունը՝ ուր որ բարե-
 պաշտութիւնը և աղօթքը կըթաղաւո-
 րէ, ու դտիր հայրը և մայրը հալած
 ու մաշած դէմքով իրենց քաշած տա-
 ռապանքներէն, որոնց երեսին վրոյ
 ուրախութեան նշոյլ մը չերևար, և
 իրենց խօսքին ողբալի ձայնը կըսէ թէ
 ի՞նչպէս ստատիկ է իրենց տրտմութիւ-
 նը : Հարցուր պատճառը աս սրտա-
 պատառ կակիծին : Վայրը իր ար-
 ցունքները ու հառաջանքերը միայն
 պիտի տայ քեղի պատասխանի տեղ :
 Հայրը իր բոլոր զօրութիւնը վրան
 ժողվելով պիտի ըսէ քեղի . “ՎՇ

չեկա” , և ալ չի պիտի կրնայ խօսիւ . սրտին ցպւը արդելք պիտի ըլլայ իր նեղութիւնը ալ էվելի պատմելու :

Չափազանց թող չի թուի ասիկա :
Են քու սիրական աղջիկդ՝ որ քու
պարձանքդ և ուրախութիւնդ է հիմայ , անդամ մը թող ինքը զինքը անպարկեցութեան տայ , անառենը պիտի դգասա՞ ինչ որ լեզու չի կրնար պատմել :

Ասիկա սոսկալի բան մըն է . բայց
անանկ բան մըն է՝ որ մայրը պարտի
զգալ ու հասկընալ : Կըգտնըվին աւ
սանկ դիպուածնելը հոս տեղս առաջ
բերելու թէ եկեղեցական ու թէ աշխարհական վիճակի մէջ , որոնք բաւական ըլլան բոլոր ծնողքները դողացունելու : Եկո՛ր երթանք եկեղեցականին տունը՝ և քեզի ըսեմ թէ մէկ աղջրկան մը անառակութիւնը մօրը մահուանը պատճառ եղաւ , ու ծերունի հօրը երեսին վրայ գունաթափու



Թիւն, ծունկերուն դպրության սրտին
մէջը մահուան ցաւեր ձգեց : Եկո՛ր
քեզ մեծատունին պալատը տանիմ,
ու ցուցընեմ բոլոր ան դեղեցկութիւն
ները և հարատութիւնները որոնցմով
ինքը պատաժ է . և սակայն անիկա
պիտի պատմէ քեզի թէ ինքը նեղու-
թեան որդւոցը մէջ ամենէն ապեր-
ջանիկն է . թէ ուրախ սրտով կըհա-
ճի բոլոր իր հարատութիւնները տալ,
թէ որ կարենայ ետ առնել իր աղ-
ջըկանը կորոշնցուցած լաւութիւնը .
և թէ ուրախութեամբ յանձնառու
պիտի ըլլայ մեռնիլ , թէ որ ասան
կով իր աղջըկանը կեղտոտ անունին
յիշատակութիւնը կարող ըլլայ ջըն-
չել վերցունել :

Հոդ չէ թէ դուն ինչ վիճակի մէջ
կապրիսկոր . ատ փոքրիկ տղեկը՝ որ
հիմայ ատանկ անմեղ է , որուն անուշ
խաղերը ու հաճոյական խնդումը սիր-
ութ կըզմայլեցունէ , կարելի է թէ
անհամեմատ թշուառութեան տարի-
ներ հասցունէ քու վրադ :

Ո՛վ զուն՝ որ մայր ես, 'Նայէ սա
 թափառական գինովը որ պատէ՝ 'ի
 պատ զարնը վելով կանցնիկոր։ Լսէ իր
 բերնէն ելած սոսկալի անէծքները,
 աղտոտ ծրտոտ ու կտորփրդուճ լաթե-
 րով առջևէդ անցած ատենը։ Ա.ս
 թշուառականը մայր մը ունի։ Կարե-
 լի է թէ որբեարի ու աղքատութեան
 մէջ ըլլայ ան և խանդակաթ որդիի
 մը միսիթարութեանը և օգնութեանը
 կարօտ։ Դառն ալ որդի մը ունիս.
 դուն ալ կարելի է թէ շուտով որբե-
 արի ըլլաս։ Ծմէ որ քու որդիդ անա-
 ռակ է, երկու անդամ որբեարի եղար
 դուն։ զաւակ չունեցողէն հաղար ան-
 գամ դժբաղդ ես դուն։ Դառն հիմայ
 մտմրտալ անդամ չես կընար թէ քու
 որդիդ ասանեկ անառակ պիտի ըլլայ
 ընաւ։ ուրեմն ի՞նչպէս սոսկալի պի-
 տի ըլլայ իրօք անանեկ պատահիլը։

Ես ատենօք մէկ մայր մը դիտէի՞ ո՞ր
 մէկ հատիկ որդի մը ունէր։ Ա.ս մայրը
 կաթողին սիրով մը կըսիրէր իր տը-
 սի ըլլայ իրօք անանեկ պատահիլը։

ղան , և չէր կլնար անոր մէկ ուղած
 բանը ուրանաւ : Աս կերպովս տղան
 շուտով սկսեց իր մօրը վրայ հրամա-
 յել : Տղին հայրը որ մեռաւ խեղճ
 կինը իր անպիտան տղին ողորմութեա-
 նը կարօտ մնաց : Տղին մանկութեան
 ատենը մայրը իր պարտքը զանց ը-
 րաւ , հիմայ անոր անդուստ կիրքերը
 անանկ զօրացան , որ իր կարողութիւ-
 նը չէր հանեէր կառավարութեան տակ
 առնել անիկա : Տղան իր կամապաշտ
 կուռարար ու վրէժինդիր վարքովը
 մօրը գլխուն սաստիկ անէծք մը եղաւ :
 Իր վրէժինդրութեան կիրքը հետղ-
 հետէ անանկ բորբոքեցաւ որ դրեթէ
 խենթութեան աստիճանի հասաւ :
 Անէկ օր մը իր մօրը վրայ կատղելով
 տունը կրակի տըւաւ , որ բոլոր մէջի
 եղածներովը մոխիր դարձաւ , ու մայ-
 րը յետին աղքատութեան աստիճանի
 մէջ ինկաւ : Բաւնըվեցաւ բանտը
 զրվեցաւ տղան ու հոն իրօք խենդէ :
 նաւով իր աչքերը փորեց հանեց

Նիմայ անիկա մշտնջենաւոր մթութեան մէջ ձգված է չորս դիէն քարէ պատերով, երկաթ վանդակի մէջ կատղած խենթ մը :

Ո՞՛հ ի՞նչպէս սաստիկ պիտի ըլլայ ան մօրը ցաւը, որ բոլոր իր քաշած ցաւերէն՝ սիրտմաշուքներէն՝ ու աշալուրջ զգուշութիւններէն ետքը իր որդին դիւական ողի մը դարձած տեսնայ, անիկա իրէն պաշտպան ու բարեկամ տեսնալուն տեղը : Դուն ամիսներով զգուշութիւն ըրիր քու զաւկիդ անօգնական մանեկութեան ատենը : Դուն քեզ անհանգիստ ըրիր որ անոր հանգստութիւն տաս : Ե՞նոր հիւանդութեան ժամանակը քու հոգնած ու տկար ըլլալդ միտքդ չի բերիր, և խիստ երկան գիշերը անոր օրորոցին քովը արթուն սպասեցիր, ամէն մէկ պէտք եղածը ընելով անոր : Իր երեսը խնդալու ատենը անսանկ ու լախութիւն մը ունեցար՝ որ ծնողքէն ՚ի դառ մէկը չի կընար ունենալ, և

քու ամենասսիրելի գանձղ կուրծքիդ
 վրայ սեղմելով խնդրեցիր, որ քու մեծ
 վարձքդ իր հնազանդութիւնը ու սէրը
 ըլայ՝ իր գալու տարբիներուն մէջ։ Առ
 հիմայ ինչ սոսկալի վարձք մը, թէ
 որ առ զաւակը մեծնոյ քեզ ատելու
 և անսարդելու, քեզ առանց բարե-
 կամի ձգելու հիւանդութեան ու աղ-
 քատութեան մէջ, և բոլոր իր ժա-
 ռանդութիւնը շուայլութեամբ վատնե-
 լու չար ու անկարգ սովորութեանց
 մէջ։ Քու երկրաւոր երջանկութիւ-
 նըդ ինչպէս բոլորովին քու զաւկիդ
 աղէկութենէն կամ զէշութէնէն կախ-
 ված է։ Գիտցիք որ անոր բնաւորու-
 թիւնը հիմայ քու ձեռքդ է և դուն
 ձեի պիտի խօթես անիկա կամ աղէկ
 և կամ զէշ։ Թէ որ հաստատուն եռ
 կառավարութեանդ մէջ, և հաւա-
 տարմութեամբ քու պարտաւորու-
 թիւնդ կըկատարէս, հաւանական է
 թէ քու զաւակդ իր կեանքին մէջը
 քեզ պիտի պատուէ, ու տարիքդ ա-

ուած ատենդ քեղլ օդնական և միսիւ
թարութիւն պիտի ըլլայ : Բայց ասոր
հակառակը՝ թէ որ հաստատուն կամք
մը չունիս զաւկիդ անհնազանդութիւն
նը պատճելու , թէ որ անոր կիրքերը
չես զսպեր , թէ որ անիկա ան վիճաւ
կին մէջ չես բերեր որ կատարեալ
ու կամաւոր հնազանդութիւն ունենայ
քու իշխանութեանդ , պիտցիք
որ անիկա քու գլխուդ անէծք մը պիտի
ըլլայ : Խիստ կարելի է որ քեզ
բանի տեղ չի պիտի դնէ քու տկարութեանդ համար : Տանը մէջը զսպըվելու
չի սորվելով , բոլոր սանձերը պիտի
կոտրուէ , իր կեանքին մէջը քեզ
թշուառական պիտի ընէ , ու իր մահւան ատենը ամօթալից :

Բայց ափանա որ քիչ ծնողըներ
ինչպէս որ պէտք է նէ աս բանիս վրայ
կըխորհին : Չե՞ն զգուշանար ան զար
հուրելի հետեւանքներէն , որ իրենց
զաւկըներուն կառավարութիւնը հաս
տատ ու կատարեալ ընելնուն վրայ

կըկայանսոյ : Հաղարաւոր ծնողքներ
 կան հիմայ , որոնք կայծակներէ և
 փոթորիկներէ զարնըված ու աւրած
 կաղնի ծառերունման կեցած են : Հա-
 զարներուն բոլոր յոյսը կորսըվեցաւ ,
 բոլոր դէմքը խաւարեցաւ , ու իրենք
 սրտավատառ ցաւերով անտանելի
 թշուառութիւններու մէջ ինկան ,
 միայն իրենց զաւկըներուն անառակ
 վարքին պատճառովը : Եւ սակայն
 ուրիշ հաղարաւորներ ալ նոյն ձամ-
 բան կերթանկոր , նոյն թշուառու-
 թիւններուն համը առնելու պատրաս-
 տըվելով , ու բոլորովին անզգոյշ են
 իրենց պատահելու վտանգէն :

Շշմարիտ է թէ կան մայրեր , ո-
 րոնք աղէկ գիտեն ու կըզգան իրենց
 պարտաւորութիւնը : Բայց շատեր
 ալ կան , նաև բարեպաշտ ու առա-
 քինի մայրեր , որ գըեթէ կըմունան
 թէ իրենց զաւկըները մանկութեան
 ատենը որչափ որիրենց կառավարու-
 թեանը տակն են նէ , անկից պակաս

պիտի ըլլան երբոր մեծնան նէ : Եւ
 կըմեծցունեն անոնք իրենք իրենց ան-
 հաստատ ըլլալով և անոնց կամքը
 կատարելով , որ շատ չանցած երկաթ
 գաւաղանով իրենց ծնողքներուն վրայ
 կըտիրապետեն , ու անոնց սիրտերը
 անհամար ցաւերով կըծակծըկեն :
 Անէ որ դուն հաւատարիմ չես զաւկիդ
 իր մանկութեան առենը , զաւակդ աւ
 հաւատարիմ չի պիտի ըլլայ քեզի՝ եր-
 բոր մեծնայ : Անէ որ դուն անոր ար-
 դայական ու առանց իրաւունքի բաղ-
 ձանքները կըկատարես իր մանկու-
 թեան առենը , երբոր ան մեծնայ
 մարդ ըլլայ , ինքնիրենը պիտի կատա-
 րէ իր անկարդ բաղձանքները : Անա-
 տենը իր սրտին բոլոր յօժարութիւն-
 ները պիտի լեցունէ . և քու նեղու-
 թիւններդ էվելօք կծու պիտի ըլլան ,
 երբոր մոտածես թէ քու անհաւատար-
 մութիւնդ էլ՝ որ քու կործանմանդ
 պատճառ եղաւ : Անէ որ կուզես եր-
 ջանիկ մայր մը ըլլաւ երջանիկ զա-

ւակի մը , քու խորհուրդո՞ւ քու ջան-
քըդ՝ և քու աղօթքդ ան մեծ սպարտա-
ւորութեանը վրայ ըլլայ , որ է քու
զաւակութեանը և երկնից համար
մեծցունել :

ԴԱՅԱՎՈՐԻ :

Ա սայրէնուն սանեցած էշնունունունը
գըտյ :

Ըստածին գլուխը կարդացած ա-
տենդ կարելի է թէ շատ անդամ
տա հարցմունքը միաքդ եկաւ , թէ
“ Խնտոր կառավարեմ իմ զաւկըները ”
ար առաքինի ու երջանիկ ըլլան ” :
Հիմայ աշխատիմ տա հարցմունքին
պատասխանը տալու :

Տ Նդէկ տնական կառավարութեան
մէջ բացառձակապէս հարկաւոր բա-
նը հառավարութեան է : Վուանց ասոր
բոլոր ուրիշ ջանքերը փուծ ու դա-
տարկ կըլլան : Օաւկիդ հետք կամա-
նոր համար աղօթէ , քրիստոնէական
կրօնքի ճշմարտութիւններովը անիկա
4 ե

վարժէ , անիկա ուրախ ընելու ու իւ
 լին սիրտը շահելու համար անիտնջ
 աշխատէ : Բայց թէ որ հնազանդու-
 թիւն չես սորվեցուներնէ անոր , քու
 տրւած վարժութիւններդ գուր ջան
 անօդուտ վաստակ պիտի ըլլան : Հը-
 նազանդութիւն ըսելով չեմ կամիք
 նշանակել ան թուլ ու տկար հնա-
 զանդութիւնը , որ հազարումէկ ան-
 դամսպառնալով հազիւ թէ յանձնա-
 ու կըլլայ տղադ հրամայածդ ընելու .
 հապա յօժար սրտով և ուրախ դէմ
 քով կատարել մը ծնողաց հրաման-
 ները : Ոչ ալ բաւական է որ քու դա-
 ւակդ հնազանդեցունես պատճառներ
 առաջ բերելով և խելքը պառկեցու-
 նելով : Հապա հարկաւոր է որ քու
 իշխանութեանդ հնազանդ ըլլայ ան :

Աս վերջի ըսածիս վրայ օրինակ
 մը առաջ բերեմ : Դիցուք թէ քու
 փոքրիկ աղջիկդ հիւանդ է . բժիշկին
 իրեն համար պատրաստած դեղը կառ-
 նես՝ իրեն քովը կերթաս , ու աս հե-

տեւեալ խօսակցութիւնը կը ծագի մէջ
ջերնիդ :

“Աղջիկս, քեզի քիչ մը դեղ բե-
րի” :

“Ես դեղ չեմ խմեր՝ մայր իմ” :

“Խմէ, սիրելիս, խմէ, ինչու ոք
քեզի օգուտ կընէ” :

“Չէ, չընէր. ես դեղ չեմ ուզեր՝
մայր իմ” :

“Այս, կընէ դաւակս. բշիժկը ըստ
թէ կընէ” :

“Աղէկ, բայց համը գէշէ. չեմ
ուզեր անիկա” :

Մայրը կը շարունակէ դանաղան
կերպերով անոր խելքը պառկեցու-
նել, ու աղջիկը միշտ դէմ կը դնէ և
չուզեր դեղը : Երկան ըսրակ ու
ձանձրացուցիչ վիճաբանութենէն ետ-
քը մայրը կը պարտաւորի կամ գեղը
թափել, և կամ իր ուժը վրան ժող-
վելով բունութեամբ ան լեզի գեղը
անոր բերաննիվար լեցունել : Այս
պէս իր մայրական իշխանութեանը

անիկահ հնազանդեցունելուն ամեղը ինք
քը պատճառներ կըցուցընէ անոր, և
աս կերպովս հարկաւ դաւակը չուզեք
հնազանդիւ :

Քանի մը տարի առաջ մէկ մայը
մը աս կերպովս չե կընալով իր զաւ-
կին խելքը պառեցեցունել դեղը խմե-
լու, ու բաւական համարձակութիւն
չունենալով բռնութեամբ տալուան,
թափեց դեղը : Երբոր բժիշկը եկաւ
ամչցաւ խոստովանիւ թէ ինքը կա-
ռավարութեան կողմանէ պակառութիւն
ունի . և ան պատճառաւը ըստաւ թէ
դեղը չե տըւաւ : Բժիշկը տղին հիւան-
դութիւնը էվելքած գտնալով՝ ուրիշ
դեղ մը գրեց, կարծելով թէ առջե-
նը տրվեր էր հիւանդին : Բայց տղին
միոքը ամենաւին չե պառկելով թէ
հարկաւոր է ան դանելու դեղը խմել,
մօքը նորէն ըրած բոլոր ջանքերը ա-
նօգուտ էր : Աւստի ան անդամին ալ
խանդակաթ ու յիմար մայլը նետեց
դեղը, և հիւանդին բոլբոքը երակնե-

բուն մէջը զօրացաւ : Կողե՞ն բժիշկը
 եկաւ ու զարմացաւ որ տըւած դեղը
 իր զօրութիւնը չէր կառաքեր , և ոք
 խղճալի փոքրիկ հիւանդը մահուան
 դրւուր հասեր էր : Ոայրը երբոր լը-
 սեց թէ զաւակը պիտի մեռնի , մահ-
 ւան ցաւերու մէջ ինկաւ , և իր բ-
 րածը խոռտովանեցաւ բժիշկին : Ռայց
 ի՞նչ աստիճան ցաւով ու տառապան-
 քով կը կարծես թէ առ մայրը իր մե-
 ռած զաւկին մարմինին վրայ նայէ-
 ցաւ : Կը կարծէս որ բնաւ չի մտմտաց
 թէ ինքն էր իր զաւակը մեռցունողը :
 Բժիշկները թող ըսեն քեզի , թէ շատ-
 աղաք կորսրվեր են աս կերպովս : Տը-
 ղաքը աղեկ ատեննին հնապանդու-
 թեան սորված չըլլալով , հիւանդու-
 թեան ատենը ևս առաւել չեն կամիր
 հնապանդիլ :

Պինտ գլուխ տղան դեղը խմելու
 համար յորդորելու ջանքելը՝ շատ ան-
 գամ անանկ փոփոխութիւն մը կը ծը-
 նանին , որ դեղին ընելու դօրութեա-

Նը բոլորովին հակառակը կընելողործեն . և ասանկ՝ մայրը իր զաւակը հընազանդեցունելու կարող չըլլալուն համար շատ անդամ կըլլայ՝ որ անոր գերեզմանին վրայ լայ :

Իրաւ է որ ծնողքներուն պարտաւորութիւնն է իրենց զաւկըներուն խելքը պառկեցունել պատճառներ առաջ բերելով և ըսածներնուն հարկաւորութիւնը ցուցընելով : Աս բանը պէտք է ընել՝ որպէս զի անոնք վարժըլին , և բարոյական պարտաւորութիւնները սորվին : Բայց միշտ իշխանութիւն ոլէտք է բանեցունել՝ որ բաւական ըլլայ խորին հնազանդութիւն պատճառել՝ իրեն ըսված բանին պատճառը թէ իմացեր է տղան և թէ չէ : Ճշմարիտ է որ անհնար է կառավարել մէկ տղայ մը՝ միայն պատճառներ առաջ բերելով : Շատ գիպուածներ կըպատահին , որոնց մէջը տղան կարող չէ տեսնալ իրեն եղած հրամանին իրաւունքով ըլլա-

Ա : Եւ շատ անդամիր բաղձանքնեւ
 ըը անանկ դէմ կըկենան իր պարտաւ
 ւորութիւնը կատարելու , որ անոր
 իսէ լքը պառկեցունելու համար եղած
 բոլոր ջանքերը անօդուտ են : Ուրիշն
 առաջին ջանալու բանը քու զաւ
 ակդ կատարեալ հնագանդութեան
 տակ առնելն է : Առըվեցուր անոր թէ
 պարտի հնագանդիլ քեզի : Երբեմն
 պատճառներ իր առջել դիր , եր
 բեմն առանց պատճառ ցուցընելու
 հրաման ըրէ : Բայց նայէ որ աս բանը
 կատարեալ հասկընայ , թէ պար-
 տաւոր է միշտ բածիդ պէս ընել :
 Անութիւն ընել տաւր իրեն , որ քու
 կամքիդ ուրախ սրառվ ու ժամանակ
 չանցուցած պէտք է հնագանդիլ : Ի-
 հա աս է հնագանդութիւնը , ու ա-
 սիկա բացարձակապէս հարկաւոր է
 աղէկ ընտանեկան կառավարութեան
 մէջ : Վուանց ասոր քու տունդ միշտ
 աղաղակի և խառնակութեան տեսա-
 բան մը պիտի ըլլայ . զաւկընեքուդ

վարքը շնորիելու համար քաշած աշխատութիւնն է պարեթէ անտանելի բան մը պիտի ըլլայ , և կարելի է որ քու սիրող ոլիտի կոտրի իրենց տպառնի անառակութիւնովը կամ ապերախտութիւնովը :

Է . Գանեք հիմայ ան հարցմունքին , թէ ի՞նչողէս առ հնագանդութեան ունակութիւնը պիտի հաստատվի : Ասիկա այնչափ դժուարին բան մը չէ ինչողէս որ շատերը կըկարծեն : Ասիկա կարօտ չէ խորին իմաստութեան մը և գաղտնի հանձարի մը՝ որ քիչերը միայն կընան ձեռք բերել : Ո՞ւ կը կըդանաս ամենէն աղեկ կանոնաւութեալ ընտանիք մը : Երդեօք մեծատանց փառաւաւոր տուներուն մեջը մի : Երդեօք խիստ իմաստուն մարդոց զաւկըները մի լաւ օրինակ կընան ըլլալու ուրիշներն ալ իրենց նման ըլլալու : Հայտնի է թէ չէ : Ո՞իջակ աստիճանի ընակարաններուն ոմանց մեջը կարելի է թէ դեղեցիկ օրինակ

կըդըտնանք կանոնաւոր և տղէկ կարգադրեաւ ընտանիքներու : Եւ ասոր հակառակը , մեծատանց ու երևելի պիտնականներուն քնակութեանցը մէջ շատ անդամ կրտեսնանք անկիրթ և անդսպելի դառտկաց խումբ մը , որ ուրիշ քան չէ քայց քարբարոսական անկարգութեան տեսարան մը : Ու հարստութիւն և ոչ խորին իմաստութիւն հարկառորապէս կրպահանջրվի տղի մը հնազանդութիւն սորվեցունելու : Համար աս գործառնութեանս մէջ մեղի առաջնորդ ըլլակու սկըզբունքները խիստ պարզ ու յայտնի բաներ են :

Անհանուն բան իւ մէ հըստոյե՞՞ ո՞ մէտք չե՞ դնե՞ լւե՞ ը սոսդ խօսդ ողէուս է ո՞ իտուսը մէ՞ : Տղի մը անհնազանդութիւն սորվեցունելու ուրիշ զօրաւոր ճամբայ մը չի կայ , քան թէ անանեկ հրաման մը ընել որ միտք չունիս անիկա կատարել տալու : Մէկ տղայ մը ասանեկ սորվելովի իր մոյցը քանի տեղ չի դներ , և քիչ

Ժամանակին մէջը ան սովորութիւնը
անանել կը զօրանայ , ու տղին՝ մայրը չե
սեպելը անանել կը հաստատի , որ ոչ
աղաքանաց և ոչ սրդողելու ականջ
կը կախէ :

“Մարիամ , ատ զբքին ձեռք մի
զարներ” , կը սէ մէկ մայր մը իր փոք
րիկ աղջկանը , որ բարձին վրայէն
գիրքը քաշելու կը ջանակոր :

Մարիամ մէկ վայրկեանի չափ կը
կայնի , ու նորէն կը սկսի գիրքը քա
շել :

Չատ չանցած մայրը գլուխը կը
վերցունէ , ու կը տեսնայ որ Մարիամ
տակաւին զբքին հետ կը խաղակոր :
“Չի լեցի՞ր որ ըսի թէ ձեռք մի
դպցուներ զբքին , ինչու չես հնաղան
դիր” , կը սէ մայրը . ու նորէն իր գոր
ծին կը նայի :

Մարիամ մէկ վայրկեանի չափ ձեռ
քը կը քաշէ , բայց շուտ մը նորէն իր
արգելեալ զուարձութեանը կը դառ
նայ : Քիչ մը ժամանակէն գիրքը

բարձին վրայէն գետինը կեյնայ : Տե՛
ղէն կրցաթկէ մայրը ,ու արտորալով
բարկութեամբ մը կրգարնէ զաւկին
և կրսէ . « Տեսա՞ր մի հիմայ , մէյ-
մալ հնազանդ պիտի ըլլաս ինձի” :
Եղջեկը կրսկրսի լալ ,ու մայրը գեր-
քը գետնէն կրվերցունէ՝ լաելով .
« Կրգարմանամ թէ իմ զաւկըները
ինչո՞ւ աղէկ հնազանդութիւն չեն ը-
ներ ինձի” :

Ասիկա աղէկ ընտանեկան կառա-
վարութիւն մը չէ , բայց աս գիրքը
կարդացողներուն բոլորն ալ կընդունի
թէ խիստ հասալակօրէն գործածված
բան մըն է : Ուրեմն զարմա՞նք է , թէ
որ տղայ մը աս կերպովս կառավար-
վելով անհնազանդ ըլլայ . չէ : Իր մայ-
րը երօք անհնազանդութեան մէջ կը-
ձգէկոր անիկա , և կրսորվեցունէկոր
ականջ չի դնել իր հրամաններուն :
Կաև անյարմար պատիժը՝ որով եր-
բեմն տղայ մը կրպատճըվի գործած
յանցանքին համար , իր անհնազան-

դութեանը համար չի տրվիր , հապա
դիպուածական հետեւանքներուն հա-
մար : Ա ելք առաջ բերված դիպ-
ւածին մէջ՝ թէ որ գիրքը չիյնար ,
ան աղջկանը ըրած անհնատզանդութիւ-
նը առտնց սկատիժի զանց պիտի ըլ-
լրվէր : Քու տանդ կառավարութեա-
նը մէջ անփոփոխելի կանոն մը ըլլայ ,
թէ քու խօսքդ օրէնքի պէս պէտք է
պահվիլ :

Անգամ մը գեղը ձիով ժուռ գու-
լուս անձրենի մը ըսնըլեցայ , ու սրար-
տաւորեցայ որ սկարտիզպանի մը տուն
մտնամ պատսպարիմ , մինչեւ որ անձ-
րել անցնի : Ա եց հատ անկիրթ ու
անզուսպ տղաք սենեակին մէջը կը-
վազկըռտէին անտնկ աղմուկով և ա-
ղաղակով , որ հնար չէր խօսիլ հօ-
րելնուն հետը որ կըսկին դէմընըս-
տեր էր :

Ինչ և իցէ ելքոք ջանացի քանի
մը բան խօսիլ , հայրելնին բարձր

Ճայնով մը կանչեց . “ Տղաք , Ճայներ
նիդ կտրեցէք ” :

Տղաքը հօրերնուն խօսքին էվելի
ականջ չե դրին՝ որչափ որ անձրևին
Ճայնին : Շատ չանցած նորէն սառ
տիկ Ճայնով մը կանչեց . “ Տղաք ,
լուռ կեցէք , չէ նէ ձեզ կըծեծեմ .
աղէք զիտցէք որ ձեզ կըծեծեմ ” :
Աակայն տղաքը ասանկ սպառնալիք
ներու սորվածի պէս , կանչվը ըստեցին
ու կովեցան առանց կենալու :

Վերջապէս հայրերնին ըստ ին
ծի . “ Կարծեմ թէ զեղին մէջը
ամենէն գէշ զաւկըները իմիններ
էն . ամեննեին չեմ կընար խօսքս մտիկ
ընել տար իրենց ” :

Շիտակը կուզես նէ , տղաքը ամենէն
գէշ հայր մը ունէին զեղին մէջը :
Հուն ինքը շիփշիտակ անհնազանդու
թիւն կըսորմիւցունէրկոր անոնց : Են
նանկ հրամաններ կընէրկոր անոնց՝ որ
միտքը չէր դրեր թէ ըստ խօսքը
ովիտի կատարվի . ու տղաքը զիտէին

անանեկ ըլլալը : Քրդարեւ շատ անզ
գամաս բանս կըպատահի : Եւ մէկ
մայր մը որչափ որ թող կուտայ իր
հրամանը չի կատարվելու , այնչափ
ինքըզինքը զաւկըներուն քով պղտիկ
կըձգէ , և իրօք անհնազանդութեան
հրամաններ կըսորմվեցունեէ անոնց :

Եւ ի՞նչ դժուարութիւն կայ ու
րոշեալ հրամանի մը հնազանդեցու-
նելու մէկ տղան : Օրինակի աղագաւ ,
Վարիամին գլրին հետը խաղալուն
վրայ խօսինք : Հեղահողի և իմաստուն
մայր մը , պարզ ու հաստատուն կեր-
պով մը իր զաւկին կըսէ . “ Աղջիկս ,
ատ գլրին չի պիտի դպչի ” . աղջի-
կը քիչ մը կըտարակուսի , և զօրու-
ւոր փորձութենեն յաղթըվելով՝ նո-
րէն կըսկսի արդելեալ գլրին հետը
խաղալ : Վայրը տեսածին պէս տե-
ղէն կելսոյ , ու զաւկին ձեռքէն բըռ-
նելով մէկալ սենեակը կըտանի : Հոն
վտը կընատի , և հանդարտութեամբ
մը կըսէ . “ Վարիամ , ես քեզի ըսէ

որ զրբին չեղացիս , և ինծի հնա-
դանդութիւն չըրիր . շատ կըցաւիմ ,
ինչու որ հիմայ պարտաւոր եմքեղ
պատժել ” :

Մարիամ կըսկսի լալ , և խոստա-
նալ թէ «Ո՞էյմալ ասանկ չեմըներ” :
«Բայց Մարիամ , գուն հնազան-
դութիւն չըրիր ինծի , անոր համար
պատժըվիս պիտի” :

Մարիամ կըշարունակէ իր լացը .
բայց մայրը ծաներութեամբ և հան-
դարտ կերպով մը կըպատժէ իր աղ-
ջիկը : Եղէկ ծեծ մը կըզարնէ անոր ,
որուն ցաւը միտքէն չելլայ : Ետքը
կըսէ . «Մարիամ , շատ տրտմու-
թիւն կուտայ ինծի քեղ պատժելս .
բայց ես քեղ կըսիրեմ , և կուղեմոր
աղէկ աղջիկ ըլլաս” : Ասկից ետքը
գուցէ քանի մը ըոալէ ինքըզէնքին կը-
ձըզէ անիկա : Վիչ մը մինակու-
թիւնը խորունկ կըտպաւորէ իր ըն-
դունած վարժութիւնը :

Հինգ կամ տասը ըոալէէն ետև մայ-

Եթ կըդաւնայ Աշարիամը իր գիրկը
կառնէ ու կըսէ . “ Ծա՛ւակս , կըցա-
ւիս որ ինծի անհնազանդութիւն ը-
րեր” :

Գրեթէ ամէն տղայ առանկ դիսէ
ւածի մը մէջ պատասխան կուտայ ,
“ Հըամերես” :

“ Անկից ետքը պիտի նայի՞ս որ
մէյմալ անհնազանդութիւն չընես
ինծի” :

“ Հըամերես՝ մայյը” :

“ Անանկ է նէ Աշարիամ , ես պիտի
ներեմ յանցանքդ որչափ որ կընամ
նէ” . կըսէ մայյը : “ Բայց Աստուած
ալ սրդողեցաւ քեզի : Դուն ինչպէս
որ ինծի չի հնազանդեցար , Աստուածոյ
ալ չի հնազանդեցար : Կուզե՞ս որ
Աստուածմէ ներում խնդրեմ քու յան-
ցանքիդ” :

“ Հըամերես՝ կուզեմ” , պատաս-
խան կուտայ աղջիկը :

Անատենը մայյը իր աղջկանը
հետ մէկտեղ ծունկի վրայ կուզայ ,

ու պարզ աղօթք մը կրպուցէ , որ
Վատուած իր աղջկանը մեղքը ներէ ,
ու նորէն խաղաղութիւն և ուրախու-
թիւն տայ անոր : Ետքը կառնէ դուրս
կրբերէ գտունուկ մը դարձած ու հը-
նազանդած : Խրիկվան աղջիկը քնա-
նալու որ պիտի երթայ՝ անուշութեամբ
և սիրով մը նորէն միտքը կըծդէ ը-
րած անհնաղանդութիւնը , և խրատ
կուտայ որ անզամ մըն ալ Վատուծմէ-
թողութիւն խնդրէ իր գործած մեղքին
համար : Վարիամտղայական պար-
զութեամբ իր ըրածը Վատուծոյ առ-
ջեր կըխոստովանի , և կաղաչէ որ
ներէ իրեն , և պահպանէ զինքը բո-
լոր գիշերը :

Վատուլանց երբոր աս աղջիկը ար-
թըննայ , չե ոլիտի՞ իր տղայական սէ-
րը յօժարութիւնը իր մօրը վրայ էվե-
լօք պինտ հաստատված ըլլայ , առջե-
օրվան ընդունած վարժութեանը պատ-
ճառաւ : Երբոր սենեակին մշջը խա-
ղալ սկըսի՞ հաւանակա՞ն է թէ սոր

ված դասը մոռնայ, և նորէն իր ձեռ
քը արգելեալ բանի մը դպցունէ :

Գիտեմ՝ կան մայրեր որ կըսեն թէ
այնչափ ժամանակ չունին իրենց զառ
կըներուն վարժութեանը ետևէն ըլլ
լալու : Բայց պէտք է զիտնալ՝ որ
մէկ բարեկարդ տան մը կառավարու
թիւնը ո՞րչափ ժամանակի կարօտ է
նէ, անբարեկարդ տան մը կառավա
րութիւնը անոր երեքին չափ ժամա
նակ կուղէ : Ճամանակը չե կորսըն
ցունելու մէկ հատիկ ճամբան, քու
տանդ կառավարութիւնը հաւատար
մութեամբ կատարելն է : Ի՞նչպէս
կընաս տանիւ երբոր քու զավկընե
րը իրենց շարունակ անհնագանդու
թեամբը խելքդ զլխէդ կրտանին,
ու քեզ անհանգիստ կընեն : Կընաս
ժամանակդ ծախել, երբոր յամառ
զաւկըներդ իրենց շարութիւնովը ա
մէն ըոալէ ցիրուցա՞ն ընեն քու միտքդ
որ հարկաւոր գործի մը մէջ կաշխատ
ցունեսկոլի :

Կայէ ան ծնողքին վրայ՝ որ զաւկը
ները չոլս կողմը պատեր են, որոնք
սոլոված են ուղածնին ընելու : Դիւ-
ցուք թէ մայրերնին խիստ դժապեալ
է մէկ հանդերձի մը վրայ, որ հարկա-
ւոր է շուտով կարել լըմբնցունել :
Վմէն բոալէ աչքը պիտի վերցունէ իր
գործէն, ու նայի թէ ինչ կընենկոր
տղաքը : Ասմուելը բարձերուն վրայ
կելսակոր . Վննան ունելիքով կրակը
կըտարութնէկոր . Յոհաննէսը հօրը
ծխպամորջը ձի է ըրեր սենեակին մէ-
ջը կըցաթկուտէկոր : Ոօրիքնուն ա-
կանջները տղոցը ըրած ձայնէն գրե-
թէ խունալով, կըզարմանայ թէ իր
զաւկըները ինչու ուրիշներուն զաւկը-
ներէն էվել անառակ են :

“Վննա, ունելիքը վա՛լ դիր” :
կըկանչէ մայրը : Վննան քիչ մը մէկ
դի կերթայ կրակին քովէն, ու Յո-
հաննէսին ետեէն քշելով սենեակին
չորս դին անիկա կըզարձունէ, ու նո-

ըէն կըղառնայ իր չարութիւնը գործէլու :

“Յոհաննէս , ծխաղամորջը տեղը դիր” . կըկանչէ մայրը : Յոհաննէս ամենելին մտիկ չընէր :

Մայրը տեսնալով որ ի՞նչպէս կարուցետը կըմաշեցունէ , ու ծխաղամորջը կըծուէկոր , տեղէն կըցաթկէ տղան մէյմը կըկոթվէլէ ծխաղամորջը ձեռքէն կառնէ ու իր տեղը կըդնէ , ու տեղը կընատի թէ չէ իր գործին պարապելու , Յոհաննէս մանածին կանգունին վրայ հեծած իր ճամբարութիւնը կըսկսի ընել՝ սուրհանդակի պէս վագելով :

Չեմկամիր աս տեսարանը երկան բարակ ստորագրէլ . ամեն մարդ զիւտէ որ ըսածս չափազանց չէ . ասանկ տեսարաններ շատ անդամ կըպատահին : Հազարաւոր անմահ հողիներ աս կերպ աղմուկի ապստամբութեան և աղաղակի մէջ կըմեծնան , որ է իրենց ընդունած վարժութիւնը թէ աս աշ-

խարհիս և թէ հանդերձեալ աշխարհին համար : Հիմայ աս մայրը պիտի ըսէ քեզի թէ , “ Ժամանակ չունիմ զաւկըներս վարժելու ” : Ծայց ընդհակառակը թէ որ զաւկըներուն ամէն մէկին վրայ հաւատարմութեամբ իր պարտքը կատարած ըլլար , ինքը զնակը անհամար աշխատութիւններէ և ժամանակ կորսընցունելէ պիտի խալուէր :

Օրինակի աղագաւ , ըսենք թէ մէկ ուրիշ մայր մը նոյն հարկաւոր գործը ունի իր ձեռքը լրմընցունելու : Աս մայրը իր զաւկըներուն սորվեցուց յօժար սրտով և կատարեալ հնականդութիւն մը ընել իր ըսածներուն : Իր տղոցը իրեքին ձեռքը քանի մը հատ փատի կտորներ կուտայ՝ ու կըսէ . “ Կացէք սա անկիւնը նատեցէք ու խաղացէք տուն մը շինելով : Ծայց ձաներնիդ բարձր չի հանեք որ գործես ետ չի մնամ , ինչու որ պիտի լրմընցունեմ անիկա ” : Ո՞ւ

կաւ իրեքը սենեալինն միւս անկիւնը
 կըդնէ , թուղթերնին ու կապար գը-
 րիչնին ձեռքերնին կուտայ ու կըսէ .
 “ Աստէք խաղացէք , պատկեր գրե-
 ցէք ” : Տղաքը ասանկ բարեկարգ կա-
 ռավարութիւններու մէջ մեծած ըլ-
 լալով , հանգարտ և ուրախ կընատին
 իրենց հրամայվածը կընեն զուցէ իրեք
 քառորդի չափ : Վայրերնին առանց
 խափանելու իր զործը կ'յառաջոցու-
 նէ . երբեմն աչքը կըվերցունէ և ա-
 նուշ խօսք մը կըզըռուցէ դաւկըներուն
 սիրտ տալու համար՝ երբեմն անկիւ-
 նին մէջը շինած խրճիթին վրայնա-
 յելով , և երբեմն մէկալներուն քա-
 շած պատկերներուն . աս կերպով
 ցուցընելով իր զաւկըներուն՝ թէ իր
 կամքը անոնց հետը մէկ է , և իրենց
 վայելքութիւնովը կուրախանակոր :
 Տղաքը զոհ են և ուրախ , մայրերնին
 ալ հանգիստ :

Չի ձգեր որ նոյն խաղովը երկան
 ժամանակ անցունին , մինչև որ ան-

կից ձանձրանան . հապա գուցէ իրեք
քառորդի չափ խաղալէն ետքը՝ կըսէ .
“Եկէք տղաք , հերիք է այդչափ խա-
ղալը . ժողվեցէք ձեր փատերը՝ ու
պահանոցը զլէք” :

“Ո՛չ , մայր իմ , հրաման տուր՝ որ
քիչ մըն ալ խաղամ . սեպէ թէ լը-
մընցաւ տունս” կըսէ Վարիամ :

“Չա՛տ աղէկ լըմընցուր անիկա ,
կըսէ իմաստուն և անուշ մարը . բայց
լըմընցածին պէս ըսէ ինծի” :

Քանի մը ըսպէէն մարիամ կըսէ .
“Ե՛հա՛ , մայր իմ , նայէ ի՞նչ մեծ
տուն մը շինեցի” : Վայրը կընայի
և կըդովէ աղջկանը վարպետութիւ-
նը անոր սիրու տալու համար , ու ետ-
քը կըսէ որ փատերը ժողվէն իրենց
տեղը զնեն : Ետքը մեկաներուն կը-
սէ որ թուղթերնին ու գրիչնին իրենց
տեղը զնեն , որ հետեւեալ օրը պէտք
եղած ատենը ժամանակ չի կորսըն-
ցունեն անոնք փինտըռելու :

Հիմայ՝ որ մայրը շատ ժամանակ

ունի . և ո՞ր մայրը երջանիկ ժամանակ մը ունի : Ասկէց՝ ի դատ՝ ո՞ր մայրը եր դաւկըներուն ապառնի վարքին և որպիսութեանը մէջ էվել * մշիթարութիւն սիխու դանայ :

Կարելի՞ է ոմանք ըսեն թէ , Վտիկա աղէկ տեսարան մըն է որ ստորագրէց իր , բայց ո՞ւր փնտըռենք դանանք ատիկա իրօք : Իրա՛ւ է թէ ասանկ տես սարաններ շատ քիչ կըստատչին . բայց ամեննեին հեռու է ճշմարտութենէ թէ որ ըսենք թէ բնաւ չեն պատահիր : Ըստ ընտանիքներ կան ասանկ , երջանիկ ծնողքներով և խանդակավ դաւկըներով : Եւ աս ընտանիքները միայն հարուստներուն և զիտուններուն տունը չեն : Վսանկ ընտանիք մը ունենալու ո՞չ հարստութիւն և ո՞չ չափազանց զիտութիւն ալէտք է : Կառավարութեան կերպը պարզ ու յայտնի է . սկը ելու է կատարեալ հնազանդութիւն մը սորվեցունելով ամեն մէկ հրամանի : Վն առաջին սոր-

վելու նիւթը հաստատելու է թէ մէկ
տղայ մը իր մօրը խօսքը ամենեւին զանց
չի պիտի ընէ : Երդարեւ ամէն խոհեմ
մայր պէտք է ջանայ իր զաւկըներուն
օրինաւոր կերպով եղած բաղձանքը
կատարելու . պէտք է սորվի թէ ինչ
պէս ուրախ ընելու է անոնք . բայց
ընաւ պէտքը չէ թող տալ որ իրենք
իրենց բաղձանքները կատարեն , իր
կամքին դէմ :

Ասիկա բացայայտ ցուցընելու հա-
մար , օրինակ քերենք ան տղաքը՝ որ
փատի կտորներով կըխաղայինկոր :
Վայրը տղոցը կըաէ որ փատերը ժող-
վեն տեղը դնեն : Վարիամ հրաման
կուգէ քիչ մըն ալ խաղալու մինչեւ
ոք շինած տունը լըմընցունէ : Վայրը
ուզելով որ իր զաւկըները կըցածին
չափ ուրախ ընէ , աս օրինաւոր խըն-
դիրքը կըկատարէ : Տեսա՞ր մի խոհե-
մութեամբ թոյլտուութիւն ընելը :
Բայց դիցուք թէ տղաքը մօրելնուն ա-
կանջ չի դնելով իրենց խաղին նայե-
7 ե

ցան։ Դիցուք թէ խորհեցան որ շենած
տուներնին մօտ է լրմըննալու, միայն
քիչ մը ժամանակ իրենց զուարձու
թիւնը շարունակեն մինչև որ լրմըն
նայ։ Եհա՛ ասիկա յայտնի անհնազան
դութեան գործ մըն է։ Տղաքը մօրեր
նուն հրամանին հետեւելնուն տեղը իւ
րենց կամքին կըհետեւինկոր։ Խոհեմ
մայր մը ասանկ մէկ գործ մը զանց չը
ներ՝ կամառանց պատիժի չանցուներ։
Կարելի է թէ դիպուածին պարագա
ներուն նայելով կընայ խորհիւլ, որ
յանդիմանութիւն մըն ալ բաւական
կըլայ։ Առկայն ետ չի պիտի մնայ ան
պատեհութիւնը ձեռք առնելէն, որ
ինչեիցէ կերպով անոնց մտացը մէջը
հնազանդութեան դաս մը կըտպա
ւորէ։

Արդեօք պիտի ըսվի՞ թէ ասանկ
պղտիկ բաները տեսնալով՝ մէկ մայր
մը իր զաւկին վրայ միշտ յանցանք
պիտի գտնայ։ Բայց մէկ տղի մը իր
մօրը հրամաններուն հնազանդ ըլլաւ-

լը պղտիկ բան չէ : Այս ական իշխան
 նութիւնը բանի տեղ չի դնելուն աս
 մէկ գործը մէկ ուրիշի մը ճամբայ կր-
 բանայ : Ենչնազանդութիւնը առջե-
 անգամին որ իր երեսը կրցուցընէ
 պէտք է պատիժով սանձահարել :
 Ենտարակոյս կան դիպուածներ ման-
 տրրուիկ սխալմունքներու , որոնք խո-
 հեմ ծնողքը պիտի դատէ թէ զանց
 ընել պէտք է : Վանտրտիկ տղաքը
 անխորհուրդ և անդպոյշ կրլան : Եր-
 բեմն կրլայ որ աւանց դիտաւորու-
 թեան կրսխալին : Եսանկ դիպուած-
 ներու մէջ դատողութիւն պէտք է ,
 որ կարող ըլլաս որոշել՝ թէ ո՞ր բա-
 նը զանց ընել պէտք է : Աակայն ա-
 ղէկ պարտինք գիտնալ՝ որ բաց ու
 յայտնի անչնազանդութիւնը՝ ի՞նչ
 դիպուածի մէջ կրլայ թող ըլլայ ,
 մանտրտիկ սխալմունքներուն կարգը
 դրվելու չէ : Վայն մէկ խնձոր մը ու-
 տելը՝ մեր նախահարքը դրախտէն
 դուրս աքսորեց : Յանցանքին մէ-

ծութիւնը Աստուածային հրամանին
 անհնագանդութիւն ընելնուն վրայ էր :
 Արդ՝ ամէն մայր կարողութիւն ու
 նի կամաւոր հնագանդութիւն մը ըն-
 դունելու, թէ որ կըսկըսի սորմեցու-
 նել իր զաւկըներուն երբոք պղտիկ
 էն անոնք : Ան ժամանակը անոնք բո-
 լորսվեն իր ձեռքն են : Տուր անոնց
 վայելչութիւնները իր կարգադրու-
 թիւնովը պիտի ըլլան : Աստուած կա-
 տարեալ կարողութիւն տըւաւ անոր,
 որ ինքը ուղածին պէս կառավարէ ու
 առաջնորդէ անոնց : Ա երը դրված օ-
 րինակներովը ջանացինք ցուցընել
 թէ կառավարութեան գլխաւոր սկըզ-
 բունքը, Առնորդ հրաման հը իւնես, առանց
 ես մնալու անինիս կատարելուուր : Աստուած
 ամէն մօր աս կարողութիւնը տըւաւ .
 ինքը քու ձեռքդ յանձնեց անօդնա-
 կան տղէկ մը, որ բոլորովին քեզմէ
 կախված է . անանկ որ եթէ չի հնա-
 զանդի քեզի, ուրիշ բան չունիս ընե-
 լու, բայց թէ անոր վայելչութեանը

աղբուրները ցամքեցունել , կամ ա
 նիկա պատժել մարմինը ցաւցընելով
 այնպէս հաստատուն կերպով և այն
 չափ անդամ , մինչև որ անհնազան
 դութիւնը ու պատիժը տղին մոտացը
 մէջ անքակտելի կապված մնան : Ես
 տուած արդէն աս կարողութիւնը ծը
 նողըներուն տըւաւ , և ասկից էվել
 ինչ կարողութիւն կընայ ուղել մէկ
 ծնողք մը : Եւ թէ որ մենք ետ կենանք
 և աս կարողութիւնը չի բանեցունենք
 ինչ բանի համար որ մեղի տրվեր է ,
 յանցանքը մերն է . և անկից առաջ
 եկած հետեւանքը մեր վրայ և զաւկը¹
 ներնուս վրայ պիտի հանգչի : Օտաւ
 կաց կրթութեան գործը շատ անգամ
 ծնողքին սիրու կըցաւցընէ . բայց թէ
 որ հիմայ քու պարտաւորութիւնդ
 կատարելու կրդողաս , դուն քեզ կը
 պատրաստես ան ցաւելուն , որ անհը²
 նազանդ զաւկըները իրենցմէ ետքը
 կըձգեն : Թէ որ չես կընար միտքդ ու
 բոշել հարկաւոք եղած ատենը զաւաւ

կըդ իր վայելչութենէն զրկել և
 պատժել անիկա , ուրեմն գիտցիր որ
 կոտրած սիրտ մը ու տրտմալի ծերու-
 թիմ մը պիտի ըլլայ քու վարձքդ :
 Եւ երբոր քու անառակ որդւոցդ և ա-
 պերախտ աղջիկներուդ վրայ նայիս ,
 պիտի յիշես որ ատենօք կրնայիր խա-
 փանել անոնց չար յօժարութիւննե-
 րը : Ու որ ժամանակաւոր հանգը-
 տութիւնը զաւկըներուդ երջանկու-
 թենէն ու քու անձիդ յաւիտենական
 երջանկութենէն էվել կըսիրես , ալ
 զանգատ մընէր , որովհետև դուն քու
 կամօքդ ընտրեցիր աս վեճակը : Եւ
 երբոր դուն զաւկըներուդ հետը Աս-
 տուծոյ ատեանը կայնիս , ու անոնք
 քեզ ցուցընեն ըսելով , “ Քու պար-
 տաւորութիւնդ զանց ընելդ էր՝ որ
 մեզ երկինքէն վրուընտեց և անվախ-
 ճան վայերուն մատեեց ” , անառենը
 ինչ պիտի զգաս նէ լեզու չե կրնար
 պատմել : Ա՛Յ , սոսկալի բան է որ
 մեկ մայր մը իր պարտքը բանի տեղ

չի սեպէ : Հանդերձեալ աշխարհին
յաւիտենական վիճակները քու ձեռւ
քըդ հաւտացվեր են : Ինչ ներզոր
ծութիւն որ կըտպաւորեսկոր հիմայ ,
անիկա պիտի առաջ երթայ . ո՞չ գե-
րեզմանը և ո՞չ դատաստանը անիկա
պիտի արգիլեն , այլ պիտի առաջ եր-
թայ ան դարերուն մէջը , որոնք վերջ
ու վախճան չունին : Երանի թէ ըս-
տուած քեզ և քու դաւկըներդ ասանկ
սոսկալի դիպուածէ մը ետ պահէ :

ԳԼՈՒԽ. Գ:

Դաստիարակութեան իշխանութեանը
կըայ :

♦ Նաղանդութեան վրայով քանի մը
հարկաւոր զիտելիքներ ալ կան :
Կախ . Պէտք է զիտնալ որ տղայոց
բնաւորութեանը մէջ մեծ տարբերու-
թիւն մը կայ : Ոմանք շատ դիւրադ

գած են, և անուշութիւնով դիւրին
 կըկառավարվին . ուրիշները բնա-
 կանաբար խօսքի չի պառկող և կա-
 մակոր են : Երբեմն տղի մը կիրքը կը-
 բորբոքի, ու միտքը կըհաստատէ այս
 ինչ բանը ընել, և խիստ ծանր աշ-
 խատութիւն մը պէտք է անիկա զրո-
 պելու : Վրեթէ ամէն մօր գլուխէն
 անցած է ասանկ դժուարութիւններ ,
 և գիտէ որ իր զաւկին աղէկի կամգէ-
 շի դառնալը ան նոյն կէտին վրայ կը-
 կայանայ : Տեհէ որ տղան անատենը
 յաղթութիւնը ստանայ նէ , գրեթէ
 անհնար կըլլայ մօրը՝ որ իր իշխանու-
 թիւնը նորէն ստանայ : Տղան կըզգայ
 որ ինքը յաղթող է , և մայրը յաղ-
 թըլած . և խիստ մեծ դժուարութիւ-
 նով կըբւնադատվի իր կամակորու-
 թիւնը մէկդի ձգել : Ծնդ հակառա-
 կը՝ թէ որ մայրը կըյաղթէ , ու տղան
 կըզսպըլի , կիմանայ թէ վիճաբանու-
 թիւնը լըմընցած է . և նորէն չի պիտի
 համարձակի հակառակի անանկ մէ-

կուն դեմք որ ինքը պիտի մեծ ըլլալը
ցուցուց : Աս ասանկ սաստիկ ու եր-
կար վիճաբանութիւններ տեսայ ,
որ անտանելի ցաւ կըպատճառեն մէկ
ծնողքի մը սրտին . բայց անդամ մը
ասանկ վիճաբանութիւններու սկըսվի
նէ , ալ մայրը անոնք ձգելու չէ մին-
չև որ տղան զապըվի : Եմենեին ապա-
հով ճանապարհ մը չէ ան որ ծնող-
քը վաղ դայ ու յաղթըված մէկղի
կենայ :

Աս տեղս օրինակ մը բերենք աս
կերպը վիճաբանութեան մը վրայ , որ
քանի մը տարի առաջ պատահեցաւ :
Պարոն մը մէկ իրիկուն մը կրակին
քովը նստած իր ընտանիքն ալ իր բո-
լորտիքը , շեգարանը ձեռքն առաւ
ու իր տղոցը մէկը կանչեց որ դայ ու
կարդայ : Տղան որուն անունը Հոհան-
նէս էր , զրեթէ չորս տարեկան էր .
Եյբուբենը ծարէ՝ ի ծար կատարեալ
գիտեր , բայց ան միջոցին խեռու-
թիւնը բռնեց՝ ու ամենեին չուղեց որ

Եր հօրը բաղձանքը լեցունէ . խիստ
ակամայ կամքով մը հօրը քովը եկաւ
ինչպէս որ հրամայված էր իրեն , բայց
երբոր հայրը իր չախուին ծարովը
Այբուբենին առջի դիրը ցուցուց
և ըստ , “Աս ի՞նչ գիր է , Յօհանն
նէս” . պատասխան մը չի կրցաւ առեր
էր տղին : Յօհաննէս ժանիքը կախած
ու լուս գրքին վրայ կընայէր :

“Տըղաս , դուն Ա գիրը կըճանչ
նաս” . ըստ իր հայրը անուշու-
թեամբ :

“Չեմկընար ըսել Ա” . ըստ Յօ-
հաննէս :

“Պիտի ըսես” ըստ հայրը , ծանր
ու հրամայական ձայնով մը . “Աս
ի՞նչ գիր է” :

Յօհաննէս պատասխան չի տրւաւ :
Ահա աս տեղս սկսեց վիճաբանութիւ-
նը : Տղան յամառ լմութեան տէր
էր , ու միտքը դրեր էր թէ չի պիտի
կարդայ : Հայրը գիտեր որ տղին կոր-
ծանմանը պատճառ պիտի ըլլար՝ թէ

որ թող տար անոր՝ որ իրեն յաղթէ :
 Զգաց իմացաւ որ պարտի հարկաւու-
 րապէս իր տղան հնազանդութեան
 տակ առնել : Ուստի ձեռքէն ըունեց
 մէկալ սենեակը տարաւ ու պատժեց
 անիկա : Ետքը նորէն դարձաւ ու նո-
 րէն ցուցուց գիրը Հոհաննէսին :
 Իայց Հոհաննէս աս անգամին ալ գի-
 րին անունը չի զըուցեց : Հայրը երկ-
 լորդ անգամ տարաւ տղան միւս սե-
 նեակը, ու առջինէն ծանրը կեկ պատիժ
 մըն ալ տըւաւ անոր : Իայց անօդուտ
 էր, պինտ գլուխ տղան գիրին անունը
 չի զըուցեց . ու երբոր իրեն ըսվեցաւ
 թէ Ա. է, պատասխան տըւաւ թէ,
 “Ես Ա. չեմ կրնար ըսել” : Եբբորդ
 անգամ հայրը պատժեց տղան՝ այնչափ
 սաստիկ՝ որչափ որ համարձակեցաւ .
 բայց տղան թէպէտ և մեծ խուվու-
 թեան մէջ էր ու կրդողար, տակաւին
 իր բոլոր ուժովը դէմ կեցաւ հօրը
 կամքին զիջանելու : Հայրը մեծ նե-
 ղութեան մէջ էր և շատ ղղջաց որ

ասանկ վէճ մը ծագեցաւ իրենց մէջը :
 Երդէն իր տղան անանկ սաստկու-
 թեամբ պատժեր էր՝ որ անկից էվել
 պատժելու չէր համարձակեր : Առ-
 կայն կամակոր տղան իր առջելը կայ-
 ներ կըհեկեկար ու կըդողար, բայց
 կերևար որ քարի նման է ու չի պիտի
 հօրը կամքին զիջանի : Շատ անդամ
 ինձի պատմեց ան ծնողը՝ ան լուղէին
 իր սրտին մէջի զգացած սաստիկ ցու-
 ւը : Խը սիրտը արունի մէջ էր որ
 պարտաւորեցաւ պատժել իր որդին ։
 Բայց զիտէր որ ան կէտին պիտի ո-
 րոշվի՝ թէ ով որու տէր պիտի ըլլայ ։
 Եւ տղան այս չափ դէմ կէնալէն ետե՞
 հայրը մեծապէս կըվախնար որ չի պի-
 տի կընայ յաղթել տղին : Վայրը
 քովը նատեր էր, ու հարկաւ խիստ
 սաստիկ ցաւի մէջ էր, բայց կատա-
 րեալ զիտէր թէ իրենց պարտաւո-
 թիւնն է տղան հնագանդեցունել, և
 թէ ասանկ վորձութեան առենը իր
 մայրական զգացումնելը պէտք էր մէկ

Դիւ զնել , և խոհեմութիւնը ձեռք
առնելով իր ընկերոջը ըրած բանին
չե խառնըվիլ : Կոտրած սրտով մը
հայրը նորէն իր տղին ձեռքը բանեց
սենեակէն դուրս տանելու և մէ յիմալ
պատժէլու համար : Բայց ի՞նչ ու
բախութիւն զգաց , երբոր տղան պա-
տիժէն սարսափելով և ալ ճար չու-
նենալով անոր զիմանալու , կանչեց .
“Նըսեմ զիրը , հայր իմ , կըսեմ զի-
րը” : Հայրը անիմանալի ուրախու-
թեամբ զիրքը ձեռքը առաւ ու ցու-
ցուց զիրը :

Ա . ըստ Յոհաննէս , որոշակի ու
լեցուն ճայնով :

“Աա ի՞նչ զիր է” , հարցուց հայրը
երկըրդ զիրը ցուցընելով :

Բ . ըստ Յոհաննէս :

“Աէկալը ի՞նչ է” :

Գ . շարունակեց տղան :

“Աա ի՞նչ է” նորէն ցուցընելով ա-
ռաջին զիրը :

Ա . ըստ տղան որ ալ հիմայ իր
հօրը յաղթըվեր էր :

“Հիմայ զիրքը մօրդ տար , ու անոր
ալ ըսէ թէ ի՞նչ է ան զիրը” :

Յօհաննէս զիրքը մօրը տարաւ , և
մայրը հարցուց ըսելով .

“Աս ի՞նչ զիր է , տըղաս” :

Ա . ըսաւ Յօհաննէս : Յայսնա-
պէս՝ կատարեալ հնագանդութեան
տակ մտեր էր տղան : Ո՞նացած ար-
դաքները հոն նստեր էին ու տեսան ե-
ղած բանը , և իմացան թէ ոլորն քով
մնաց յաղթութիւնը : Յօհաննէս ալ
համար մը սորվեցաւ , որ բնաւ միտ-
քէն չելաւ . այսինքն թէ իր հօրը
բազուկին դէմ զնելը իր կարողութե-
նէն վեր է : Ոորվեցաւ որ իրեն հետը
հաւասար չեղողին հետը մէյմալ
պատերազմի չելայ : Ոորվեցաւ որ
հնագանդութիւնը ամենէն ապահով-
ե երջանիկ ձամբայ մըն է իրեն :

Բայց կարելի է որ ոմանք ըսեն թէ ,
անգթութիւն էր ասանկ սաստիկ պա-
տիժ տալ տղին : Ենգթութիւն . ողոր-

մութիւն և սէր է : Խրա՛ւ անդթութիւն
 պիտի ըլլար , թէ որ հայրը ան կէտին
 հաւատարմութիւն չի պահէր , ու
 սոսկար իր ցաւալի պարտաւորութիւ-
 նը կատարելէն : Ե՞ն տղին կիրքէրը՝
 որ հայրը անատենը իր անձը այնչափ
 նեղութեան մէջ ձգելով կը ջանարկոր
 զսպել , թէ որ առանց զսպըվելու
 մնային , խիստ կարելի է որ իրենց տէ-
 րոջը գլխուն անէծք պիտի ըլլային .
 և տղան ալ իր բարեկամներուն գըլ-
 խուն անէծք մը պիտի ընէին : Ե՞ն հը-
 նարին բան չէ , թէ աս տղին յաւի-
 տենական վիճակը ան նոյն կէտին հօրը
 ըրած յաղթութենէն կախված էր :
 Խիստ հաւանական է թէ ան տղան ե-
 թէ յաղթէր անատենը , բոլոր ետքի
 ջանքելը անիկա զսպելու համար՝ ա-
 նօդուտ պիտի ըլլային . կարելի է թէ
 բոլոր սանձերը պիտի կոտըտէր ,
 կեանքին մէջը թշուաւական պիտի
 ըլլար , ու մեռնելէն ետքը յաւիտեան
 պիտի կորաըվէր : Ո՞վ ասէկա անդը-

թութիւն կրկոչէ . Վատուած պահէ
տղաքը ան ծնողքներուն անօրէն զթու-
թենէն , որ ասանկ բարեբարութիւնը
անդթութեան տեղ կրդնեն :

Հատ աղէկ է միշտ թէ որ կարե-
լի է , ասանկ դիսլուածներէն զգուշա-
նու : Հատ տղաք կատարեալ հնա-
դանդութիւն սորված էն , առանց ի-
րենց ծնողածը հետ ասանկ վիճարա-
նութեան մէջ բնաւ մտնալու : Եւ
ճշմարտապէս եվելօք ընտրելի է սո-
վորական վարժութեան անուշ կեր-
պովը կառավարել տղայ մը , քան թէ
ասանկ վնասակար հակառակութեան
մը մէջ կյնալ , ուր հարկաւոր է չա-
փաղանց խստութիւն բանեցունել
ըւստի իմաստութիւնը կըսորվեցունէ
մեղի զգուշանալ որ չըլայ թէ պատե-
հութիւն տանք տղի մը բոլոր իր զօրու-
թիւնը հաւքելով անհնաղանդ զըտ-
նըվելու ջանալ : Վս զօրաւոր ապլրո-
տամբութիւնը միայն քանի մը մասնա-
ւոր դիպուածներէն կըպատճառի :

Քիչ մը նախատեսութիւն ընելով
կրնանք կալողանալ աս ապստամբու-
թիւնը զեջուցանել՝ որ նո՞ր սկըսելու
վրայ է, երբոր ան մասնաւոր դիպ-
ւածներուն մէկը պատահի նէ :

Օրինակի աղագաւ, դիցուք թէ
Յակոբ և Մարիամիրիկունը իրարու-
հետ կըխաղանկոր, ու Յակոբ որդո-
ղելով իր քրոջը կըզարնէ : Մսիկա ը-
րաւ առանց Մարիամ զինքը բարկա-
ցունելու, և պէտք է որ պատժը վիճ-
և իր քրոջմէն ներում խնդրէ : Տայց
մայրը դիտեց որ ան օրը մինչեւ իրի-
կուն Յակոբ խիստ անհաճոյ բնաւո-
րութիւն մը ունեցաւ . բոլոր օրը ժա-
նիքը կախած էր ու խօսքի չի պառ-
կեցաւ : Կընայի որ հիմայ ալ բար-
կութիւնը բորբոքեցաւ : Մմէն ծնողք
գիտէ որ տղայոց բնաւորութեանը մէջ
ասանկ փոփոխութիւնները հասարակ
բաներ են : Տղայ մը ասօր ամէնուն հա-
ճելի է և քաղցրաբարոյ : Ա աղը կերե-
ւայ թէ ամէն բան հակառակ կերթա-

կոր . պղտի բաները զի՞նքը կընեղացու-
 նեն , և բոլոր բնաւորութիւնը կար-
 ծես թէ դառնութեան փոխվեր է :
 Այսյը կիմանայ որ հիմայ իր տղին
 միտքը աս վիճակին մէջն է : Հան-
 ցանք էր ըրածը , և արժան է որ իր
 քրոջմէն ներում խնդրէ : Տայց գիտէ
 որ անշուշտ անոր մտացը դէմ պիտի
 ըլլայ աս բոլբոքեալ և անախորժ վի-
 ճակին մէջը իրեն հնաղանդիլ : Օձէ-
 պէտ և առանց պատճառի բարկա-
 ցաւ , բայց խիստ դժուարին զործ մը
 պիտի ըլլայ իրեն պղտիկ իյնալ՝ և իր
 քրոջմէն ներում խնդրել : Օձէ որ
 մայսը հըաման ընէ իրեն՝ ասանկ ը-
 նել , անոր խօսքին դէմ դնելու փոր-
 ձութիւնը անանկ զօրաւոր է՝ որ
 խիստ հաւանական է թէ չի պիտի հը-
 նաղանդի : Անանկ է նէ պէտք է պատ-
 ժել անիկա . ու ահա հոս տեղս կըս-
 կըսի վիճաբանութիւնը , որ անդամ
 մը սկսելէն ետև պէտք է մօրը չի ձը-
 գել անիկա , մինչեւ որ տղան հնա-

զանդի : Հիմայ առ վեճաբանութենէն
 ի՞նչպէս ետ կենալու է : Յանցանքը
 զանց ընելով , չէ չէ : Այսը կել-
 լայ հակոբին ձեռքէն կը բռնէ ու կը-
 սէ . “Տըղաս , դուն մեծ յանցանք
 գործեցիր . անզգամութիւն ըրիր . և
 պէտք չէ որ մեր քովը կենաս , քեզ
 պառկելու պիտի տանիմ” : Եսանկ
 անիկա իր անկողինին եղած տեղը
 կը տանի , և պառկեցունելու ատենը
 անուշութեամբ բայց տրոմալի ձայ-
 նով մը կը անոր . “Տըղաս , ինչ-
 պէս անհաջո էր ըրած բանդ , և Ես
 տուած որչափ չի հաջիր քու վար-
 քիդ” : Եմէն օրվան սովորութեանը
 պէս տղին բաել կուտայ աղօթքը ,
 կամթէ քովը ծունկ չոքելով կաղօ-
 թէ որ Եստուած անոր գործած մեղ-
 քին ներէ : Ետքը կը պառկեցունէ ան-
 ու կըդառնայ իր տեղը , ձգելով անի-
 կա ինքնիրենը մտածելու և քնանալու :
 Ես կերպովս տղան իր յանցանքին հա-
 մար ոլատժը լիցաւ : Իր անկողինին

մէջը պառկած կըլսէ որ իր եղքայր-
ները և քուրերը կըխաղան ու կըխըն-
դանկոր դուրսը . կըհասկընայ թէ ո՛ր-
չափ խելացութիւն և ո՛րչափ աղէկ է
աղէկ տղայ ըլլալը : Եռտրվանց կար-
թըննայ : Գիշերը գաղբեցուց իր
բարկութեան կիրքերը : Աըմումտու
թէ իր էրեկվան դէշ վարքը ի՞նչպէս
ապերջանիկ ըրաւ զինքը . և միտքը
կըդնէ որ անկէ ետև արթուն կենայ
ու ինքը զինքին զգուշանայ : Ըոլոր իր
ապստամբութեան կիրքերը իջան
քունին մեղմացուցիչ զօրութիւնովը :
Հիմայ մայրը կրնայ անոր մտացը աղ-
դեւ իր խօսքերը , առանց վախնա-
լու թէ յամառութեամբ դէմ պիտի
զնէ իրեն և վիճաբանութիւն պիտի
ծնանի :

Եռտրվանց երբոր տղաքը կելսան ,
Յակոբը ու Վարիամը իրեն կըչանչէ ,
երկուքին ալ ձեռքէն ըռնելով անու-
շութեամբ մը կըսէ . “Տըղաս , էրեկ
իրիկուն դուն մեղ ամէնըս տրտմե-

ցուցիր պղտի քրոջը դարնելով . կը-
 յուսամ որ ըրածիդ վրայ կըզգաս
 դուն . անանկ չէ՞ մի” : “Ե.յ՛ մայր
 իմ” , կըսէ հակոբ : Հիմայ դիւրին
 կերպով մը զղջալու և հնազանդու-
 թեան բերվեցաւ տղան , բայց բար-
 կութեանը բորբոքած ժամանակը չի
 պիտի բերվէր , կամ թէ մեծ դժուտ-
 ըութեամբ պիտի բերվէր : Ես կիր-
 պովս մայրը խոհեմութեամբ կառա-
 վարելով իր բաղձացած բանը ձեռք
 կըձգէ , և կատարելով ձեռք կը-
 ձրգէ ան՝ վիճաբանութենէ ալ աղատ
 մնալով : Հանցանքը դանց չեղաւ , և
 հակոբ դսպրվեցաւ : Բայց թէ որ
 մայրը չի նայէր թէ տղան ինչ վիճա-
 կի մէջ է , և հրաման ընէր որ շուտ
 մը իր քրոջմէն ներում խնդրէ , խիստ
 հաւանական է թէ տղան անանկ վի-
 ճակի մը մէջ պիտի ձգէր՝ որ իրօք
 ցաւալի էր մօրն ալ տղին ալ : Եւ
 գուցէ տրւած վարժութիւնը քիչ օ-
 գուտ պիտի ընծայէր տղին մտացը :

Աակայն կրպատահին դիպուածնեք
 աւ, որոնց մէջը հնար չէ աս կեր-
 պովս վիճաբանութենէ փախչիլ :
 Երբոր անանկ դիպուած մը պատա-
 հելու ըլլայ, ծնողքին պարտաւորու-
 թիւնն է որ քաջութեամբ ու հաստա-
 տութեամբ դէմը ելլայ : Խէ որ սխալ
 դգացումով անատենը կրվախնաս ետ
 կրքաշվիս, անհաւատարիմ ես ան
 պատուական աւանդին՝ որ Աստուած
 քու հոգանութեանդ յանձնեց : Աար-
 դասիլութիւն է արդեօք թէ որ մէկ
 մայրը թող տայ իր զաւակը մեռնե-
 լու, քան թէ բունութեամբ լեղի դէ-
 ղը խմցունէ՝ որ անոր աւողջութիւն
 և զօրութիւն պիտի տայ : Եւ մար-
 դասիլութիւն է արդեօք թէ որ մէկ
 մայրը թող տայ ան կիրքերը զօրա-
 նաւ, որոնք առանց զսպըմելու պա-
 տիժ պատուհաս պիտի ըլլան իրենց
 տէրոջը զլխուն, թէ աս աշխարհիս
 մէջ ու թէ հանդերձեալին : Խէ որ
 աշխարհի մէջ ճշմարտապէս տարսա-

փելի անդթութիւն մը կայ նէ սըխաւ
լական ներողամտութիւն ունեցող ու
անհաւատարիմ ձնողքին անդթու
թիւնն է :

Հիմայ ջանացինք ցուցընել թէ վե
ճաբանութեան ատենը՝ երբոր անկից
ետ կենաւ հնար չէ, ձնողաց կողմա
նէ աղէկ հաստատութիւն մը պէտք է .
բոյց պէտք է դիտնաւ որ հասարաւ
կօրէն կարելի է ան դիպուածներէն
հրաժարիւ : Օոր օրինակ, թէ որ
տղադ չի հնազանդիր քեզի, կընաս
միայն անհնազանդութեանը համար
պատժել անիկա, ու հոն վերջացու
նել դժուարութիւնը : Հարկաւոր չէ
որ միշտ առջի անգամին հրամանդ
կատարել տալու ետևէ ըլլաս : Բ
սէնք թէ փոքրիկ աղջկանդ հրաման
ըրիր որ գիրըը եր քըոջը տայ, ու ան
չի հնազանդեցաւ : Հիմայ հոս երկու
կերպ ճամբայ կընաս ըսնել քու
կորսընցուցած իշխանութիւնդ ձեւք
ձղելու համար : Կընաս երթաւ գիր-

քը առնել ու իր քրոջը տալ , ու
ետքը յանցանքին չափովը աղէկ պա-
տիժ մը տալ անհնազանդ աղջկանդ :
Կամ կրնաս հաստատ մնալ խօսքիդ
վրայ անիկա հնազանդեցունելու , ու
մէկ վիճաբանութեան մը մէջ մտնալ
որ կարելի է թէ երկան ու ցաւալի
ըլլայ : Տայց երկու ձամբուն ո՞րն որ
բանես նէ , միշտ հաստատ կեցիր և
միտքդ դիր որ անիկա պլուխ պիտի
հանես : Աակայն խելօք ու աղէկ ձամ-
բան՝ դրեթէ ամէն դիպուածի մէջ
առաջինն է :

Վ երը ըսինք՝ թէ մէկ տղի մը կիր-
քերուն վրայ կերպ կերպ փոփոխու-
թիւններ կուգան : Ո՛վ որ տղաք վար-
ժելու վրայ է , հնար չէ որ աս փո-
փոխութիւնը չի տեսնայ : Գրեթէ ա-
մէն մարդ փորձած է որ երբեմն իր
զգայութիւնը անանկ գէշ վիճակի մը
մէջ կըլլայ՝ ինչպէս ըսենք թէ հարա-
ւային հովը փրչած ատենը , որ ամէն
բան և ամէն խօսք իր սիրով կընեղա-

ցունեն : Անը կիրքէրը շատ անպամ
կելլան կամ կիջնան մարմնաւոր ա-
ռողջութիւնով : Են մարդը՝ որ միշտ
միօրինակ խաղաղ և ուրախ կիրք մը
ունի , առանց նեղութիւն քաշելու
հաղարսւոր հոգերէ և վատառողջ
բնութենէ պատահած այլայլութիւն-
ներէ , իր մարմինին և իր մտացը վը-
րայ մեծ յաղթութիւն մը ստացած է :
Ոմանց ջղային կազմութիւնը անանկ
տկար է , որ հարաւային հով մը կամ
խոնաւ օր մը բոլորովին կըվրդովէ
միտքը : Երբոր կըտեսնանք թէ իմաս-
տուն և աղէկ մարդիկ առ տկարու-
թեանը մէջ նեղութիւն կըկըեն , պար-
տինը տղայոց վըրայ համբերութիւն
և կարեկցութիւն ունենալ : Եսանկ
առենները խոհեմ մայրը գիտնալով
որ ան այլայլութիւնը որչափ մարմնա-
ւոր տկարութիւն է նէ՝ այնչափ ալ
մտաւոր է , ձեռքէն եկածը կընէ անիւ-
կա խաղաղունելու իջեցունելու հա-
մար : Եմէն ան բաներէն ետ կըկե-

նայ՝ որոնք կիրքը կըբորբոքեն, ու
 կըջանայ քնացունել ան կիրքերը
 հաճոյական զբօսանքներով կամ հան-
 գիտով : Աս ճամբովս տղան ապեր-
 ջանկութենէ կըխալրսէ, և սիրելի ու
 քաղցը բնաւորութեան մեջ կըզար-
 դացունէ անիկա : Հաւանական է թէ
 շատ տղոց կիրքերը մշտնջենաւորապէս
 աւրլվեցան ծնողքնին բոլորովին զանց
 ընելով կիրքին աս այլայլութիւննե-
 րը : Տղի բնաւորութիւնը անանկ կա-
 կուղ կազմուած բան մըն է, որուն
 առանց զգուշութեան և բրտութեամբ
 ձեռք զարնել չըլլար : Հապա տղին
 յօժարութիւնները ու հեղիկ կիրքերը
 մայրական կտրեկցութիւնովը և սի-
 րովը պարտի կառավարվել : Եւ
 պարտինք ջանալ որ չափաւորենք ա-
 նոր դիպուածական զրգուումը, անոր
 անհաճոյ զրգիւներ պատճառող ա-
 ռարկաններէն ետ զարձունելով միտ-
 քը, ու զուարձալի խորհուրդներու
 հրաւիրելով անիկա :

Յայտնի է թէ տղայոց բնական տը-
 րամաղբութեանը մէջ մեծ տարբե-
 րութիւն մը կայ . բայց մէկ բան մը
 չի կրնար էվելի յայտնի ըլլալ , բան
 թէ ան թէ աղէկ բնաւորութիւն մը
 անկարգ կառավարութիւնով կրնայ
 գէշ ըլլալ . և թէ մէկ տղայ մը որ
 բնականաբար անախորժ կիրքերու
 տէր է , խոհական վարժութեամբ
 կրնայ քաղցրաբարոյ և սիրելի ըլլալ :
 Ա արժութեան գլխաւոր մասը բնաւո-
 րութեան կրթութիւնն է : Եսկից ա-
 ռաջ կուզայ թէ հարկաւոր է սորվել
 տղին ախորժակները ու կիրքերը , և
 աս փոփոխմունքներուն յարմար այլ-
 եայլ կերպ վարժութիւններ գոր-
 ծածել : Ենտարակոյս դիպուածներ
 կըպատահին որ ատեն ծնողը դժուա-
 րութիւն կըքաշէ որոշելու թէ ինչ է
 իր պարտքը : Սակայն ասանկ դիպ-
 ւածները յաճախ չեն պատահիր :
 Երբոր տղան աս կերպ բորբոքեալ
 կիրքի մը մէջ է , յայտնի է որ ամե-

Նէն աղէկ կանոնը փորձութեան զօրութենէն որչափ հնար է նէ անիկա հեռու պահելն է : Եւ թէ որ զանց չըլլրվելու յանցանք մը զործէ , անանկ պատիժ մը թող տրվի անոր որ կը կարծըվի թէ պիտի կակողցունէ անիկա : Օոր օրինակ , անիկա հանդիսականին քովը նատեցուր , ու ըսէ իրեն թէ կէս ժամ տեղէն չի պիտի ելլայ : Տնւր իր ձեռքը իր հաւնած զրքին մէկը , կամ մէկ խաղալիկ մը , որ զինքը զբուցունէ : Աս ճամբովս քու տրւած պատիժդ անոր բարոյական հեւանդութեանը դեղ աւ կըլլայ :

Ասիկա կարելի է որ ծաղըական կերպով պատիժ մը սեպվի , բայց անանկ չէ : Տղան կիմանայ անոր ստոյգ պատիժ ըլլալը , ու ան կերպը բան մըն է որ օգուտ կըգործէ անոր վրայ : Բայց երբեմն սխալմունքներ աւ կըդործէ՝ որ դիպուածին պարագաներուն նայելով անյարմար է նկատել անոնք : Հնար է թէ անախործ կիրքով մը կը-

խօսի իր քըռջը հետ : Մայլը չեց ցուցընէր թէ ինքը նկատեց ան : Իայց կրտեմնայ որ անմիջապէս հարկաւոր է ան անախորժ կիրքը ցածցունել , և կը ջանայ անանկ զուարձացունող ձե մը հնարել՝ որ քաղցրաբարոյութիւն պիտի պլատձառէ անոնց մէջը : Եթ գործը մէկդի կը դնէ՝ ու տղոցը խաղին կը խառնը վի , և իր անուշը ընկերութիւնովը ուրախութիւնը ու քաղցրաբարոյութիւնը նորիէն անոնց կը դառնան : Վուցէ կը սէ . «Տըղաս , քիչ մը թուղթ ու կապար գրիչդ առ , ու նատէ նայէ կը նաև անանկ մէկ կինդանի մը գծել՝ որ տեսածիս պէս ինչը լլալը իմանամ : Մարիամ , դուն ալ քիչ մը թուղթ ու զրիչ մը առ , և եղբօրդ քովը նատէ մէկ կենդանի մընալ դուն գրէ” : Տղաքը բոլորովին կուրախանան իրենց նոր խաղովը : Մէկէն կը նատին իրենց գործին պարապէլու , ու կամաց մը իրարու ականջի կը փսփսան որ մայրերնին չիմաւ

նոյ թէ ինչ կենդանի կը գծենկոր :
 Ես պարզ վարպետութիւնովը ամ-
 բոխեալ կիրքին ան փոքրիկ ամսը որ
 կելարկոր , բոլորովին կրփարատի :
 Ընդ հակառակը՝ թէ որ մայրը պատ-
 ժէր նէ տղան՝ դիպուածական կիր-
 քով խօսքի մը համար , անոր միտքը
 այնպէս մէկէն 'ի մէկ և այնպէս հա-
 ճոյական կերպով մը իր բաղձացեալ
 վիճակին չի պիտի բերվէր : Կամ թէ
 որ մայրը ան դիպուածը բնաւ չի նր-
 կատէր , տղին բնաւորութեանը վնաս
 պիտի ըլլար , թող տալով որ անոր
 խորթաբարոյ կիրքը գնալով զնալով
 էվելնայ : Եւ խիստ հաւանական է թէ
 կուիւ մըն ալ պիտի ծաղէր տղոցը
 մէջը : Ո՞րը կողմանէ միշտ աչալըր
 ջութիւնը՝ շուտով գինքը կրկարողա-
 ցունէ շատ վտանգներ առաջուց տես-
 նալ և դժուարութիւններ խափանել :

Երկրորդ . Երբոր տղան դիտմամբ
 յանցանք չի գործեծ , բնաւ մի պատ-
 ժէր անիկա : Շատ անդամ տղաք ա-

ուանց իրաւունքի կըպատժըվին : Ան
բաները՝ որ իրօք յանցանք են՝ զանց
կըլըվին, ու դարձեալ՝ պղտի դիպ-
ւածի մը համար երբոր տղան բոլորո-
վին անմեղ է, կըպատժըվի : Ասանկ
ընթացքով մը առաջ երթալը ոչ
միայն դիպուածին ու յանցանքին մե-
ջը որոշելը տղին մտքին մէջէն կաւ-
րէ, հապա ըստ ինքեան անիրաւու-
թիւն է : Տալոր զօրութեան տէրը
մայրն է, և ձեռքն է ըլլալ անգութ
բունաւոր մը, ու տղան ուղղութիւն մը
չունենալ : Ասկից էվել անգութ
բունաւորութիւն ըլլար, որ շատ ան-
գամ բարկացող ծնողքները իրենց
զաւկըներուն վրայ կընեն :

Շատ անգամ կըպատահի որ մէկ
մայր մը թէպէտ և չուղէր անարդա-
րութիւն գործել, բայց զանց կընէ
աղէկ մը որոշել յանցանքին ու պա-
տահմունքին մէջը : Տղան սենեակին
մէջը խաղալու ատենը դիպուածով
հանդերձը կըպատռէ, կամ զնտակո-

վը՝ որուն համար հրաման տրվեր էր
իրեն՝ գետինը զարնելով խաղալ,
պատուհանին ապակին կըկոտրէ :
Մայրը անոր հանդերձը կարելու կամ
պատուհանին ապակին շինել տալու
համար նեղանաւով, մեկէն՝ ի մեկ կը-
պատժէ խեղճ տղան : Հիմայ կարելի
է որ մեկ տղայ մը անզգոյշ ըլլայ, և
ան տատիճանը անզգոյշ ըլլայ, որ
պատիժի արժանաւոր ըլլայ : Տայց
անատենը՝ չէ թէ եղած դիպուածին
համար պէտք է պատժը վիլ, հապա
անզգուշութեանը համար՝ որ յան-
ցանք է :

Աս անարդարութիւնը ընդհանրա-
ռիւս մեր երևակայածէն շատ էվելօք
կըզործածվի : Անարդար պատիժին
ամենէն աւելի հասարակ պատճառը՝
մեկ գործին դիպուածական հետե-
անքները ու իրօք նոյն գործին մեջը
տղին ըլլած պատիժի արժանաւոր
յանցանքը իրար խառնելն է : Մինք
ամենա չափէն էվել հակամիտեալ

ենք յանցանքը իր հետևանքներովը
 կշռել : Դիցուք թէ տղայ մը որ
 թոյլտուութիւն ունի աթոռներուն
 վրայ ելլալ ու սեղանին վրայէն բա-
 ները առնել , դիպուածով մեծագին
 բան մըն կըհրէ զետինը կըձգէ :
 Այլը կելլայ սաստիկ կըպատճէ
 տղան : Հիմայ ուր է աս տղին գործած
 յանցանքը : Դուն բնաւ չի սորվեցու-
 ցիր անոր թէ պէտք չէ սեղանին վրայ
 ելլալ : Ուստի անհնագանդութիւն չէր
 ըրտծը : Իմէ որ միայն գիրք մը իյնար ,
 հաւանական է թէ չի պիտի տեսնը-
 վէր : Բայց մէկ բանին մէկալին տե-
 ղը իյնալը միայն , յանցանքին բնու-
 թիւնը չի կընար փոխել : Իմէ որ
 մեծագին ժամացոյց մը ըլլար ինկածը՝
 և այնպէս բոլորովին անպիտան ըլլար
 ան , բայց սոսկուպէս դիպուածով և
 զած ըլլար նէ , տղան պատիժի ար-
 ժանաւոր չէր : Գուցէ մէկը կըսէ
 թէ , Հարկուոր չէ ասանկ յայտնի
 բանի մը վրայ վէճ ընել : Բայց յայտ-
 11 հ

Նի չէ որ ասանկ անիրաւ գործքեր
շատ անդամ կը լլան : Ու գրեթէ ամէն
մայր չի յտէ՞ որ ինքը աս մասին բաւա-
կան աշալը ջութիւն չունի : ԱՌէկ մայր
մը իր կիրքերուն վրայ մեծ իշխանու-
թիւն պիտի ունենայ . անանկ հան-
գարտութեան մը՝ անանկ ծանը բնու-
թեան մը տէր պիտի ըլլայ , որ զիւ-
րութեամբ չի այլայլիր . չէ նէ երբե-
մըն պիտի զրդըվի անիրաւութեան
գործքեր գործելու եղած չարիքնե-
րուն համար՝ որոնց անմեղ պատճառը
իրեն զաւկըներն են :

Արդեօք մէկը կը հարցումէ՞ , թէ
ի՞նչ պէտք է ընել աս վերը ըսված
զիպուածին մէջը : Պատասխանը
պարզ է : Տղաք պէտք է սորվին ը-
նել ան բաները՝ որ ստացուածոց վը-
նաս կը բերեն , ու սորվելէն ետքը ի-
րենց արգելեալ եղած բանը թէ որ
ընելու ըլլան՝ անատենը յանցաւոր
սեպէ անոնք , եթէ վնաս մը ըլլայ և
եթէ չէ : Թէ որ վերը յիշատակված

զիպուածին մէջի տղան ասանկ սորված
ըլլար , աս ըրած գործը ուղղակի ան-
հնազանդութիւն պիտի ըլլար : Նա-
ւատարիմ մայր մը զուցէ աս կերպը
ճամբայ մը պիտի բռնէր : Եւանց
քարկութեան նշան մը ցոյց տալու ,
հանչարտութեամբ ու ծանր կերպով
մը իր տղին պիտի ըսէր :

“Տըղաս , շատ անգամ ըսի քեզի թէ
սեղանին վրայ ելլալու չես : Ենհնա-
զանդութիւն ըրիր ինծի” :

“Բայց մայր իմ , պիտի ըսէ տղան ,
ես մէկ վնաս մը ընել չեի ուղեր” :

“Կարծեմթէ չէ , արդաս . ես վնաս
ընելուդ համար քեզ յանցաւոր չեմ
ըներ , հապա ինծի չի հնազանդելուդ
համար : Եղած վնասը դիպուածով
էր , և անոր համար յանցաւոր չես
դուն . բայց անհնազանդութիւնդ
կամքով էր և մեծ յանցանք : Կըցա-
ւիմ որ քեզ պիտի պատժեմ , բայց
պարտք է անանկ ընել . անիկա իմ
պարտաւորութիւնս է” :

Ետքը տղան կըպատժէ կամ ձեւ
ծով , կամ առեն մը զրկելով անիկա
իր սովորական վայլած բանելէն : Այ-
կայն պատիժը անհնազանդութեանը
համար է , և ոչ թէ ան զիպուածին
համար որ անհնազանդութենէն առաջ
եկաւ : Հիմայ տղան հարկաւ կըզգայ
որ արդարութեամբ էր իր պատիժը :

Բայց տակաւին հարցմունքը հոս
կըմնայ , թէ ի՞նչ պէտք է ընել եթէ
ընաւ չէ սորմեր տղան թէ սեղանին
վրայ ելլալը՝ կամ իր դնուակրովը սե-
նեակին մեջը խաղալը յանցանք է :
Ես զիպուածին մեջը յայտնի է որ
մայրը իրաւունք չունի տղին վրայ
յանցանք դնելու : Հանցանքը իրն է
որ առաջւց առանկ բաներուն վնա-
սակար ըլլալը չի սորմեցուց անոր :
Հիմակվան ընելու բանը միտյն առ է
որ ան զիպուածը ձեռք առնելով ա-
սանկ զքօսանքներուն վնասոկար ըլ-
լալը տղին ցուցընէ , և արդիլէ որ
անկէ ետև մեյմալ չընէ անոնք :

թմէ որ տղան պղտի մանուկ է՝ հարկաւոր է, որ մայրը եղած դիպուածը երբեմն յիշէ, որ տրւած դասը զաւկին մտացը մեջ տպաւորի : Յժէ ասանկ չընէ՝ կարելի է որ ան դիպուածը շուտով տղին մտքէն ելլայ, և քանի մը օրէն բոլորովին մուցած ըլլալով՝ իրէն արգիլված բանը նորէն ընէ :

Կաև տղին տղիսութեանն ալ ներում պէտք է ըլլ ըվիլ : Վուցէ հրամանքդ փոքրիկ աղջիկ մը ունիս տարիուկիսու, ու շատ անդամ կտոր մը թուղթ կուտաս անոր ձեռքը՝ որ պատըւտելով ինքը պինքը կըզուարձացունէ : Վսիկա իրեն մեկ մեծ զուարձութիւն մըն է : Ուկ օր մը երկարժամանատկ զործքով զբողած ըլլով, վերջը աքրդ կըվերցունես որ տեսնաս թէ աղջիկդ գետեին վրայ այսչափ հանդարտ պահողը ինչ է : Ինչ կընայիս . ձեռքը թանկապին զիրք մը ունի, որ զրեթէ բոլորովին անպիստան ըրել է . ու քու առւաջին

խորհուրդն է պատմել անիկա, կամ
 գոնէ ըրած յանցանքին համար սաս-
 տիկ մը չեխել : Ծայց իրօք պատիժի
 կամ չեխի արժանաւոր բան մը ըրաւ-
 մի : Վրդարե չէ : Վնասն կընայ զիտ-
 նալ թէ մէկ կտոր մը թուղթը պատ-
 ռելը օրինաւոր է՝ ու մէկալը պատռե-
 լը յանցանք : Վնիկա իր կեանքին մէ-
 ջը ամեն աւուր խաղացած անմեղ խա-
 ղը կըխաղակոր : Վսանկ զիպուածի
 մը մէջ մի միայն ընելիք բանը է՝
 ջանք ընել աղջկանդ սորվեցունելու,
 թէ զիրքը զգուշութեամբ ձեռք տու-
 նելու է, ու պատռելու բան չէ : Ծայց
 մէկը պիտի հարցունէ՝ թէ աս բանա
 բնասն կընայ սորվել առանց պատմե-
 լու անիկա : Կընայ սորվել քու ձայ-
 նիդ վսեմ եղանակովը ու երեսիդ ձա-
 նը նայվածքովը, թէ ինքը բան մը
 կընէրկոր որուն համար դուն կընե-
 ղանասակոր : Վս ճամբովս զիւրին կը-
 սորվի զիրքին ու կտոր մը հին թուղ-
 թին մէջ տեղը եղած տարբերու-
 թիւնը :

Երկու տարեկան փոքրիկ տղայ մը
 սովորութիւն ունէր ինքը զի՞նքը զուար-
 ձացունելու, կապար գրիչով թուղթի
 վրայ խաղալով : Մէկ օր մը հայրը
 սենեակէն ներս մտաւ ու գտաւ որ տը-
 ղան մէկ նոր գիրք մը բոլորովին սե-
 ցուցեր էր : Տողորովին չի գիտնա-
 լով որ իր ըրածը սխալմունք էր,
 հայրը ներս երթալէն ետեւ ալ իր
 դործը շարունակեց ընել : Ուրիշ
 ճնողք մը ըլլար նէ գուցէ բարկանա-
 լով տղին ձեռքէն պիտի քաշէր առ-
 նէր գիրքը, ու տղին երեսին ալ ապ-
 տակ մը իջեցունէր : Ես՝ որ հոն ներ-
 կայ գոներվեցայ, կարծեցի որ աս ծը-
 նողքին ալ մտքին մէջի առաջին խոր-
 հուրդը աս էր, թէպէտ ինքը անսո-
 վոր հանդարտութիւն մը և ծանը բը-
 նութիւն մը ունէր : Տայց սակայն ա-
 նանկ բան մը չըրաւ . հապա տղին քո-
 վը մօտենալով կատարեալ անուշու-
 թեամբ և հաճոյական կերպով մը ը-
 սաւ :

“ԱՅ, արդաս, գիրքը կաւրեսկոր”:

Տղան զարմանալով հօրը երեսնիւ վեր նայեցաւ :

“Ատիկա գիրք է արդաս, պէտք չէ որ ատոր վրայ բան գրէս : ‘Այէ’ (ըստ, Թուղթերը դարձունելով) իմ գիրքս պիտի աւրէս : Եռ քեզ քիչ մը Թուղթ, և ատոր վրան գրէ . բայց բնաւ գիրքի մէջ գրելու չես” :

Վնկից ետև հայրը վնասած գիրքը առաւ ու մէկդի գրաւ, առանց բարկութեան կիրք մը ցուցընելու : Մը ինչպէս յայտնի է թէ ասանկ դիպուածի մը մէջ աս ճամբան պէտք է բըռնել, և սակայն որչափ քիչ տղաք կան որ առանց պատիժի աղատին ասանկ դիպուածներէն :

Աս օրինակները բաւական են ցուցընելու թէ ինչպէս հարկաւոր է տը գիտութեամբ ու դիպուածով եղած ոխալմունքներուն ներել : Ու նաև կըցուցընեն թէ տղաքը պատիժի արժանի չեղած որչափ անդամ կըսկատ-

Ժըլին : Երբոր տղայ մը յանցանքով
և առանց յանցանքի կը պատժը վի ,
աւ իր միտքը կարող ըրլար ծուռը
ու շխտակը իրարմէ որոշել : Ուստի
ընտանեկան կառավարութեան մէջը
հարկաւոր կանոն մըն է որ երբոր
դիտմամբ յանցանք մը չի դորձեծ
տղան , բնաւ պէտք չէ պատժել աւ
նիկա :

Երկրորդ . Բնաւ մի խորհիլ թէ քու
տղատ պզտիկէ հնագանդութիւն սոր
վելու : Օտւկըներնուս վրայ ունեցած
պարտաւորութիւններնիս գանց ընելու
նուս համար սանկ ու նանկ պատճառ
ներ կը հնարքնը մենք մեղ արդարա
ցունելու : Երբեմն կը սենք թէ դեռ
պզտիկ են անոնք , և երբեմն թէ հիւ
ւանդ են : Աան մայրեր՝ որոնք միշտ
մէկ կերպ մը պատճառ կը զտնանք որ
իրենց զաւկըներուն թող տան ուղած
ճամբանին երթալու : Բայց մէկ տղայ
մը իր խիստ փոքրիկ հասակին մէջն
աւ կընայ հնաղանդութիւն սորվիլ :

Ա թնչե անզամ կատուի ձազի մը կամ
 պզտի շունի մը դիւրութեամբ կլնանք
 սորվեցունել իրենց ետևի երկու ոռու
 քելնուն վրայ կայնիլ , կրակին վրայի
 մսին չի դպչիլ , սենեակէն դուրս երա
 թալու հրաման ընենք նէ երթալ , և
 ասոնց նման հազարումէկ դործեր կա
 տարել պատրաստական հնազանդու
 թիւն ցուցընելու : Վաղղիացի պա
 լոն մը մօտ ատեններս խել մը քանա
 րիա ըսված թռչուններէն ժողվեց
 տակ վաստըկելու համար : Աորվեց
 ցուց անոնց անանկ կատարելապէս
 հնազանդիլ իր ձայնին , որ սենեակին
 մէկ կողմէն մէկալ կողմը գունդ գունդ
 դորբերու պէս կըքալեցունէր անոնք ,
 և իր հրամանովը զանազան կերպ
 դարմանալի շարժմունքներ ընել կու
 տար անոնց : Ուստի տասնըութը ամ
 սու կամ երկու տարեկան տղի մը ըն
 դունակութիւնը քանարիայի մը ըն
 դունակութենէն վար ըլլալը հաւանա
 կան է մի : Եւ պէ՞տք է պատճառել

ասանել տղի մը համար , թէ դեռ բաւ-
 ւական խմացողութիւն չունի հնազան-
 դութիւն սորվելու : Խոհեմ մայր
 մը որ մեծ ընտանեաց տէր էր և
 շատ զաւկըներ մեծցուցեր էր , ո-
 րոնց տմէնը հիմայ երևելի և օգտա-
 կար դործքերու մէջ են , ըստ թէ ,
 Առվորութիւն ըրէր էի զաւկըներուս
 առջի տարիին իրենց հնազանդիւ .
 բայց տարու մը ըլլալնուն ետե կընա-
 յէի որ անոնք ինձի հնազանդին : Ես
 ըսելով յայտի է որ չէր կամէր ըսել
 թէ տղան տարու մը եղածին պէս ին-
 քը մէկէն՝ ի մէկ և բռլորովին կըփո-
 խէր իր կառավարութիւնը : Ենոր
 մանկութեան հասակին առջի ամիսնե-
 րուն մէջը մայրը իր պարտաւորու-
 թիւնը կըսեպէր ձեռքէն եկածը ը-
 նել , զաւկին հանգստութեանը և եր-
 ջանկութեանը համար : Կըջանար ա-
 նոր պակառութիւնները լեցունելու .
 կըհնազանդէր տղին՝ անոր բաղձանք-
 ները կատարելու : Բայց երբոր տա-

ըու մը կըլլար տղան, կըմտածէր թէ
 ալ ըստ բառականին մեծցած է ան
 բարեկարգ ընտանեաց մը օպտակար
 կարգադրութիւններուն տակը բերե
 լու : Գիտեմ որ շատ ծնողքներ պիտի
 ըսեն թէ ասիկա խիստ կանուխ է տը
 ղին կառավարութիւնը սկսելու, և
 շատերն ալ դուցէ պիտի ըսեն թէ ուշ
 է, և թէ ասկէ կանուխ պէտք է ըս
 կըսիլ : Շայց մէկ խօսքով ճշմարիտ
 կանոնը առ է . մօքը իշխանութիւնը
 պարտի անմիջապէս դաւկին վրայ
 հաստատվիլ, երբոր անիկա կըսկըսի
 հասկընալ հրամանը ու արդեւըը
 շարժմունքով կամնայվածքով յայտ
 նըված : Ասիկա շատ ծնողքներուն
 կարծած ատենէն խիստ կանուխ կըս
 կըսվի : Ան մայրը՝ որ կըտարակուսի
 ասոր վրայ, թող փորձէ ու նոյի թէ
 ինչպէս դիւրութեամբ կընայ սորվե
 ցունել իր դաւկին կըսկին քովի կայ
 ծառին ձեռք չի դարնելու, և կամ
 զիրկը նատած ատենը սեղանին վրայ

ՊՐԳԱԼԻ կամ դանակի չի դպչելու :
 Տղայ մը ասանկ բաներու մէջ հնաւ
 զանդութիւն կրնայ սորվիլ ան ատեն
 նը , ինչպէս նաև որ և իցէ ատեն իր
 ապաւնի տարիներուն մէջը : Եւ մէկ
 մայր մը որչափ նեղութենէ կաղատէ
 ինքըղինքը , ասանկ կանուխ հնազան
 դութիւն սորվեցունելով իր դաւկին :
 Որչափ ցաւերէ ու տրամութենէ կա
 զատէ իր դաւակը , ուրախ սրտով
 հնազանդութիւն մը ունակութիւն ը-
 նել տալով անոր՝ իր մատղաշ տարի-
 ներուն մէջ :

Չորրորդ . օքուշ կեցիր որ չափէն
 էվել խստութիւն չի բանեցունեն :
 Կառավարութեանդ մէջ կանոնաւոր
 և միօրինակ ճամբայ մը բունելով , հա-
 զիւ թէ խստութիւն հարկաւոր կըլայ :
 Թէ որ պատիժը միշտ հանդարտ
 կերպով ըլլայ , պատիժի դիպուածներ
 խիստ քիչ կըպատահին : Վայրը իր
 զաւկին հետը միշտ սիրով և անուշու-
 թեամբ թող վարվի : Անոնց մանտըր-

տիկ խաղերուն մէջը իրենց կարեկից
 թող ըլլայ : Եթ անդադար ջանքովը
 անոնք ուրախ զուարթ պահելու հա-
 մար՝ անոնց հաւատարմութիւնը իր
 վրայ թող շահի : Արբոր անոնք յան-
 ցմնք դործեն թող իր կիրքը չամքո-
 լուէ, հապա տրտմի և տրտմութեամբ
 թող պատժէ անոնք և ո՛չ թէ բար-
 կութեամբ : Ա տիսը օգտակար և
 հարկաւոր սկզբունք մըն է ընտանե-
 կան կառավարութեան մէջ : Ինչու որ
 Վատուած ալ իր մեծ ընտանեցը
 կառավարութեան մէջը կըդորժածէ
 ան : Բայց տղին տրտմադրութեանը
 կործանումէ միայն աս կերպովս անի-
 կա դսպելը : Կ'նչպէս ապէր ջանիկ
 պիտի ըլլայ ան ընտանիքը, ուր որ ծր-
 նողքը երեսը աւրըշորկած ժանիքով
 կընստի միշտ, և ուր որ ամեն ատեն
 հրամանով և խստութեամբ ձայն
 կելլայ : Վասնկ ծնողքներ կըտեսնա՞ք
 մենք : Չաւկընելինին կըվախնան ի-
 րենցմէ : Վմեն ատեն անոնց առջել

սանձի տակ են անոնք . ու տունը խա-
 ղաղութեան և ուրախութեան երջա-
 նիկ բնակարտն մը ըլլալուն տեղը ,
 անուանելի բանտ մը կըլլայ իրենց :
 Բայց ուր որ մայրը խնդում երեսով
 իր զաւկընէրը կըլլարեէ , և անոնց
 ըլլած ջանքը զինքը հաճեցունելու³
 խ սնչա՛լ ո՛թ սիրով կըլլարձառքէ ,
 և իր հրամանները անուշութեամբ ու
 սիրով անոնց կընէ , անիկա մարդկա-
 յին սրտին ան թելերուն կըլլարնէ՝ ո-
 րոնք անուշիկ ներդաշնակութեամբ ի-
 րենց ձայնը կուտ ան : Առեր բնութեա-
 նը ամենէն աղնիւ և ամենէն սիրելի
 սկզբունքները՝ ի զործ կըկանչէ : Եւ
 այսպէս իր զաւկընէրը կըլլարտաւո-
 րէ , որ իրենց քաշած պատիժը ազդու-
 ի օգտակար կերպով մը զգան : Տր-
 ղաքը զիտեն թէ մայրելնին չի
 սիրեր զիրենք պատժել : Ամեն մէկ
 զիպուածի մէջ՝ ուր որ կարելի է ,
 ասանկ անուշութեամբ կառավարելու
 է տղաքը : Բայց երբոր անուշութիւ-

նր օգուտ չընէր և անհնազանդութիւն
կըհետեի , մէկ վայրկեան մը թող չի
տարակուսի մայրը իր զօրութիւնը
ձեռք առնել և պատժել տղան այն-
չափ խստութեամբ որչափ որ հարկա-
ւոր է : Քանի մը ասանկ դիպուածնե-
րը գրեթէ ո՞ր և իցէ տղի կըսորվեցու-
նեն թէ սրչափ աւելի առէկ է հեա-
զանդ գտնըվել , քան թէ անհնազանդ
ըլլալ :

Կառավարութեան մէջ ասանկ մի շ-
օրինակ և հաստատուն ըլլալով , ու
ամեն մէկ դաւկին կառավարութիւնը
անոր մանկութենէն սկսելով , հասա-
րակօրէն հնար է ետ կենալ խստու-
թիւն գործածելէն : Եւ ընտ չի վայ-
էր մօր մը որ գաւկըներուն հետը հա-
ղորդակցութիւն ընելու ատենը խիստ
և անզգայ ըլլայ : Խիստ զօրաւոր կա-
ռավարութիւնը գրեթէ բոլորովին սի-
րով կատարել հնար է , միայն թէ
աղէկ հասկըցվի որ անհնազանդու-
թիւնը անպատիժ անցունել չըլլար :

Շատ կըցաւիմ ես ան ապէրջանիկ
 աղջոցը վրայ՝ որոնք չեն համարձակվու
 թիւնց ծնողացը քով դալ սիրով և
 որդիական համարձակութեամբ . ու
 բոնք միշտ վախի մէջ են անոնց խու
 ժուած երեսին ու պինտ խօսքերուն
 պատճառովը . և որոնք հետևապէս
 կըցաղձան տնէն հեռու ըլլալ՝ որ քիչ
 մը ինքը ինքնին վայլեն : Ամէն կերպ
 հնարքները պէտք է ՚ի դործ դնել՝
 տունը անոնց բաղձալի տեղ մը ընել
 լու , անոր բոլորտիքը հաճոյական ըն
 կերութիւններ հաւքելու , և ոյսպէս
 քու զաւկիդ մտացը մէջ յօժարու
 թիւն մը ձգելու խաղաղ և դուտ վա
 յելքութեանց համար : Այս յօժա
 րութիւնը մեծ զօրութեամբ կամուր
 ցունէ անոր միտքը մոլութեանց դէմ
 զնելու : Ու երբոր իր ծնողացը երդի
 քին տակէն դուրս ելլայ , միշտ պիտի
 դառնայ նայի անոր վայելքութիւն
 ներուն վրայ՝ սիրապատար յիշատա
 կութեամբ , և անիկա այնչափ երջան

կութեան բնակարան ընողներուն վրայ՝
երախտագիտութեամբ : Ետքի տա-
րիներուն մէջն ալ երբոր քու զաւկը-
ներդ ընտանեաց տէր ըլան, քու տը-
պաւորած սկզբունքներդ իրենց զաւ-
կըներուն վրայ պիտի անցունեն : Եւ
այսպէս քու տըւած վարժութիւննե-
րուդ զօրութիւնը կրնայ տարածիւ-
հազարներուն վրայ՝ որոնք դեռ չեն
ծնած :

Ո՛րչափ քիչ կըմումտանք մեր տա-
լու հաշիւին վրայ ան ընդարձակ զօ-
րութեանը համար՝ որ մենք կըգործա-
ծենք ուրիշները աղէկ կամ գէշ ընե-
լու : Ո՞եր վարքէն առաջ եկած ար-
դիւնքը բոլոր յաւիտենական դարե-
րուն մէջը պիտի զգացվի : Ո՞ենք մեր
յաւիտենական բնակութիւնը երթա-
լէն շատ ժամանակ ետքը, խօսքերնիս
և գործքերնիս մեր թուներուն և ա-
նոնցմէ Ճնածներուն բնաւորութիւնը
կազմելուն օժանդակ պիտի ըլան :
Ենատենը չենք կրնար խափանել ան-

պատճառները՝ որոնք մեր վարքերէն
առաջ եկան, ու պիտի յառաջանան
անմահ էակները կամ դէպի առա-
քինութեան ու երկինքը բարձրացու-
նելով, և կամ անարր կիրքերու և
մեղաց ու դժոխային տանջանքի մէջ
առաջ վարելով :

Գ. Լ. Ա. Խ. Խ. Հ.

Ո՞ւ այլ բառ ո՞ւ այլ բառ ո՞ւ այլ բառ ո՞ւ այլ բառ :

Մինչեւ հիմայ եղած ծանօթութիւն-
ները անանկ յայտնի են, որ մարդ
կը պարտաւորի հարցունել թէ ընտա-
նեկան կառավարութիւնը ընդհանրա-
պէս ինչու ասանկ անկատար է : Ինչ-
ու այսափ քիչերուն կը յաջողի ի-
րենց զաւկըներէն ուրախ սրտով հը-
նազանդութիւն մը ընդունել : Եսոր
ասանկ ըլլալը շատ պատճառներ ունի :
ա : Կալուստ առ է՛լուն Բելը ծնողաց իւ լու-

ան չեւը պէհոնին իտությունը իտրողը լիւն
 շունենացնեն է : Ո՞րչափ քիչ անձինք
 կան որ հանդարտութեամբ և ծանրու-
 թեամբ իրենց կիրքերը կառավարեն :
 Ո՞րչափ քիչերը կան որոնք իրենց
 բանեցունելու զգուշութիւնը գոնէ եր-
 բեմն մէկդի կըճգեն , ու սաստիկ ամ-
 բոխեալ կիրք մը ցուցընելով կը-
 բարկանան : Եւ ի՞նչպէս մէկ մայր մը
 կընայ յուսալ իր զաւակը կառավա-
 րելու , երբոր ինքը ինքը չի կընար
 կառավարել : Ծնտանեկան կոռավա-
 րութիւնը իսխատ աղջու կերպով մը
 ծնողքէն պէտք է սկըսել : Ե՞նիկա-
 մօրը սրտին մէջը ուարտի սկսել :
 Ո՞այրը պարտի սորվել ինքը ինքը
 կառավարել , իր կիրքերը զապել :
 Եր որդոցը հեղութեան ու հանդոր-
 տութեան օրինակ մը պէտք է որ ըլ-
 լայ , չէ նէ արդարապէս պէտք է
 յուսալ թէ բոլոր իր ջանքերը անոնց
 կիրքերը սանձահարելու անզօր և ան-
 պիստան են : Զոր օրինակ , տղան կը-

բարկանայ ու քլոջը կըզտընէ , մայլն
 ալ կըբարկանայ ու տղան կեծեծէ :
 Հիմայ մայր ու տղայ երկուքն ալ նոյն
 յանցանքովը յանցաւոր են : Երկուքն
 ալ բարկացան , և երկուքն ալ բար-
 կութեամբ մէկ ուրիշը ծեծեցին :
 Աւստի ի՞նչ զօրութիւն ունի աս մե-
 ղանչական պատիժը : Կարելի է թէ
 տղան վախնայ մէյմալ իր քլոջը
 զարնելու . բայց ատիկա կըսորվեցու-
 նէ՞ ան տղին թէ յանցանք գործեց , և
 թէ մեծ չարութիւն է բարկանալը :
 Կընայի որ իր մայրը բարկացած է , և
 կըխորհի որ ինքն ալ կընայ բարկա-
 նալ : Կընայի թէ երբոր մայրը բար-
 կացած է կըզտընէ . ու ասանկ կըսոր-
 վի թէ ինքն ալ իրաւոնք ունի նոյն
 ձամբան բռնելու երբոր բարկացած
 ըլլայ : Աս կերպ պատիժին զօրութիւ-
 նը է՝ բոցը էվելօք հրահրել , և կեր-
 պին հնացեալ սովորութիւնը զօրա-
 ցունել : Ասանկ ձամբուն մէջը ոչ
 բարոյական վարժութիւն կայ , և ոչ

օդտակար ուսմունք : Այւ սակայն մէկ
մայր մը որ ինքը զինքին վրայ յաղթու
թիւն չէ ստացել , որ իր կիրքերուն
բռնութիւնը չի կրնար սանձահարել ,
շատ անգամ աս կիրպովս պիտի պատ-
ժէ իր զաւակը : Երբոր ասանկ մայր
մը տեսնանք ախտաւոր ու բորբոքած
զաւկըներով , հարկաւոր չէ երկրորդ
հարցմունք մը ընել թէ ինչու տղա-
քը հեզահոգի ու հնազանդ չեն : Այս
քանի ասանկ մայրել կան ասօր :

Ինքը զինքը զսպէլը՝ ամէն ատէն և
ամէն բանի մէջ , ամէնէն հարկաւոր
ու ամէնէն զժուարին բաներուն մէկն
է ձեռք ձգելու : Շատ ծնողընէր ի-
րենց մանկութեան ատենէն զսպըվել
սորված չեն , ու կը պտնան որ մեծ աշ-
խատութեան կարօտ է շիջուցանել
ան կիրքերը որոնք երբեմն զըեթէ ա-
կսմայ կամքով կը բորբոքին իրենց
ներսիդին : Բայց միշտ միտքերնիս
պահենք որ ասիկա պէտք է ըլլալ ,
չէ՞նէ մեր զաւկըներուն հաւատարիմ

չե՞նք ըլլար : Այե՞նք մեր կիրքերը ու
 մեր գործքերը անաշտու վարժութեան
 մը տակ պիտի առնենք . չէ նէ անօ-
 դուստ է յուսաւ անոնց կիրքերը նը-
 ւաճելու և վարքերնին բարեկարգե-
 լու որոնք որ մեր վրայ կընային օրի-
 նակի ու վարժութեան համար : Ը աս
 զիապուածներ կըպատահին որ մօրը
 համբերութիւնը գրեթէ պիտի հատ-
 ցունեն : Իժէ որ Աստուած ջօրհնեց
 անիկա յայանապէս խաղաղ ողի մը
 տալով իրեն , կամ թէ որ մանկութե-
 նէն ինքը կառավարելու սովո-
 րութիւն չստացաւ , պիտի գտնայ որ
 շատ գործ ունի բուն իր սրտին վրայ
 կատարելու : Ասիկա սրտի մտօք կը-
 կամինք ստիպել , որովհետև խիստ
 հարկաւոր բան մըն է : Շարկութիւնը
 ժամանակաւոր յիմարութիւն է : Եւ
 ինչ բան կընայ աւելի ցաւագին ըլ-
 լաւ , քան թէ տեսնաւ մէկ մայր մը
 որ բարկութեամբ խենթ դարձած իր
 զաւկէն վրէժ կըպահանջէ : Ո՞այրը

Թող տրտմի և իր տրտմութիւնը Թող
 ցուցընէ երբոր իր զաւակը յանցանք
 կըգործէ : Հարկաւոր եղած վարժու
 թիւնը՝ ան պատահած դիպուածին
 նայելով, հանդարտութեամբ և մըտ
 մըտալով Թող ընէ : Տայց բորբու
 քեալ կիրք մը Թող չի ցուցընէ, և
 բարկութեան խօսք մը բերնէն Թող
 չի հանէ : Ուէ որ միտքը այսպէս
 պարզ ու հանդարտ պահվե նէ, իր
 զաւակը ոչ միայն հրամանով, հապա
 նաև օրինակով պիտի վարժէ . դիւ
 լութեամբ պիտի զիտնայ ու խոհե
 մութեամբ պիտի կատարէ իր պարտա
 ւորութիւնը : Եւ անատենը իր վար
 քին գերազանցութիւնը իր զաւկընէ
 ըլ կըպարտաւորէ պատուել զինքը
 ու դմայլել իր վրան : Եւ մինչեւ որ
 ոս ըըլայ, անհնար է մօր մը վար
 ժութեան կանոնները դործածել, թէ
 և պարզ ու յայտնի կանոններ են ա
 նոնք :

Հ . Ա . Ե . Կ . Ա . Յ . Ե . Ճ . Ա . Ք . Ե . Վ . Վ . Վ . Ե . Վ . Վ . Վ . Ե . Վ . Վ . Վ .

վասն - լուսանը մեջ հասած պատճեն շատ է առաջ կազմուն
 է : Այս միշտ ցաւ կըզգայ իր զա-
 ւակը օրինաւոր վայելքութիւններէն
 զբկել , կամ անոնք պատժել : Աս-
 կից է որ պարզմտութեամբ պատ-
 ճառներ կըձևացունենք մենք մեր
 պարտքերէն խալքելու : Օտարեկդ
 յանցանք կըզործէն ու դուն գիտես որ
 պատիժի արժանի է : Այց անիկա
 պատժելու պարտաւորութենեղ կըդո-
 զաս : Արդինչ օգուտ է վարժութեան
 կանոններուն տեղեակ ըլլալ , թէ
 որ միտքերնիս չենք կընար հաստա-
 տել ան կանոնները 'ի գործ դնելու :
 Անօգուտ է վարժութեան վրայով զա-
 նազան զիրքեր կարդալ , թէ որ չենք
 կամիր հարկաւորած ատենը մեր զաւ-
 կըները պատժել հանդարտ և հաս-
 տատ մտօք : Աս տկար ներողութիւնն
 է , մեր վշտալի պարտաւորութիւնը
 կատարելուն աս անօրէն հերքումն է ,
 որ հազարաւոր տուններ կործանեց
 Ո՞ինչև անդամ մայրը իր զաւկընե-

բուն առջեր կըհակառակի հօրը իր
անառակ տղան սպատժելուն համար :
Ենդութ և անկարեկից կըկոչէ ան, ու
անանկ իր անօրէն կարեկցութեամբը
ու սիրովը կամակորութեան մէջ կը-
հաստատէ իր զաւակը :

Ի՞նչ կընայ յուսացվել ասանկ
ճամբայ մը բունելէն : Եսանկ մայրը
ամէնէն անգութ և անողորմ թշնամի
մըն է իր զաւկին : Եսանկ վարժու-
թեան մը տակ մեծնալով ան հաւա-
նական է թէ ապերջանիկ պիտի մեծ-
նայ, ոչ միայն իր ծնած օրը անիծե-
լու, հազանու առաւել դառնագոյն
անէծքներ իր մօրը գլխուն դիզելու
որ զինքը ծնաւ : Յու զաւակդ կործա-
նելու ասկից էվել բան մը չես կընար
ընել . բան մը չես կընար ընել որ
էվելօք ազդու կերպով մը անոր սոր-
վեցունէ քեզ ատել ու անարդել .
բան մը չես կընար ընել որ աւելի ըս-
տուգութեամբ ցաւերու և անար-
դութեան մէջ քեզ գերեզմանը իջե-

ցունե , քան թէ այսպէս ձգել՝ որ
մայրական տկար սէրը քեզ գրուէ
զանց ընել քու վշտալի՝ բայց հար-
կաւոր գործերդ զաւկիդ վարժութեա-
նը համար :

Կըհարցունեմ ան մօրը՝ որ աս զիր-
ըը կըկարդա կամ կըլսէ՝ թէ շատ ան-
դամ իր խղճմտանքին ու սիրոյն մէջը
հակառակութիւն մը ըլլաւ չպղաց մի
իր ներսիդին : Խղճմտանքդ քեզ ստի-
պեց զաւակդ պատժելու : Վայրական
սէրդ քեզ ստիպեց անոր անհնագան-
դութիւնը զանց ընելու : Վայրական
սէրը յաղթող դտնըվեցաւ , և զաւա-
կը պատիժէն ազատ մնալով մեղքի
մէջ զօրացաւ : Աղէկ զիտցիր որ ա-
սանկով քու յառաջադիմութեանդ
մէծ արգելքը քու սրտիդ մէջը պահ-
ված է . և մինչեւ աս արգելքը չի
յաղթըվի , ամէն ուրիշ բաները անօ-
դուտ են : Ամենելին դժուարին չէ աս
հատորը անանկ դիպուածներով լե-
ցունել , որ աս բանիս և ասկից ա-

առջ եկած ահաւոր հետեանքներուն
օրինակ ըլլան :

Քանի մը տարի առաջ մէկ կին մը
քանի մը փոքրիկ տղոցմով որբեարի
մնաց : Աս կինը իր զաւկըները կըսի-
րէր խիստ մեծ սիրով : Եթ սուզը էր-
կանը մահուանը վրայով իրեն սէրը և
յօժարութիւնները էվելօք զաւկընե-
րուն վրայ հաստատեց . անոնք էին իր
մէկ հատիկ յոյսը : Ազաւոր ու արտ-
մած րլլալով չէր կընար սկատմէլ ,
կամ մէկ վայելքութենէ մը զըկել ա-
նոնք : Ապէրջանիկ և մոլորեալ կին :
Նշպէս կըցաւ յուսալ աս բոնած
համբէն առաջ գոլու դէշ հետեանք-
ներէն փախչել : Ան խարեւայ յու-
ովը կըմիսիթարմիկոր թէ իր թոյլ-
տուութիւններովը զաւկըները զինքը
էվել պիտի սիրեն : Եւ հիմայ իր տը-
զոցը մէկը տասնըեօթը տարեկան
յանդուգն խուովարար ու կամակոր
ողայ մըն է , և իր սգաւոր մայրը գը-
րեթէ բոլորովին սրտարեկ եղած է աս

անհամեմատ տրամութիւնավը : Ար-
 նացած տղաքն ալ նոյն ճամբովը տ-
 ռաջ կուգանկոր : Վայրը կըտեսնայ
 ան թշուառութիւնը՝ ու տեսնալով կը-
 դողայ անկից, ուրկից փախչելու ճար-
 մը չի կայ : Եվելոք երջանիկ պիտի
 սեպվեր ան թէ որ անզաւակ ըլլար,
 ինչպէս որ որբեարի է : Զաւկըները
 բռնաւոր են իր վրան . ինքը անոնց
 գերին է : Ենհնար է հիմայ իր քայ-
 լերը փոխել ետ զաւնալ՝ կամ իրեն
 ու իր զաւկըներուն ըլլար վնասին
 դարձան մը գտնալ : Հազիւ թէ մէկ
 ուրիշ վիճակ մը կայ՝ որ ասկից էվել
 ճշմարտապէս ողորմելու արժանի ըլ-
 լայ : Եւ ինչ է աս ահազին տրտմու-
 թեանը պատճառուը : Պարզապէս մօրը
 դժկանակութիւնն է իր պարտքը կա-
 տարելու : Իր որը զաւկըներուն վրայ
 որբեարի մօր մը խանդակաթ գգա-
 ցումներով նայեցաւ, ու չէր կրնար
 հարկաւոր եղած սանձերը անոնց վրայ
 դնել՝ ու իր հրամաններուն անոնք հը-

նազանդեցունել : Շ ատ աղեկ զիտէր
 թէ իր տղաքը անչնազանդ ըլային
 նէ պատժըվելու արժանի էին . և թէ
 իր պարտքն էր անոնց վրայ իր իշխա-
 նութիւնը բանեցունել : Իր տղիտու-
 թիւնը չէր որ աս երջանկութեանը
 սոսկալի կործանումը պատճառեց ,
 հապա հաստատուն կամք չունենալն
 էր . ան խանդակաթու ու յիմարական
 և անողորմ մեղմութիւնն էր որ զինքը
 յորդորեց իր մայրական սիրոյն
 զգացումներուն հակամիտիլ , քան
 թէ իր ղաւկըներուն մշտնջենաւոր
 երջանկութեանը ցանկալ :

Գուցե, պիտի հարցունէ կարդացու-
 ղը թէ ասիկա իրօք պատահած զիպ-
 ւածի մը Ճշմարիտ պատմութիւնն է
 արդեօք : Այո Ճշմարիտ պատմութիւն
 մըն է ասիկա հազարաւոր դիպուած
 ներու բոլոր մեր երկրին մէջ : Ով
 մայրեր , ձեզի կըհարցունենք՝ թէ
 դուք ամեն տեղ ձեր բոլորտիքը ա-
 սանկ երկրաւոր յոյսերու նաւա-

բեկութիւնը չի տեսաք մի : Իս-
ւական օրինակներ չունի՞նք մի աս մա-
հաբեր ժայռէն փախչիլ : Եւ սակայն
ամէն անոնք՝ որ աշխարհիս վրայ շըր-
ջահայեաց աչքով կողբարտին, կը վը-
կայէն թէ ծնողաց անհաստատութիւ-
նը առ տնին նեղութիւններուն խիստ
երեւելի պատճառներուն մէկն է :

Ազդու բնաւորութեան մը տէր ըլ-
լալ պէտք է, չէ նէ կը թութեան հա-
մար եղած աշխատութիւնները անանկ
անզօր կը լլանք որ առաւել վնաս-
քան թէ օգուտ կը նծայէն : Կիրքը
կամբոխի, բայց չի դսպը վիր : Պատի-
ժը չեցին վիշտի մը տեղ կանցնի, ու
անոր զօրութիւնը բացարձակապէս
վտանգաւոր կը լլայ : Խիստ հարկաւոր
է որ պատիժը հաստատուն ու ազդու-
կերպով մը ըլլայ : Եւ ստոյդ է թէ
ան մայրը որ ազդու և որոշեալ կա-
նոններ կը գործածէ, շատ քիչ նե-
ղութիւն պիտի տայ իր անձին և իր
զաւկին, քան թէ ան տկար և դան-

դաղկոտ կանոններ բանեցունող մոյշ
ըլ՝ որ շատ անդամ կըտեսնանք : ԱՇ
կը միշտ ծաղրական կերպով կըսպառ
նայ իր դաւկին և անանկ կըպատճէ
անիկա՞ որ միայն անոր կիրքը բորբո
քելու ու բնաւորութիւնը խանգարե
լու բաւական է . միւսը իր խօսքը
միշտ կատարեալ հնազանդութեամբ
ընդունված կըդտնայ , և հազիւ կըլ
լայ որ հարկաւոր տեսնայ պատճել
իր որդին :

Քիչ մարդիկ կրցան Գոնոբարդէն
աղէկ Ճանչնալ մարդկային բնութիւ
նը . և քիչերը կրցան անանելյաղթու
թիւն մը ստանեսլ մարդկային մտաց
վրայ : Կըսվի թէ անդամ մը ուամիկ
ժողովրդոց զօրաւոր բազմութիւն մը
Գարիդի փողոցներուն մեջը ապստամ
քութիւն կընեին ու գացած տեղելնին
յափշտակութիւն կընեին : Գոնոբարդ
իր զօրապետներէն մեկը զունդ մը
դորքով խրկեց որ երթայ տարտընէ
ան ապստամբները : Զօրապետը ու

ոլքատամբներուն դէմ եղած օրէնքը
 անոնց առջել կարդաց , ու հրաման
 ըրաւ որ տեղերնին երթան : Անոնք ա-
 նու ըրածին վրայ խնդացին : Ապառ-
 նացաւ կրակով պատժել , անոնք
 ծաղը ըրին գինքը : Ակսեց առանց
 զնտակի հրացանները կրակել անոնց
 վրայ : Երբոր հրացանները մէկզմէկու-
 ետեւէ կըպարապըվէին ու մարդ մը-
 չինկաւ , ապստամբաց խումբը սկսեց
 խնդալ ու ծաղը ընել անոնց անզօր
 աշխատանքները : Ա երջապէս խըր-
 կած դօրապետը պարտաւորեցաւ գըն-
 տակներով լեցունել հրացանները :
 Տայց հիմայ ապստամբ երուն կիրքը
 անանկ վառած էր , ու անանկ սրբվե-
 ցան հրացաններուն անվնաս ձայնին ,
 որ հաստատուն կեցան դէմ դրին գըն-
 տակներուն դալուն : Կամաց կամաց
 ոգի առնելով՝ ըլատրաստըվէր էին
 զնտակներուն դէմ կենալու : Ա երջա-
 պէս մեծ պատերազմ մը բացվեցաւ ,
 և անհամար կոտորած եղաւ , մինչեւ

որ խառնիճաղանձ մարդոց կատղած
բաղմութիւնը ցրուեցաւ :

Ուրիշ անգամ մը երբոր Փարփղե
ապստամքներուն ըրած յափշտակու-
թիւնները վախ կրծդէինկոր քաղաքին
մէջը , զոնոբարդ ատեն չանցուցած
քանի մը թնդանօթներով վրանին
գնաց : Ենոնց եղած տեղը հասածին
պէս անմիջապէս զօրքերը աջ կողմը
ու ձախ կողմը բաժնըվելով ան զար-
հուրելի թնթանօթները ապստամք
խռւժանին վրայ սկսեցին պարպել :
Մէկ խօսք մը չի խօսվեցաւ , մէկ
վայրկեան մը տարակուսանքով չան-
ցաւ . Պոնոբարդը միայն թնթանօթ-
ներուն ձայնովը տնոնց հետը խօսե-
ցաւ , և ամբոխին ամուր միաբանու-
թիւնը թնդանօթին գնտակովը Ճեղ-
քըվեցաւ : Վապստամբաց խումբը
պատրաստ չի գտնըվելով ասանկ ա-
նակնկալ պատահման մը , ու եղած
կռտորումին զարհուրելով , անհնարին
արագութեամբ ամէն մէկը մէյմէկ

կողմը փախան : Անկէ ետև սկսեց
 առանց գնտակի կրակել թնդանօթ
 ները , որոնց ձայնը իրարու ետևէ ու
 ըստումի նման կերթար փողոցներնուն
 մէջէն , և հինգ ըոպէին մէջը ցիրու-
 ցան ըրաւ ան ապստամբները : Ասանկ
 էր ահա աս երևելի մարդուն քոնած
 ճամբան , որով հասարակութեան մը-
 տացը վրայ անանեկ տիրապետեց՝ որ
 զրեթէ մարդկային պատմութեան մէ-
 ջը անզուզական մէկ մը եղաւ ինքը :
 Վարդուն մէկը վերջը իրեն ըսաւ թէ
 առաւել ողումածութիւն էր , թէ որ
 առաջ առանց գնտակի փորձէր , ու
 ետքը եթէ հարկաւորէր կրնար սաստ-
 կութիւն բանեցունել : Բայց ինքը ար-
 դարապէս պատասխանեց՝ թէ անանկ
 դանդաղկոտ եղանակով մը ապըս-
 տամբները ժամանակ պիտի ունենային
 իրենց զօրութիւնը հաւքէլով դէմ
 զնելու , ու իրենց փախչելէն առաջ
 աւելի մարդ պիտի մեռնէր քան որ-
 չափ որ մեռան : Աս պատմութեանը

մէջ ցուցված սկզբունքը ընդհանրա
 սիս ամէնը պարտին գործածել
 Շշմարիտ ողորմածութիւնը կառաջ
 նորդէ մեզի՝ որ հասարակօրէն զօրաւոր
 կանոններ ձեռք առնենք : Ա՞ն մայրը
 որ առաջ կըսորդորէ , ետքը կըս
 սլառնայ , անկէ ետև կըկեղծաւորի
 պատճել , վելջը թեթև պատիժ մը
 կուտայ , միայն ինքը դինքը նեղութեան
 մէջ ձգել ու իր ընտանեացը տրտ
 մութիւն պատճառել է : Քայց ասոր
 հակառակը թէ որ պատրաստ է ան
 հնազանդութեան գործքերուն դէմ
 ելլալ , ու հաստատութեամբ որոշելը
 է մէկէն ՚ի մէկ պատճել իր դաւակը
 հարկաւորած ժամանակը , անիկա ի
 րեն ու իր երջանկութիւնը ձեռք բե
 րելու խիստ օգտակար ճամբուն մէջն
 է :

Առաւել պատրաստ է մէկ մայր
 մը ասանկ վտանգաւոր ներողամտու
 թիւն ընել թէ որ իր դաւակը տկար
 ու հիւանդու բնութիւն ունի : Աս

կերպ տղաքը գրեթէ ընդհանրապէս
 կաւըըլին գէշ կըլլան : Ի՞նչպէս զար-
 մանալի բան է որ Կատուած երբ ան-
 իմանալի նախախնամութեամբ իր
 ձեռքը երբեմն տղի մը վրայ կըձգէ ու
 տկարութեան և նեղութեան մէջ կը-
 մաշեցունէ անիկա , աս պատճառին
 համար մայրը զանց կընէ ան տղին ա-
 ղէկութեանը համար ջանք ընելը , ու
 թող կուտայ որ անոր կիրքերը աՃին
 զօրանան առանց սանձի , ու անոր կամ-
 քը յամառ ու աննուածելի ըլլայ :
 Դուցէ մայրը կըկամի՞ որ իր պար-
 տաւորութիւնը իր առողջ և ուժեղ
 զաւկին վրայ կատարէ : Չեռքէն ե-
 կածը կուղէ ընել անոր կիրքերը զըս-
 պէլու , և անիկա աղէկ ու երջանիկ
 տղայ մը ընելու : Տայց ողորմելի հե-
 տանդ տղեկին բոլոր հաճութիւնները
 պիտի կատարէ , մինչեւ որ անոր կիր-
 քը զօրանայ ու զայրացումը անյաղ-
 թելի ըլլայ . և մարմինին ցաւերուն
 ու տկարութեանցը վրայ անոր մռացը

մէջ ալ էվելօք խորունկ ցաւեր ծը
 նանին : Ա՛յս , աշխարհիս վրայ որչափ
 անգթութիւն կոյ , որ դթութեան
 կամսիրոյ սուտ անունովը կըպըտըտի :
 Ո՛վ մայր , հիւանդ ու տկար զաւակ մը
 ունիս մի : Դուն առ զաւկին պահա-
 պան հրեշտակն ես , թէ որ անուշ ու
 սիրալիր հաստատութեամբ մը քու
 իշխանութիւնդ անոր վրայ կըբանե-
 ցունես : Պատժէ առ տղան՝ թէ որ
 կուզես ուրախ սրտով և յօժարակամ
 հնազանդութիւն մը սորվեցունել ա-
 նոր : Եթէ առ բանս չես ըներ , զաւ-
 կիդ ունենալու թշնամիներուն խիստ
 անողորմը զուն ես : Քու ըրածդդ ա-
 նանկ բան մըն է , որ շեփ շետակ անոր
 տկարութիւնը կըմշտնջնաւորէ ու ա-
 նոր թշուաւութիւնը կըծնանի : Եւ
 սակայն զիտէմ թէ տակաւին մայրեր
 կան որ պիտի ըսեն , « Ե՞նչ . իշխա-
 նութեամբ խօսիլ , ու նաև պատժէլ
 ողորմելի տղայ մը հիւանդութեան ա-
 տենը : Ե՞նչ անդթութիւն » :

ԱՀԱ

հոս է դժուարութիւնը : Ենգթութիւն
 է մի քու զաւակդ հեղ ու երջանիկ
 ընելու համար ձեռքէդ եկածը ընես
 նէ : Օրինակի աղացաւ , ըսենք թէ
 փոքրիկ աղջիկ մը իր ձեռքը խորունկ
 մը կտրեց : Այսը անանկ կըսիրէ
 աղջիկը որ վիրաբուժը չի կանչէր
 վախնալով թէ իր աղջկանը չի մնա-
 սէ իր երկաթ դործիքը վէրքին մէջը
 խօթելով և անիկա փաթթելով : Օ-
 րէ օր աս խանդակաթ մայրը կըտես-
 նայ որ կէվելնայ ու կըտարածի բոր-
 բոքը : Կըջանայ իր տղիտութեամբը
 թեթեցունել վէրքին ցաւը , մինչեւ
 որ խել մը օրեր չարաչար տանջը
 վելէն ետքը բժիշկը կըկանչըլի , իր
 աղջկանը կեանքը խալըսելու համար՝
 անոր վիրաւորած անդամը կտրելով :
 Են դիպուածը առաջ պատահած ա-
 տենը քանի մը բոպէ հոգ տանելով
 ու քիչ մը ցաւի համբերելով , բոլոր
 աս զարհուրելի հետեանքները պիտի
 խափանէին :

Բայց էվելօք անգթութիւն է ան
 մօրը բրածը՝ որ թող կուտայ մտաց
 բորբոքը էվելնալ ու տարածիլ ա
 ռանց խափանելու։ Որ հարկաւորած
 ստենը ժամանակաւոր պատիժով մը
 զաւկին յամառ կամքը սանձահարե
 լու՝ ու բորբոքը իջեցունելու տեղը,
 թող կուտայ որ բարոյական հիւան
 դութիւնը ան տատիճանը զօրութիւն
 ստանայ՝ մինչեւ որ անքժշկելի ըլլայ։
 Ասկից առաջ եկած հետեանքները
 ինչպէս չարագուշակ և աղէտալի են,
 որոնք մարդուս անմահ բնութեանը
 կըներգործեն, ու առաջ կերթան
 յաւիտենականութեան մէջը։ Ուրիշ
 մէկ անգթութիւն մը չի կայ որ ասոր
 ովէս վնասակար ըլլայ։

Ասկայն թող չի կարծրվի թէ խըս
 տութիւն բանեցունելը կըզովենքկոր։
 Ասիկա հարկաւոր բան չէ ու միշտ
 պէտք է փախչել ասկէ։ Ուող մօրը
 ձայնը սիրալիք ըլլայ ու մեղմիկ։
 Թող մայրը իր բոլոր սրտովը կարեց

կից ըլլայ իր զաւկին քաշած փորձու
 թիւններուն ու նեղութիւններուն մէջ :
 Առող պարզմտութեամբ հնարքներ
 բանեցունէ անոր զուարձութեանը
 համար բայց իր պատուական գանձը
 թող չի կործանէ , թոյլտութիւն
 ընելով անոր յամառութեանը կամ
 անհնադանդութեանը : Հնար չէ որ
 քու զաւակդ երջանիկ ըլլայ , թէ որ
 չի սորվի իր կիրքերը զապել , ու քու
 կամացդ հնազանդ ըլլալ : Կուզես որ
 քայլցրութիւն հեղութիւն և սէր՝ և
 անկէ առաջ եկած ուրախութիւնը
 ունենաս ըոլոր քու տանդ մէջ . բայց
 թէ որ կուզես քու զաւկըներդ ու դուն
 քեզ երջանիկ տեսնալ , պարտիս
 դաւկըներուդ հիւանդութեան ատենը՝
 ինչպէս նաև անոնց առողջութեանը
 ժամանակը , բաւական հաստատու
 թիւն ունենալ անոնցմէ պատշաճաւոր
 վարք մը ու հնազանդութիւն մը պա
 հանջելու քու հրամաններուդ :

Ուրեմն հաստատուն եղիր քու
 16 կ

պարտքերդ միօրինակ կատարելու :
 Այս այլ աշխատանքը պատկիղ կառավար-
 ութիւնը քեզի ցաւալի ընելուն հա-
 մար, քու զաւակղի կառավարելէն բնաւ-
 ետ մի կենար : Ատոյգ է թէ Աստ-
 ուածային նախախնամութիւնը իմաս-
 տութեամբ կարգադրեց, որ մօրը սիր-
 ող կոկը զաւակը պատժած ատե-
 նը : Ան որ առանց կարեկցութեան
 առանց տրամութիւն զգալու կըպատ-
 ժէ, շիտակ ողիով մը չի կընար այսո-
 ժել : Ոինչև անգամ մեր Արկեաւոր
 Հայրը իր զաւկըները կամքով չի
 պատժեր : Բայց ասոր համար առանց
 խրատի կըձգէ՞ մի մեզ, ու առանց
 պատժելու թող կուտայ մեզի մեղաց
 մէջ յառաջանալ : Ոեզի պէտք է
 ջերմեւանդ աղօթքով զօրութիւն և ի-
 մաստութիւն խնդրել իրմէն, ու բա-
 րեզաշտութեամբ մեր պարտքը կա-
 տարել : Յօժարութիւն ունենանք ա-
 րունած սիրտեր ունենալու, թէ որ ա-
 սանկով կընանք մեր զաւկըները խա-

լըսէլ ան կիրքերուն բռնութենէն , ո
 րոնք առանց զսպրվելու պիտի առերեն
 անոնց օգտակարութիւնը և խաղաղու-
 թիւնը : Քիչ մը ժամանակ առաջ
 տղայ մը վտանգաւոր հիւանդութեամբ
 մը բռնըվեցաւ : Աս տղան իր ծնողա-
 ցը խիստ սիրելի էր , և ըստ մեծի
 մասին խիստ հնագանդ : Բայց աս
 դժուարութեան ու ցաւին մէջը չու-
 զեց առնել ան դեղը որ առանց ժա-
 մանակ անցունելու հարկաւոր էր տըր-
 վիլ իրեն : Հայրը իր կամքին վրայ
 հաստատ գտնալով անիկա , մէկէն՝ ի
 մէկ իր հիւանդ և նեղութիւն քաշող
 տղան պատժեց : Աս հանգամանքնե-
 րուն մէջը , և վախնալով որ կարելի
 է թէ իր տղան մեռնի , սաստիկ նե-
 ղութիւն եղած պիտի ըլլայ հօրը իր
 սիրելի որդին պատժելը : Բայց աս-
 կից հետեւեցաւ որ տղան սորվեցաւ
 թէ հիւանդութիւնը հնագանդութեան
 արդելք մը չի կրնար ըլլալ : Եւ
 քանի որ հիւանդութիւնը տեսեց՝ ինչ

գեղ որ տրվել իւեն պատրաստ էր
առնելու , և ինքը համբերող ու
հնազանդ էր : Ասանկ տղան շուտով
ըռընտցաւ : Վրդեօք մէկը կրսէ՞
թէ առ հօրը ըրածը անդժութիւն
էր : Վարդասիրական գործքերուն
մէկ երեելին էր որ հայրը կատարեց :
Իմէ որ անիկա իր պարտքը կատարեց
ին դողալով ետ կենար հո , հաւա-
նական է թէ տղան պիտի մեռնէր :

Հիմայ ամեն աս մեր ըսածներէն
յայտնի կերեայ որ մայրը իր զաւկը-
ներուն կառավարութեանը մէջ հա-
տատ և միօրինակ պարտի ըլլալ
միշտ : Պարտի պատրաստ և յօժարա-
կամ ըլլալ իր պարտաւորութիւնը
կատարելու , թէ և սաստիկ ցաւալի
ըլլայ անիկա :

. Ք . Անկառիչ մէծ որդիւնը երջանի առ-
առարկնենի ընդունեց մը իւնելու ճամբան մէջ ,
զորժութեան հասնեն ծնողոց մէջը երբեն միա-
բանութիւն չըլլունէ : Երբեմն հայրը
որ կուզէ իր պարտքը կատարել ,
մայրը տկար կնիկ մը ըլլալով կըկար

Ճէ թէ իր զաւկըներուն բոլոր քաշած
 պատիմները և անոնց իւրաքանչիւր
 վայելը ութենէ զրկրվելը անդթութիւն
 է : Եւ երբ անոնցմէ մէկը պատժրվի,
 ինքը իր փայփայելովը վարժութեան
 գորութիւնը կը ընչայունէ, և տղին
 մտայը մէջ գաղափար մը կը խօթէ
 թէ իր հայրը անդութ և անիրաւ է :
 Հիմայ թէ որ մէկ մարդ մը ասանկ
 կնկան մը ինկաւնէ, արդարեւ ողբա
 լը վիճակի մը մէջ է անիկա : Եւ եթէ
 իր կինը չի համոզվիր թէ ասանկ
 ճամբռուն վախճանը զաւկըներուն կոր
 ծանումն է, պէտք է որ բոլոր կառա
 վարութիւնը էրիկը իր վրան առնէ :
 Շայց ես որովհետեւ հիմայ հայրերուն
 չեմ զբերկոր, անոր համար պարտիմ
 մայրերուն պարտաւորութեանցը վրայ
 խօսիլ : Ծառ անդամ կը պատահի որ
 մէկ խոհեմ և հաւատաբիմ մայր մը
 անանկ էրկան մը հետ կապված է, ո
 րուն կարծիքները և օրինակը բոլորո
 վին իր ուղածին հակառակն է : Ասանկ

դիպուածներու մէջ ոչ միայն տանը
 բոլոր կառավարութիւնը մօրը վրայ
 է, հապա հայրը անանկ օրինակ մը
 կըցուցընէ՝ որ բոլորովին կնոջը ըրած
 ջանքերուն հակառակը կըներգործէ :
 Ասիկա արդարեւ անտանելի վեճակ մըն
 է : Ասկայն հեռու ըլլայ թէ ամենեին
 անյօյս վեճակ մըն է ըսենք : Պէտքը
 չէ որ դուն յուսահատելով դադարիս
 քու պարտքդ ընելէն, հապա աս պա-
 տահմունքները թող քեզ արթընցու-
 նեն առաւել հաստատութեամբ հը-
 կելու, ու յարատեութեամբ և քա-
 ջութեամբ ջանք ընելու դաւկըներդ
 ըստ արժանոյն կրթելու համար : Օձէ
 որ մէկ կին մը խոհեմ և հաստատուն
 ըլլայ իր ջանացողութեանցը մէջ,
 գրեթէ միշտ հայրը շուտով կըվստա-
 հի անոր ըրած տնական կառավարու-
 թեանը, և ուրախութեամբ թող
 կուտայ որ դաւակաց հողը բոլորովին
 կինը իր վրայ առնէ : Ասանկ հայրը
 գրեթէ հարկաւորապէս ժամանակին

մեծ մասը տունէն հեռու է . և տունը
եղած ատենն ալ շատ անդամ՝ ըլլար
որ իր ընտանեացը ընկերութիւնը վայ-
լելու հաճութիւն մը ունենայ : Եսանի
մայրը թող իր զաւկըներուն սորվե-
ցունէ հանդարտ ու լոիկ կենաց իրենց
հօրը առջել . թող ջանայ սորվեցու-
նել անոնց ժրաջան ըլլալ , որ հայ-
րերնին տեսնայ թէ աղէկ առաջ
կերթանկոր : Չեւքէն եկածը թող
ընէ , որ հայրերնին պատուին , անոր
հնապանդին , ու անոր վրայ սէր ու-
նենան : Եմէնէն աղէկ բոնիլու ձամ-
բան ասիկա է արդարեւ , որ ապերջա-
նիկ հայրը զգաստութեան կըդարձու-
նէ : Որչափ բարեկարդ և հաճէլի
ցույընես անոր իր տունը , այնչափ
կըպահես անիկա ան տեղպանքէն՝ ուր
որ արժան չէ իրեն ոտք կոխել :

**Ճշմարիտ է թէ մէկ ուրիշ դժուա-
րին վեճակ մը չի կայ՝ քան թէ ան ,**
որ հիմայ կըստորսպրենքկոր : Իսայ
շատ փորձերով ստուգված է թէ նաև

տա դժուարութիւններուն հնար յաղ ։
 թել է ։ Շատ դիպուածներ կը պատաւ
 հին որոնց բոլորովին քաջութեամբ
 կը աղթէ մայրը, և իր ընտանիքը ա
 ռաքինութեան ու երջանեկութեան կը
 հասցունէ խոհական կառավարու
 թեամբ մը : Օրինակի աղագաւ, իր է
 րիկը անտանական անբարեխտունու
 թեամբ կեանքը կանցունէ . և հարկա
 ւոր չէ աս տեղոնկարագրել ան ցաւա
 լի տեսարանները՝ որոնց մլջէն ասանկ
 մլկ մայր մը պարտաւոր կրլայ անց
 նիլ : Ասկայն կընայի կըտեսնայ որ իր
 ընտանեացը բարելաւութիւնը բոլո
 րովին իրմէն կըկախվի, և հետեւ ապէս
 իր սիրոը կըքաջալերէ հաստօտուն
 կերպով ձեռք զարնել իր պարտա
 ւորութիւններուն : Կըսկըսի կատար
 եալ հնագանդութիւն սորվեցունել
 իր զաւկըններուն անոնց մատղաշ ման
 կութեան առենը : Վնանք իրեն կըկա
 պէ ան սիրոյ կապէ բովը, ուսկից բը
 նաւ չի սկիտի կընան քակվիլ . և իր

աշխատութիւնները խիստ առատ յա-
 ջողութիւնով մը կըվարձատրին :
 Քանի որ իր զաւկըները մեծնան, այն
 չափ ունկնդիր կըլլան իրեն և կը-
 պատուեն զինքը . որովհետեւ այնչափ
 յայտնի կըտեսնան թէ պարտաւոր են
 իրենց մօրը՝ որ իրենց հօրը անարգու-
 թենէն և թշուառութենէն զիրենք
 փրկեց : Եսանկ մօրը բոլոր տրտմու-
 թիւնները կըփարատին իր որդոցը
 կարեկցութիւնովը ու սիրովը : Օր
 ըստ օրէ իր չորս կողմը անոնց վրայ
 կընայի մայրական ուլախութիւնով
 մը՝ որ մէկ լեզու մը չի կընար պատ-
 մել : Չաւկըները կըզգան իրենց մօ-
 րը արժանաւորութիւնը և պատիւը :
 Եւ վերջապէս թէպէտ և իր վիճակը
 ցած ըլլայ, թէպէտ և իր մտքին մէ-
 ջը շատ զիտութիւն գանձած ըլլայ,
 սակայն իր բարոյական արժանաւո-
 րութիւնը և իր խոհական կառավա-
 րութիւնը որ ասանկ հաստատութեամբ
 գործածեց, կըպարտաւուեն իր զաւ-

կըները որ զինքը սիրեն , պատուեն ,
և իրեն հնազանդին :

Գեղի մը մէջ Դեկտեմբեր ամսուն
մէջը մէկ ցուրտ զիշել մը , առ տե-
սակը ընտանեաց մը մայրը՝ առանձին
կրակին քովը նստեր էր ժամը երեքին
կամ չորսին միջոցները , և կըսպա-
սէր իր էրկանը գալուն : Տղաքը բո-
լոր օրվանը աշխատութիւններէն հող-
նոծ ըլլալով՝ պառկեցան հանգստա-
նալու : Ճամը չորսէն քիչ մը առաջ
էրիկը զինետունէն եկաւ , ուր որ բո-
լոր իրեկունը անցուցեր էր իր անարգ
ընկերներուն հետ : Ետ անժամանակ
տտենը տղաքը կըկանչէր որ մօտը ե-
ղած անտառը երթան ու բեռ մը փատ
ըերեն : Ամէպէտ և տանը մէջը բա-
ւական վառելիք կար , բայց ինքը մը
տիկ չէր ըներ խօսքի , հապա ոտք կը-
կոխէր և կըհայհոյէր թէ շուտով
տղաքը փատի երթան : Մայրը տես-
նալով որ ամեննեին անօդուտ է անոր
ռւզածին դէմկենալ , կանչեց տղաքը

ու ըստ անոնց թէ հայրերնին ոտք
 կը կոխէկոր որ եղերը սայլին լծեն և
 անտառը փառի երթան : Անուշու-
 թեամբ խօսեցաւ հետեւնին, ու տրո-
 մեցաւ անոնց երթալու պարտաւո-
 րելուն վրայ - բայց ըստ թէ՝ “Ո՞խո-
 քելնիդ բերեք որ ձեր հայրն է” : Ի՞ր
 տղաքը կատարեալ մեծցած երիտա-
 սարդներ էին . բայց իրենց մօրը ձայ-
 նը լսածնուն պէս մէկէն ցաթկեցին ու
 առանց տրտունջ մը ընելու եզերը
 դուրս քաշեցին, սայլը պատրաստե-
 ցին ու անտառը դացին : Աս տղաքը
 կատարեալ հաւատարմութիւն ունէին
 իրենց մօրը դատողութեանը ու կա-
 ռավորութեանը վրայ, և գիտէին որ
 անոր հնագանդելով բանը աղէկի պի-
 տի վերջանայ : Անոնց անտառը եղած
 առենը մայրերնին իրենց ախորժակին
 յարմար ուտելիք մը պատրաստելու
 ետևէ էր, որ դառնան նէ վայելին :
 Դինով հայրերնին շուտ մը անկողինը
 ինկաւ ու քնացաւ : Աէս գիշերվան

ատենը տղաքը դոլծելնին լմրնցուցին,
ու տուն որ եկան՝ իրենց մայրը պատ-
րաստ գտան ուրախ ու զուարթ երեսով
զիրենք ընդունելու : Փայլուն կրտակ մը
կրվառէրկոր վառարանին մեջը , սեն-
եակը տաք ու հաճոյական էր : Իաց
ախորժակով մը և ուրախ սրտով մը
որ ընդհանրապէս պարտաւորութիւնը
կատարելուն հետը կընկերանայ , ան
տղաքը իրենց խիստ սիրական մօրը
հետ նստեցան՝ անոր պատրաստած
կերակուրը ուտելու , և շատ չան-
ցած խաղաղ և լոիկ քունով մը բո-
լորն աւ հանգստացան :

Շատ մայրեր աս կերպովս հոգա-
բարձու և աղատող եղան իրենց ըն-
տանեացը : Տղաքներնին ճարտարու-
թեան համար մեծցուցին , ու աղջիկ-
ներնին առաքինի ըլլալու : Եւ իրենց
պառւութեան ժամանակը բոլոր իրենց
քաշած աշխատութիւններուն պը-
տուղները առառապէս քաղեցին ,
էրախառապէտ դաւելներնուն սիրովը

ու մտադրութիւնովը : Երենց էրկանը
վրայով ունեցած հազարումէկ դժուա-
րութիւններուն համար շատ ձանձրալի
տարիներ անցուցին արցունքներու և
յուսահատութեան մէջ , մինչեւ որ
վերջապէս Աստուած իրենց տրտմու-
թիւնը փարատեց : Ուստի մի յուսա-
հատիւր՝ ով մայր , ուրիշներուն եղած
բանը քեզի ալ կընայ ըլլալ :

Աս գլուխին մէջի ըսվածներէն
կերևայ թէ տնական կառավարու-
թեան մէջ կառավարութիւն անձին
և հաստատուն կամքը երկու ամենա-
հարկաւոր բաններ են : Աս երկու
հանգամանքներովը՝ որոնք չունենա-
լը մեծ պակասութիւն է , զրեթէ ա-
մեն արդելքները հնարէ խափանել ,
ինչպէս Ճիշտ հիմայ տեսանք թէ մէկ
մայր մը աս հանգամանքները ունենա-
լով իր էրկընէն եղած ամեն դժուա-
րութիւններուն կընայ յաղթել :
Իսայց առանց ասոնց անոր աշխատու-
թիւնները և քաշած հոգերը խիստ

հաւանական է թէ ոչինչ պիտի ըլլան :

Քու հաւատարիմ ջանացողութիւններդ Աստուծոյ օրհնութիւնովը օրէ օր հաճոյական վայելչութեանց նորանոր աղքուրներ կըբանան քեզի, երրոր կըտեմնաս թէ դաւկըներդ տուաքինութեան և գիտութեան մէջ կըյաւաջանան : Քու առ կարգաւորեալ կառավարութիւնդ անտարակոյս պիտի վարձատրի անոնց սիրովը ու պատիւովը, որոնք օդտակար և երջանիկ ըլլալու համար կըմեծցունեսկոր : Աւ վերջապէս երբոր ծերութեան հաստկը դայ համնի, քու դաւկըներդ “Բարով եկար” ըսելով պիտի ընդունինքեղ իրենց տունը և իրենց սեղանը, ու ձեռքելնուն եկածը պիտի ընեն իւրենց երախտապիտութիւնը ցուցընելու, որ ընաւ հնար չէ կատարելապէս պէս հատուցանել : Անանի ուրախութիւնները հիմակու քաշված բոլոր աշխատութիւններուն և նեղութիւն-

նելուն յիշատակութիւնը պիտի ջրն
ջեն վերցունեն մեկ ծնողքի մը մոքին
մէջէն : Արդ աս յոյսերը թող քեզ
քաջալերեն , քու պարտաւորութեանդ
համբուն մէջը ուրախութեամբ ա-
ռաջ երթալու :

ՏԵՇԻԽՈՒՅ:

Պատուի առաջանաւուն և յանցանաւուն
կըսաւ :

Պատանեկան կառավարութեան մէջ
շատ պակսութիւններ կան , որ
պորտէ 'ի պորտ իջնալով մինչև մեր
օրը հասան , ու դրեթէ բոլոր աշխար-
հի վրայ տարածեցան : Աս պակսու-
թիւնները անանկ ընդհանուր են և
մենք երկար ժամանակէ 'ի վեր անանկ
ծանօթացանք անոնց որ մեր ազքին
չերեւար անոնց յայտնապէս անպատ-
շաճ ըլլալը :

Հոս տեղս պլարտինք ծնողքները
զգուշացունել աս պակասութիւններէն
մէկ քանիներուն վրայով :

Աախ. Տռոյ առջեն երենց ձբայովը մէ ենու-
նէր : Մէնք շատ պատրաստ ենք խոր-
հելու թէ տղաք չեն հասկընար ինչ
որ մենք մէկզմէկու կրխօսինք, ինչու
որ դեռ կարող չեն խօսակցութեան
խառնրվիլ : Բայց մէկ տղի մը լեզու
հասկընալը, խօսիլ սկսելու կարող
ըլլալէն շատ առաջ է : Ես շատ զար-
մացայ աս բանին վրայ երբոր փորձե-
ցի : Փոքրիկ տղայ մը՝ որ դեռ կարող
չէր մէկ բառ մը խօսիլ, սենեակին
մէջը գետնին վրայ կըսողարկոր . աս
տղին ձեռքը կտոր մը թուղթ տալով
ըսին իրեն որ սենեակին մէկալ կողմը
տանի ու աթոռին վրայ դնէ : Տղան
կատարեալ իմացաւ իրեն ըսված բա-
նը, ու սողալով գնաց թուղթը աթոռին
վրայ դրաւ : Ասանկ քանի մը փորձե-
ըը ամէն մարդ կըհամոզէն, թէ տղայ
մը իր մտքին զաղափարները յայտնե-

Եռ կարող ըլլալէն առաջ ի՞նչպէս
կընայ իմանալ : Եւ ստկայն իրեք
կամ չորս տարու տղի մը առջևը ծը-
նողքները անոնց խելքով ըստած կամ
ըրած բաները կըստմեն . մինչեւ
անդամ երբեմն անհնաղանդութեան
գործքերնին ծիծաղ երեսով կըսիշեն :
Հետևեալ խօսակցութիւնը ատենօք
մէկ մայր մը ըրաւ տեսութեան եկող
բարեկամի մը հետ , իր իրեք տարե-
կան տղան քովը կայնած ատենը :
“Յակոբիկը ինդալով պատասխան տը-
ւաւ . “Վզէկ է . բայց անանկ անըզ-
դամէ” որուն նմանը տեսած չես . չեմ
կընար անիկա զսպել” :

“Ինչու , ըստ հիւրը , Յակոբիկը
պինտ գլուխ չի նմանիրկոր” :

“Չէ . պատասխանեց մայրը . գէշ
ընութիւններ չունի , բայց անանկ կը-
սիրէ անառակութիւն ընել՝ որ ընտ
չեմ կընար ես զիս մտիկ ընել տար իւ-

բեն՝ ըստ խնդալով : Գիտէ թէ ձեռք
դպցունելու չէ սեղանին վրայի ժամա-
ցոյցին . բայց ձեր դալէն առաջ դը-
նաց մէկ մատը ժամացոյցին տպակիին
վրայ դրաւ , ու շիտակ երեսս սկսեց
նայիլ : Ըսի երեն որ ձեռքը քաշէ ,
ու ինքը մէկալ մատն ալ դրաւ : Գտ-
նացի ժանիքով մը երեսը նայիլ ,
բայց ան կենալուն տեղը , սկսեց բո-
լոր ձեռքը ապակիին վրայ քսէլ , ու
ետքը վազեց մէկ զի գնաց կրցածին
շափ սրտանց խնդալով : Եսիկա կար-
ծեմ թէ քիչ մը իս նեղացունելու
համար ըրաւ . ասանկ անդպամ տղայ
մըն է :

Աս պատմութիւնը առաջ ըերինք
որ աս գլուխը կարթացող կամ լսող
մայրելը աղէկ իմանան թէ ի՞նչ կու-
ղենք նշանակել աս մէր տըւած զգու-
շութիւնովը : Հիմայ բան մը չի խօսէ-
լով ասո մօրը անհաւատարմութեանք
վրայ որ ասանկ անհնազանդութեան
զործքելուն թոյլուութիւն կընէ ,

ի՞նչպէս վնասակար պիտի ըլլայ աղին
մտացը , լսել թէ իր վարքին վրայով
աս կերպովս կրխօսվի ու կրգովվի ան :
Աս անզգամ տղան էվելօք հաճեցաւ
ան սլատմութեանը քան թէ մայրը և
հիւրը . և անկից եղած տպաւորու
թիւնը իր մտացը մէջ , խիստ զօրաւ
որ էր . ինչու որ անհնազանդութեան
նոր դաս մը սորվեցաւ , որ շուտով
մունալիք չունի :

Անհամար մանը մունը խորաման
կութիւններ կան որ տղաք կրգործեն ,
որոնք խոժուաղեմ նայվածքի արժաւ
նաւոր են , բայց անխոհեմ մայրելը
ան բաներուն վրայ կրխնդան : Աս բա
ները որ տղայոց մտաւոր արագութիւ
նը և ձարտարութիւնը կրցուցընեն ;
յիմար մօրը հպարտ սրտին հաճելի
կրլան : Ասոնք կրցուցընեն թէ աղեկ
մշակութիւն ընդունելու մտաց տէր
են տնոնք , եթէ ըստ պատշաճի ա
ռաջնորդըվին ու զսպըվին : Ասոնցմէ
'ի զատ կան տղայական զուարժալի ու

սիրալիք արարքներ աւ որոնք բոլո
 րովին ուրիշ կերպ են, և ամեն կեր-
 պով հաճելի են . և ասոնք ոչ միայն
 մոռքին օրութիւնը կըցուցընեն, հա-
 պա նաև տղին աղեկ բնաւորութեան
 տէր ըլլալը : Օ՞նողքները իրարու հետ
 կըխօսին ան անհամար մանտրատիկ
 պիպուածներուն վրայ, որ ամեն օր
 ըերկրութիւն կըպատճառեն իրենց :
 Տայց թէ որ ան վերը ըսված երկու
 բաներուն մէկը տղին առջեը խօսվի
 ու գովվի, անոր պզտի սիրտը կուռե-
 նայ կըփքանայ ունայնութեամք : Խե-
 թե շողոքորթութիւնը շատ անդամ
 ինչպէս զզուելի ինքնահաւանութիւն
 մը կըպատճառէ նաև մեծերուն : Ար-
 չափ քիչ անձինք կըգտնըլին որ դո-
 վասանութիւն տանելու կարող ըլլան:
 Անայնասիրութիւնը մէկ մեղք մընէ,
 որ գրեթէ ամեն մարդու վրայ կըգտնը-
 վի : Աչ յետին աղքատը ու ոչ հա-
 րուստ մեծատունը անոր զօրութենէն
 ազատէ : Եւ ինչպէս մէկ տղայ մը ա-

ուանց վնասելու կրնայ տանիլ ան դու
 վասանութիւնը , որ այսչափ մարդիկ
 կործանելու պատճառ եղաւ : Տղայոց
 վրայ յաճախ տեսնըված ինքնահաւա
 նութեան մէկ պատճառը աս տեղս է :
 Օաւկըներնիս կըշողքորթենք , ա
 ռանց զգուշալու թէ անոնք անյագ
 ցանկութեամբ մը ներս կըծըծենկոր
 շողքորթութիւնը : Չենք հաւատար
 թէ անոնք որչափ իմացողութիւն ըս
 տացած են : Ճշմարիտ է որ զբեթէ
 բոլոր տղաք ընդհանրապէս իմաստուն
 կարծրված են իրենց ծնողքներէն : Եւ
 մէկ մայր մը շատ անգամ առանց զգու
 շանալու իր իրեք կամ չորս տարեկան
 դաւկին առջելը կըխօսի , ինչպէս որ
 անոր մանկութեան առենը ամիսներով
 անոր քովը խօսեր էր : Ես նիւթին
 վրայ զգուշութիւն ընելը որչափ հար
 կաւոր է նէ , մէկ ըովէ մը մտածելով
 յայտնի կըլլայ ամէն մայրերու : Տղին
 քովը թող մէկ բան մը չըսվի , որ ա
 նոր ունայնասիրութիւնը չի գրգռէ :

Եսայէ որ ըլլայ թէ ինքըզինքը երեւ
լի բաներ ընող կամ ըսող , և ուրիշ
տղոցմէ բարձր կարծէ :

Բայց թէ և մայր մը կարող ըլլայ
իր լեզուն զսպէլ , էվելօք դժուարին
է ուրիշներուն լեզուն զսպէլը : Ըստ
հիւրեւ ամէն օրվան ընութիւն ըրին
իրենց , գացած տեղերնին տղաքը
փայփայելու : Զի՞նայէլով թէ ինչ
պէս կըվնասին անոնց մատաղ ու բա-
նի ընդունակ մխոքերը , մխայն կըխոր-
հին ծնողացը հաճոյ ըլլալ : Վեղեցիկ
տղաքը մանաւանդ առ կերպովս կաւ-
ըլվին : Կ'նչպէս հասարակ բան է զե-
ղեցիկ դէմք ունեցող տղի մը գէշ կիր-
քի մը տէլ ըլլալ : Ես ատենօք պղոտի
տղայ մը տեսայ որ անսովոր գեղեց-
կութիւն և կայտառութիւն կար իր
դիմացը վրայ : Ով որ ան տունը կը-
մըտնար՝ տղան կըդիտէր , և անոր գե-
ղեցկութեանը վրայ կըխօսէր : Ոէկ
օր մը պարոն մը գործով ան տունը ե-
կառ , ու խօսքի զբաղած ըլլալով՝ տը-

զին վրայ ան նկատումը չըրաւ՝ որոն
անիկա սորված էր, և որ հիմայ կը ս
պատէր անկից ընդունելու իրը թէ իւ
րեն աբժանաւոր իրաւունքը : Ունայ
նասէր փոքրիկ տղան շատ ջանաց պա
րոնին նկատումը շարժելու, բայց չի
յաջողելով՝ վերջը պարոնին դէմը
զնաց կայնեցաւ ու ըստ թէ, « Չէս
նայիր թէ ինտոր գեղեցիկ եմ ես » :
Իրաւ շատ տղաք իրենց ունայնասի
րութիւնը աս կերպովս յայտնի չեն
ըներ, բայց խիստ հաւանական է որ
իրենց ներսիդին ասանկ կըզգան :

Իրաւցունէ պարտաւորութիւնն է
հաւնիւ տղայոց՝ երբոր աղէկ բան մը
կընեն, ու չի հաւնիւ՝ երբ գէշ բան
մը կամ յանցանք մը կըզործեն : Բայց
մեծ զգուշութիւն բանեցունելու է
պահպանել տղան՝ որ չըրայ թէ իր
խոնարհութիւնը կորսընցունէ, որնոր
մեծ բան մըն է իրեն : Աս պատճա
ռաւը շատ անդամ դժբաղութիւնն է
տղի մը չափազանց գեղեցիկ ըլաւ :

Շատ դժուարին է շողօքովթութեան
զէշութիւններէն ետ պահէլ անիկա ,
և ան իր ունեցած գեղեցկութիւնը՝ որ
Վստուած պարզեց իրեն իրը մէկ
օրհնութիւն մը , մեծ անէծք մը կը լ-
լայ իր դլխուն :

Երկրորդ . Օդ-իւնելու-ր շոր բան
գիւղնալ ճանալ : Աս տեղս դարձեալ
պարտինք խօսիլ փառասիրութիւնը
արթընցունող վտանգին վրայ : Չի
կայ մէկ կիրք մը որ ասոր պէս ընդհա-
նուր ըլլայ , կամ էվելօք դժուարու-
թեամբ զսպըվի : Երևելի քարողիչ
մը անգամ մը ամպիոնէն վար իջնա-
լուն , ժողովուրդին մէկը իրեն մօտե-
նալով տրւած քարողը սկսեց մեծա-
պէս գովել : “ Օքոյշ կեցիր , բա՛-
րեկամ , ըստ քարողիչը , ծոցս արեթ
կայ ” : Կուղէր ըսել թէ , գովութիւ-
նը նման է կրակի , որ շուտով կը ը-
սընկցունէ արեթը : Եւ թէ որ ըա-
րեպաշտ ու աղօթառէր ծերունի կար-
դաւորի մը սիրտը ասանկ դիւրու-

թեամբ կըրբոնկի , մեծ վտանգ չէ մի
 քու զաւակու ան հիւրերուն առջեք
 հանել , որոնք անշուշտ պիտի գովա-
 րանեն անոր ըրածները : Ծսենք թէ
 քու տղիդ քանի մը հոգեւոր տա-
 ղեր սորվեցուցիր . ինքը պարկեշտ և
 խոնարհ է , ու շատ վայելուչ կերպով
 կերգէ անոնք : Բարեկամմը կուգայ
 և ղուն կըխնդրես քու տղիդ որ իր
 սորված տարերը երգէ . ան ալ կը-
 կատարէ քու խօսքդ : Ո՞ինչե աս
 տեղս գուցէ վնաս մը եղած չէ : Բայց
 երգը լմբնցածին պէս բարեկամդ կը-
 կըսի գովարանութիւն ընել : Շատ
 չանցած ուրիշ բարեկամմըն ալ կու-
 գայ , ու անոր ետեէն մէկ ուրիշը ,
 ու նոյն բաները շարունակ կըկրկնը-
 վին , մինչե որ քու տղադ իր ըրած
 բանին վրայով հպարտանալ կըսկը-
 սի : Ա՞ն երգը՝ որ անոր սորվեցուցեր
 էիր իր սիրուը առ Ծատուած առաջ-
 նորդելու , ուրիշ բան ըրնէր՝ բայց
 հպարտութեամբ կըլեցունէ իր սիրու

տը : Եսանկ չի պիտի՞ ըլլոյ մի : Աեկ
տղայ մը ի՞նչպէս կընոյ դիմանալ ա-
սանկ սաստիկ փորձութեան մը : Կըն-
նոյ ըլլալ որ ծնողքները իրենց զաւ-
կըներուն ցուցընեն , թէ իրենք անոնց
մուաւոր ճարտարութիւնը տեսնալով
կուրախանան կըբերկրին : Աւ միայն
առջափս բաւական է անոնց սիրտ տա-
լու : Բայց տղաքը երբոր անխտիր և
անխռչեմ գովութիւններ կընդունին
բոլոր տեսութեան եկող բարեկաննե-
րէն , ալ անշուշտ պիտի հալարտա-
նան անոնք :

Այսու ամենայնիւ պիտք է խոստո-
վանիլ թէ տղոցմէ ոմանց վտանգը ու-
րիշներուն վտանգէն մեծ է : Ոմանք
շատ քաջալերութեան կըկարօտին ,
ուրիշները միշտ զսպրվելու կարօտ
են : Ո՞վ չի նկատեց փառասէր տղի
մը գործոծ հազարումէկ վարպետու-
թիւնները , պարզապէս ուրիշներուն
հետաքրքրութիւնը իրեն վրայ ար-
թւնցունելու համար : Ո՞վ չի տեսաւ

անանեկ տւրած տղայ մը , որ գիրք մը
 առնէ կարդալու , ու երբեմն իր աչքը
 զիրքին երեսէն ծածկաբար մտիկ ը-
 նող հիւրերուն վրայ ձգէ , տեսնալու
 թէ արդեօք իրեն ուսումնասէր քնու-
 թիւնը կընկատէ՞նկոր մի : Եւ ի՞նչ-
 պէս կարելի է ասանկ տղայ մը օտար-
 ներուն առջել հանել : Գուցէ երբե-
 մն համեստ տղի մը քաջալերութիւն
 ըլլայ խոհեմ բարեկամի մը առջել մե-
 ղեղի մը կամ տաղ մը երգել : Չոք
 օրինակ ժողովրդապէտը կամ քահա-
 նան պէաք է որ իր հօտին կամ ժողո-
 վուրդին զաւկըները հայրական սիրով
 խնամէ : Ու թէ որ տուն դայ , ընտա-
 նեայ մեջը օտարական սեպվելու չէ
 ան : Տղաքը թող իրեն երևան հա-
 մարձակութեամբ ու սիրով . ու թէ
 որ ինքը իր Տէրոջը ողին ունի՝ զգու-
 շութեամբ պիտի նոյի շողորքորթու-
 թիւն չոնել , հապս պիտի ջանայ
 միտքելնին վսեմ խորհուրդներու ա-
 ռաջնորդելու անոնց երդած մեղեղի շ

վրայով : Իսայց տղաքը մեղի պար-
ծանք ընելու ու անոնց ունեցած կտոր
մը ըմբունումը ամէնուն ցուցընելու
սովորութիւնը արդարեւ պարսաւելի
բան է :

Կան երկու ծայրեր , որոնցմէ խիստ
հարկաւոր է զգուշանալ : Ես ծայրե-
րուն մէկը՝ տղաքը բոլորովին ընկե-
րութեան մէջ չի մտցունելն է . և
միւսը՝ միշտ ընկերութեան մէջ խօ-
թելով անոնք՝ անոնց ներկայութեամ-
բը և անդադար զրոյցներովը բարե-
կամներնիս ձանձրացունելն է : Օձէ
որ կըկարծենք թէ մենք ընկերներ-
նուս հետը հանգիստ կենակցութիւն
ընելու համար՝ զաւկըներնիս իբրև
նեղութիւն տուողներ պարտին մէկդի
քաշվիլ , թէ որ քանի մը բարեկամ-
ներուն դուռնէն ներս մտնալը՝ իբրիկ-
վան ժամերը մէյտեղ անցունելու հա-
մար , անոնց անմիջապէս ուրիշ սե-
նեակ մը քաշվելու նշան է նէ , ինտոք
կրնանք յոյս ունենալ թէ անոնք պի-

տի բացվին յառաջոնան , կամ ընկերութեան հետ ի՞նչով կենակցելու կերպը սորվին : Պարտին ականջ դընել զրուցված խօսքերուն՝ ու իրենց մեծերուն վարքը նկատել , որ իրենց միտքերը և վարքն ալ յառաջանան : Քիչ մը ժամանակ առաջ պարոնին մէկը լսեցի որ մէկ բարեկարգ ընտանիքի մը վրայով կըխօսէր , որոնց հետը տեսներվելէն նոր դարձեր էր : Անընտանիքը գիտէր որ ան իրիկունը նոյն պարոնը հոն սլիտի երթայ տեսութեան : Երբոր դնաց և սենեակէն ներա մտաւ , իրեք հատ մանտրտիկ տղաք տեսաւ , որոնք լոիկ և հանդարտ նստէր էին կրակին քով : Այլրերնին մէկալ կողմը նստէր էր կարը իր ձեռքը . և հայրերնին տեղէն կըցաթկէր կոր եկող հիւրը դիմաւորելու : Տղաքը ժամի մը չափ կամքիչ մըն ալ էվել նստան , ականջ դնելով ամէն մէկ զրուցված խօսքերուն՝ որ իր ծնողը և ան պարոնը կընէին : Ամենեւին մէկ

բան մը չքրին՝ որ անոնց խօսքին ար-
 գելք մը ըլլային . հապտ իրենց ներ-
 կայութեամբը և խնդում երեսներովը
 նոյն երեկոյին վայելչութիւնը էվել-
 ցուցին : Ճամը երկուքին մայրերնին
 ըստ թէ , « Տղաքս , ժամը երկուքն
 է » : Եռանց մէկ ուրիշ խօսքի մը տը-
 ղաքը տեղելինուն ելան , և դիշեր բարի
 ըսելով սէնեակէն դուրս ելան . մայ-
 րերնին ետևնուն դուրս գնաց , և քա-
 նի մը ըսպէէն ետև նորէն դարձաւ :
 Հիմայ որչափ վայելչութիւն կայ ա-
 սանկ մէկ ընտանիքի մը մէջ . և
 որչափ օգուտ կըքաղն տղաքը ու կը-
 յառաջանան , իրենց մեծերուն ընկե-
 րութեանը մէջ դանըլելու սորված
 ըլլութ : Ես ճամբովս կըսորվին խո-
 նարհութիւն . ինչու որ կըտեսնան թէ
 իրենք ուրիշներէն որչափ քիչ բան
 զիտեն եղեր : Շատ բաներու տեղեակ
 կըլան , և իրենց միտքերը կուժովնան
 ան խօսակցութիւններով՝ որ կըլսեն :
 Իրենց վարքը աղէկի կըյառաջանայ ,

ինչու որ տղաքը էվելօք կըսորվին օ
լինակով քան թէ խրատով : Իմէ որ
աս հաճութիւնները դուն ալ կուզես
վայելել , և աս օգուտնները քու զաւ
կըներուդ ընել , անշուշո գիտցիք որ
անոնք ’ի ընէ աղէկ կառավարութեան
տակ առաջ պիտի ըլլաս : Ե՞նկից է
վել անյուսալի բան ըըլլար , որ մէկը
կընայի թէ իր զաւկըները ընկերու
թեան մէջ ըստ պատշաճի պիտի
վարվին , թէ որ ուրիշ ժամանակ ան-
սանձ անզսպելի են :

Կան ծնողքներ՝ որոնք գիտեն կ-
րենց զաւկըներուն աղէկ ընկերու
թեան մէջ մոնալու հարկաւորութիւ-
նը . բայց անոնք կառավարութեան
տակ առնելու կարող չուլսլով՝ երբոր
ընկերութեան մէջ կըխօթեն անոնք ,
կրզրկեն ինքըզինքնին և իրենց հետը
տեսութեան եկող հիւրը բոլոր վա-
յելքութիւններէ , ու իրենց զաւկընե-
րը բոլոր օգուտէ : Եսանկ տեսարա-
նի մը ոչի եղած ականջները խլա-

ցունող դուռում գոչումի՞ն վրայ մտմը-
տալը անդամ անախորժ է : Տղոցը մէկ
քանին բարեկամի՞ն կունակի բարձին
վրայ կելլան՝ կամ նստած աթուն՝ ի
վար կըկախվին . մէկ քանիները կու-
լան , ուրիշները կաղաղակին : Վայ-
ըերնին մէկուն լաթերէն կըքաշէ ,
մէկալը կըչեխէ : Եկող բարեկամին
խելքը գլխէն երթալով ոչինչ տեղը
կաշխատի իր խօսքը առաջ տանել:
`Օնողքներուն ժամանակը՝ ունկնդրու-
թիւնը և համբերութիւնը կըո՞նչա-
նայ իրենց անկարգ ընտանեաց մը տէր
ըլլալուն : Բարեկամը կէս ժամի չափ
եղած ձոյնը ու աղաղակը տանելէն ե-
տեւ , կուրախանայ երբոր ձեռվ մը
անկից կըփախչի . ի՞նչ բերկըութիւն
և օդուտ կընայ ըլլալ ասանկ տեսու-
թեան երթալէն :

Չատ օդուտներ կարելի է քաղել՝
պզտի տղի մը ներսիղին հետաքրքրու-
թեան ոգի մը արթընցունելով : Ե-
նիկա մէկ աշխարհի մը մէջ մտաւ ,

ուր ամէն բան նոր և զարմանալի են :
 Վայ մէկ ժամու մէջ անանեկ բանեւ-
 րու կըպատահին որոնց վրայով կու-
 ղեն տեղեկութիւն ունենալ : Բայց
 տղայ մը խմացածին պէս թէ իր ծը-
 նողքները համարձակութիւն կուտան
 իրեն հարցմունքներ ընելու , կըսկըսի
 խորհիւ թէ մէկ գեղեցիկ բան մըն է
 ան : Վ. անդադար կըսկըսի բան հար-
 ցունել : Իր հարցմունքները մէկ օրիւ-
 նաւոր ու գովելի հետաքրքրութիւն մը
 լեցունելու համար ըլլալէն կըդադա-
 րի , և միայն կըբաղձայ իր սրամտու-
 թիւնը ցուցընել , կամ բերանը պա-
 րապ չի կենալու համար խօսիլ : Շատ
 հարկաւոր է աս մասին արդիլել տը-
 ղաքը : Իրենց ըրած հարցմունքները
 ինչ պատճառէ առաջ դալը դլխա-
 ւորապէս յայտնի կերևան : Աշ եթէ
 անպատշաճ պատճառէ մը առաջ
 կուգայ ան հարցմունքը , անսատենը
 ցուցուր իրեն թէ իր հարցմունքին
 չէս հաւնիր դուն :

Օրինակի աղաղաւ, ըսենք թէ նա
խաճաշի սեղանին վրայ՝ իրեք տարու
պղտի տղայ մը իր մօրը կըհարցունէ
թէ, “Ա՞սիկ, սուրճին ամանը ի՞նչ
բանի հարկաւոր է” :

“Ա՞ջը սուրճ դնելու”, կըսէ մայ-
րը :

“Բայց ինչու համար սուրճը ան ա-
մանին մէջը կըդնենք” :

“Անոր համար որ դիւրին է անկից
գաւաթներուն մէջը լեցունել” :

Տղան իրար անցնելով՝ և չըրսդին
նայելով որ մէկ նոր բան մը գտնայ
հարցունելու, կըսէ “Հապա դա-
ւաթները ինչու համար են” :

“Անոնց մէջէն սուրճը խմելու հա-
մար”, պատասխան կըւտայ մայրը :

“Բայց ինչու համար գաւաթներէն
կըխըմեք սուրճը”, կըսէ տղան, ու աս
կերպովը մինչև նախաճաշը լրմընայ
նէ անդասդար բան մը կըհարցունէ :
Այսպէս ինչպէս որ սովորութիւն ունի,
շարունակ անոր հարցունքներուն

պատասխան կուտայ . որովհետեւ իր
 միտքը համոզվեր է թէ միշտ իր տղին
 համարձակութիւն տալու է բան հար-
 ցունելու : Առ կուրօրէն ու անխօրհը-
 դաբար աս ճամբուն հետևելով
 իր սիրտը ունայնութեամբ կըփքա-
 ցունէ , և իր տղան անտանելի շատա-
 խօս մէկ մը կընէ : Ո՞էկ հասարակ
 սկզբունք մը կամ կանոն մը կայ որ աս
 մասին մէջ կընայ մեղի առաջնորդ
 ըլլալ : Ո՞է որ տղին հարցմունքնե-
 րուն պատճառը աղէկ է , և դիպուա-
 ծը յարմարաւոր է նէ , թող համար-
 ձակութիւն տրվի իրեն ան հարց-
 մունքները ընելու . բայց թէ որ անոր
 հակառակն է նէ համարձակութիւն
 տալու չէ անոր : Տղայ մը ըսենք թէ ,
 մօրը քովը նստեր է՝ և մայրը սուրճ
 կեփէկոր . մայրը սուրճին ամսնին
 բերաներ կըբանայ , և տղան կըտես-
 նայ որ անոր մէջնը կեռակոր ;
 “Ո՞այրի՛լ , ի՞նչ բան է որ սուրճը
 կեռացունէ” , կըսէ փոքրիկ տղան :

Նոս հարցմունքնին պատճառը աղէկէ , և դիպուածը յարմարաւոր է : Եւ անոր համար իր ծնողացը մեկը իրեն կըհասկըցունէ ան քիմիքական զօրութիւնը՝ որ կըկոչվի Խուացումն : « Օքնողքները իրաւունք ունին ուրախանալու իրենց զաւկին ըրած նկատմանը վրայ . և ան հարցման պատասխանը մեկ պիտանի զիտութիւն մը կըշնորհէ տղին : Ի՞այց դիցուք թէ մեկ հիւր մը ըլլայ հոն՝ որուն հետ օգտակար բանի մը վրայ խօսակցութիւն կընէկոր հայրը . և անատենը տղան նոյն հարցումը ընէ : Եհա հարցմունքը աղէկէ , բայց ան ժամանակին յարմարաւոր չէ . ընկերութեան մեջ լուռ կենալ կըվայլէր տղին : Ուստի մայրը իր տըգին կըսէ . « Տըղաս , հօրդ խօսքը պէտքը չէ որ կտրես , պարտիս բոլորովին լուռ կենալ , և իր ըսած խօսքերուն մտիկ ընէլ » :

Ի՞այց սակայն մայրը ան հարցմունքը չի մոռնար , հապա ետքը մեկ պա-

տեհութիւն մը դանալով նորէն անոր
վրայ խօսք կը բանայ : Ենատենը տղին
ըրած հարցմունքին պատասխանը կու-
տայ , ու անոր կը ցուցընէ թէ մեծ ան-
քաղաքավավանութիւն է ուրիշներուն
խօսքը միջահատել : Շատ բերկը ու-
թիւններ կաւրըլի և շատ արդելքներ
կը լսյ յառաջադիմութեան , թող
տալով՝ որ տղաք իրենց շատախօսու-
թիւնովը բարեկամաց խօսքերը մի-
ջահատեն :

Կան տեսակ մը ծնողքներ ալ որոնք
աս անկարգութենէն ազատ մնալու
համար , քանի մը հիւր եկածին պէս
զաւկըներնին սենեակէն դուրս կը խըր-
կեն : Ասիկա իրենց զաւկըներուն հե-
տը անարդարութեամբ վարվել է . և
հետեւապէս երբոր տարիներ կանցնին
ու զաւկըներնին կը մեծնան , անոնց
վարքերը անշնորհք և միտքերը ան-
կիրթ կը տեսնան , և ան կը լսյ միայն
իրենց վարձքը : Ասկից է որ շատ մե-
ծատուններուն ընտանեացը մէջ կո-

պիտ և անքաղցքավար տղաք կըտես
նաս : Տօւէ որ տղաքը հաճոյական և
բան հասկրնալու ընկերութենէն դուք
աքսորվին , հարկու անոնք բիլտ և
անկիրթ կըմեծնան : Ուշեմն ի՞նչ
ձամբայ բռնելու է : Բռնելու ձամ-
բադ դիւրին է . զաւկըներդ շատ ան-
գամ թող ներկայ գտնըվին երբոք
քու բարեկամներդ քեղի հետ տեսնը-
վելու կուղան . բոյց պարտին սորված
ըլլալ քաղաքավարութեամբ վորվիլ ,
լւիկ նատիլ և միտք դնել : Չի պար-
տին խօսիլ՝ բոյց միայն անատենը ,
երբ իրենց բան մը հարցըվի : Եւ ա-
մէն բանէն տւելի բարեկամներուն
առջեր քշելու չէ անոնք՝ որ իրենց
ունենդիր ըլլալը տեսնան և ուղած-
ներնուն չափ սկսեն գովաբանել ա-
նոնք :

Երբորդ . Օռ-իւներտ հ՛ ես-է-է ,
Շատերը չեն զիտեր ան չար հետե-
անքները , որ աս գործածութենէն կը-
ծընանի : Անգամ մը մէկ բժիշկ մը

տուն մը գնաց տղի մը ակտան հանելու : Փոքրիկ տղեկը ան սոսկալի գործիքը տեսնալով , ու քաշելու ցաւը իմանալով , ստատիկ վախի մը մէջ ինկաւ և չուզեց իր բերանը բանալ : Խել մը անօդուտ թախանձանքներէն ետքը՝ բժիշկը ըստ . «Կարելի է թէ հարկաւոր չէ անիկա քաշել . թող տուր քիչ մը շփեմ իմ թաշկինակովս , և ան հերիք պիտի ըլլայ . ամենեին ցաւ մը չի տար քեղ՛ շփելը” : Տղան անհաւատարիմ մարդուն խօսքին հաւտալով բերանը բացաւ , բժիշկը իր գործիքը թաշկինակին մէջը պահած ըլլալով՝ ամուր մը բռնեց ակտան ու քաշեց հանեց անիկա : Տղին ծնողքը շատ գովեցին սուտզըռուց մարդուն վարպետութիւնը : Աակայն մարդը տղան խաբեց , իր հաւատարմութիւնը աւրեց , և տղին բարոյական զգացումներուն անանկ զէն մը հասուց որ շուտով չի պիտի անցի : Ատ բըժիշկը կրնայ արդեօք նորէն մէյմալ

իր թաշկինակը տղին բերանը խօթել:
 Ասկէ ետև բժիշկին ըսած խօսքերուն
 կըհաւտայ մի տղան: Եւ երբոր իրեն
 սորվեցունես թէ սուտ զրուցելը չու-
 րութիւն և մեղք է, բժիշկին զրուցած
 սուտը իր մտքին մէջը դեռ ողջ չի
 պիտի² ըլլայ: Եւ երբոր միտքը բերէ
 թէ իր ծնողը բժիշկին սուտ զրուցե-
 լը գովեցին, չի պիտի² կարծէ թէ
 ինքն ալ իր ուղածը կատարելու հա-
 մար իրաւունք ունի սուտ զրուցելու:
 Ասանկ խարեւութիւն գործածելէն
 խիստ գէշ ըաներ կըհետեւին: Աս
 գործածութիւնը յայտնապէս կըսոր-
 վեցունէ տղին որ իր ծնողը անպատիւ-
 ընէ: Անզամմը անոնց սուտը բռնելէն
 ետև, ճշմարիտ ալ խօսին նէ անոնց
 չի հաւտար: Աս սովորութիւնը ա-
 նոր մատաղ խղճմտանքը կարէ վար
 կըձղէ, և խարեւութիւն ընելու
 վարպետութիւններ կըսորվեցունէ ա-
 նոր: Եւ ի՞նչ է արդեօք ասկից յա-
 ռաջացած օգուտը: Ա՞նչ պիտի ըլլ-

լայ, ես ըսեմ քեզի . ան է՝ որ միայն
մէկ անդամ մը ուզածնին գլուխ հանե-
ցին, տղին ակռան հանեցին :

Հազար անդամ թախանձէ, բռնա-
դատէ հարկաւորած ատենը, բայց
բնաւ խարէութիւն մի գործածեր :
Ան է որ մէկ զաւակ մը իր մօրը վրայ
հաւատատ հաւատարմութիւն չի կրնար
ունենալ նէ, անտարակոյս իրմէն ալ
հաւատարմութեան նշոյլը յուսալու
չէ : Նարաւո՞ր բան է որ մէկ մայր
մը խարէական և սուտ վարպետու-
թիւններ բանեցունէ, և նոյն ատենը
իր աղջիկը անկեղծութեան և ճշմար-
տութեան վարք մը ստանայ : Ո՞վ կըր-
նայ աս բանս մտմտալ : Մէնք պար-
տինք անանկ ըլլալ, ինտոր որ կու-
ղենք թէ մեր զաւկըները ըլլան : Ե-
նոնք մեզի՝ նայելով իրենց վարքը
կըկարգադրեն :

Անդամ մը մէկ մայր մը կըջանար
որ իր պղտի տղեկը համոզէ քիչ մը
դեղ խմելու : Դեղը շատ անախորժ

Եր և լեղի , ու մայրը տղան համոզեց
լու համար ըստ թէ գէշ համ չու-
նի ան : Ասկայն տղան չի հաւտաց իւ-
րեն . փորձով գիտէր որ անոր խօսքին
հաւտարմութիւն չըլլ ըվեր : Եզնու-
ւական բարեկամ մը որ հոն գտնըվեց-
յաւ ան միջոցին , դեղին դպալը ձեռ-
քը առաւ ու ըստ :

“Յակոբոս , ասիկա դեղ է , և շատ
գէշ համ ունի . ես չեմսիրէր անիկա
խմել , բայց թէ որ հարկաւոր ըլլար
պիտի խմեի : Կարծեմ թէ դուն բաւա-
կան քաջութիւն ունիս քիչիտիկ մը
անհամ բան կըլլելու . ասանկ չէ՞ մի” :

Յակոբոս քիչ մը իր երեսին խո-
ժուութիւնը շտկելով ըստ . “Եյ՞ .
բայց իրաւ որ շատ գէշ է աս դեղը” :
“Գիտեմ , ըստ Պարոնը . կարծեմ
թէ դուն ասկից գէշ բան մը բնաւ
բերանդ առած չես” : Ենկէ ետև պա-
րոնը դեղին դպալը բերանը դնելով ու-
նոր համը նայեցաւ , ու ըստ . “Իրաւ
որ շատ անոխործ է : Բայց եկո՞ւ նայ-

ինք անչափ կորիճութիւն չունի՞ս
մի դուն ասիկա խմելու, գիտնալով
որ այսչափ գէշ դեղ մըն է” :

Տղան տարակուսելով դպալը ձեւ-
քը առաւ :

“Արդարեւ շատ գէշ է, բայց ամեւ-
նէն աղէկ ճամբան բոլոր զօրութիւնդ
մէկ տեղ ժողվելով կտրիճի պէս մէ-
կէն անիկա կուլ տալն է”, բսաւ
պարոնը :

Յակովոս աղէկ ջանքով մը կուլ
տըւաւ դեղը : Հիմայ աս տղան ովէ-
վելօք պիտի յարգէ . իր խաբեքայ
մայրը՝ թէ ան Ճշմարտախօս օտարա-
կանը : Եւ աս ալ պէտք է նշանակել
որ եթէ տղան աղէկ վարժըլած ըլ-
լար նէ, իր մօրը տըւածը առանց
մրմրուալու մէկէն պիտի առնէր : Բայց
ան ալ Ճշմարիտ է թէ տղան ան պա-
րոնին ըրած բոլոր յորդորանքներուն
վրայ տակաւին կարելի է թէ ընդու-
նէր դեղը : Ուստի ի՞նչ ճամբայ բունե-
լու էր անատենը : Բանադրատէ տղան,

ստիպէ մինջև որ դեղը առնէ , բայց
ընտւ մի՛ խաբեր : Երբոր մեր զաւկը
ները կըխաբենք , մեծապէս կըվհաւ
սենք անոնց , և անոնց վրայ մեր ունեցած
իշխանութիւնը ոչինչ կընենք :
Ուկ հատիկ ապահով ճանապարհը
տնական կառավարութեան մէջ ,
ինչպէս նաև կեանքերնուս ընդարձակ
թէառորոնին մէջ , անկեղծ և յայտնի
վարմունքն է : Խորամանկ մարդուն
ձեռքի տակէ բանեցուցած վարպէտութիւնները և ձեերը անշուշտ վերջը
իր կործանումը կըպատճառէն :
Ենկեղծ եղիր և հաւատարիմ , և անստենը ապահով ես : Օգտակար
վախճաններ ստանալու մի միայն ճանապարհը՝ առաքինի և անխարդախ
միջոցներն են :

Չորրորդ . Օստիլներուն Հըոյ Բըտ
յանցանք մէ հոգնոր : Ետենին հարկաւոր
է չեխել ու պատժել անսնք . բայց
անոնց սիրոտ տալն ու շատ հարկաւոր
է , երբոր աղէկ բան մը կընեն : Եվեւ

լօք ջանք ըրէ ևս անոնց բարի վար-
 քերուն հաւնելդ իրենց ցուցընելու ,
 քան թէ գէշ վարքերնուն չի հաւնի-
 լոդ : Ուրիշ բան մը չի կայ որ այն-
 չափ թուլցունէ տղայ մը , քան թէ
 ան որ մէկ մայր մը շարունակ յան-
 ցանք կրգտնայ իր զաւկին վրայ : Եւ
 հաղիւ թէ մէկ ուրիշ բան մը հնարէ
 դոնալ որ աւելի վնաս հասցունէ թէ
 մօրը և թէ տղին բնաւորութեանը :
 Երկու գլխաւոր բաներ կան՝ որոնք
 մարդկային գործքերուն զօրութիւն մը
 կուտան . այսինքն յոյսը և երկիւղը :
 Եսոնց երկուքն ալ իրենց առենին
 հարկաւոր են : Աակայն ով էվելօք
 ընտրէր որ իր զաւակը աղէկ բաներ
 ընելու շարժի իր մօրը հաճոյ ըլլալու
 յոյսովը , քան թէ անիկա սրդողցու-
 նելու վախովը : Երբոր մայր մը իր
 զաւկըներուն ըրած աղէկ բանին բնաւ
 մէկ հաւնիլ մը չի ցուցընէր , և միշտ
 սխալմունք մը ըրածնուն պէս կը չի-
 նէ անոնք , անոնց սիրտը կը կոտրի և

կըթուլնան : Աըմտմտան թէ ինքըզինք նին իրենց մօրը հաւնեցունելու համար աշխատութիւնը անօդուտ է : Վնդադար չեխ լսելով՝ իրենց բնութիւնը կըկարծընայ : Եւ վերջապէս նայելով որ եթէ աղէկ ընեն և եթէ գէշմիշտ յանցաւոր կըդտնըվէնկոր , ալ ինքըզինքնին հաւնեցունելու համար ըրած բոլոր ջանքերը մէկդի կըձգեն , ու լսած չեխերնին ալ հոգերնին չըլւար :

Մայր մը երբոր հարկաւորի իր զաւկին վարքին թող հաւնի : Ամող անոր ցուցընէ թէ իր բարի վարքը ճշմարիտ երջանկութիւն մը կուտայ իրեն : Ամող իր խնդում երեսովը և սիրովը վարձահատոյց ըլլայ զաւկին , որ կըջանայ ինքըզինքը իրեն հաւնեցունելու : Վս կերպովս իր զաւկին սրտին մէջը քանի մը ազնիւ և խիստ բաղձալի գգացումներ պիտի մնուցանէ : Վնոր ներախղին մէկ սիրելի բնաւորութիւնով մը և զուարթութեան

ողիով մը պիտի զարդարէ : Օռօրինակ ասօր քու տղադ շատ խելօք կեցաւ ու հնագանդ էր քեզի : Երիկվան անիկա պատկեցունելու ատենդ ձեռքէն կըբոնես ու կըսես, “Տըղաս, դուն ասօր շատ աղէկ տղայ մըն էիր : Վեղ ասանկ խելօք և հնագանդ տեսնալս իս կատարեալ երջանիկ կընէ : Եստուած աղտի տղաքները կըսիրէ ուրոնք իրենց ծնողացը հնագանդ էն, և կըխոստանայ անոնք երջանիկ ընել” : Եսիկա մեծ վարձք մըն է տղին : Եւ երբոր քու ամէն օրվան սովորութենէդ էվել անուշ ձայնով մը “Գիշեր բարի սիրական տղաս” կըսես անոր, եր փոքրիկ սիրտը սիրով կըլենայ . և երբ իր աչքերը կըդոցէ քնանալու համար, երջանիկ է, և միտքը կրղնէ որ միշտ իր պարտաւորութիւնը կատարելու պիտի ջանայ :

Օ աւակդ հնագանդութեան բերելու և անոր սիրտը սիրով և ուրախութեամբ լեցունելու համար, անոր ը-

բած բանեցուն խոհեմութեամբ մը
 հաւնիլը առջի հարկաւոր բանն է :
 Վու իսնդում երեսդ զաւկիդ սիրտը
 թող կենդանացունէ , ու անիկա քա-
 ջալերէ իր պարտաւորութիւններուն
 մէջը : Երբոր տղադ դպրատունէն
 տուն կուզայ իր հանդերձը մաքուր և
 իր եւեսը ուրախ , քու մայրական
 սէրդ անոր ցուցընելով վարձահատոյց
 եղիլ իրեն՝ իր հանդերձը մաքուր պա-
 հելու հոգ տանելուն համար : Եսիկա
 զօրաւոր գրզիւ մը կըլլայ անոր կո-
 կիկ ու մաքուր ըլլալուն : Գարոնին մէ-
 կը սովորութիւն ունէր իր զաւկըները
 յորդորելու որ առտուները կանուխ
 ելլան , ամէնէն առաջ առտրվանց ի-
 րեն երևացողը Երտուա կանչելով :
 Ով որ կանուխ ելլար նէ , ան օրը իր
 անունը Երտուա էր : Տղոցմէն ամէն
 մէկը կըջանար որ ինքը կանուխ ելլայ
 ան պղտի անունը ընդունելու համար ,
 և տանկով ամէնն ալ կանուխ կել-
 լին՝ առտրվան մաքուր օդը վայելի

լու համար ։ Ըստ անդամ՝ կը լայ որ
 մէկ տղայ մը իր կարողութէնէն էվել
 ջանք կընէ մէկ բան մը ընելու իր
 մօրմն Եպլիս մը լսելու համար ։ Եւ
 շտու անգամ ու գետի պէս արցունք
 կը թափիվի որ ծնողքները բանի տեղ
 չեն դներ ան ջանքերը ։ Ենդադար
 պակառութիւն զտնալու ուրիշին վրայ ,
 շտու ընկերական կենակցութեանց մէ
 ջր եղած վայելչութիւնը , և շատ սի-
 րուն դաւկըներու բնաւորութիւնը
 կաւրի ։ Աս բանս անանիկ հասարակ
 կը լայ ոմանց , որ շունչ առնելու պէս
 բնութիւն կը լայ իրենց ։ Ոէկ բանի
 մը չեն հաւնիր . ամէն գործքի ու ա-
 մէն դիպուածի մէջ չեն հաւնելու բան
 մը կը փնտըռեն ։ Օտնաւոր սողուննե-
 րու պէս , պինտ աղէկ բաներէն ալ
 թոյն քաշելու զօրութիւն ունին ։ Տը-
 ղաքները ընդհանրապէս ուրիշին նմա-
 նելու ետևեէ են . անոնք իրենց բնաւո-
 րութիւնը իրենց բոլորութիւննեն կառնեն ։

Եւ մենք մեր սրտերուն մէջը ան առաջինութիւնները պարտինք սնուցանել, որոնք որ անոնց սրտին մէջը տպաւութել կուզենք : Աճէ որ կուզենք անվըրդով հեղիկ և բարեկամական զգացմունքները տալ անոնց, պինտ առաջմեր օրինակներովը պարտինք ցուցընել անոնց թէ ինչպէս ազնիւ բաներ են անզգացմունքները :

Հինգերորդ . Օքակըներդ բնու Ապագաներ ստուգուն զաներ տուշն անոնց : Եշխարհիս վրոյ տիրապետող սուելորդապաշտութիւնը խիստ զարմանալի բան մըն է : Հազիւ թէ լուսաւութեալ մարդ մը կամ տղէտ մարդ մը հնար է զտնալ որ քիչ կամ շատ ասանտեղի վախերը իր ներսիդին չունենայ : Մարդուս բնութեանը մէջ մէկ դօրաւոր ընդունակութիւն մը կայ ասքանիս հաւտալու : Եներեղյթ հողիի մը պատմութիւնը անանկ փափաքանօք կըլսվի, որ հազիւ թէ մէկ ուրիշ բան մը կընայ արթընցունել ան փա-

իտքը : Ե՞նոնք որ տղաքը կընային ,
 շատ անգամ աս պատեհութիւնը ձեռք
 կառնեն , ու կը ջանան ասանկ մտացա-
 ծին պատմութիւններ զբուցելով տը-
 ղաքը զբուցունել , կամ պատրաստուն իս-
 տուր , Երանը որոնք էր ինչ ըսելով , և
 սասնց նման սուտումուտ խօսքերով
 կը վախցունեն , որպես զի կարենան
 կառավարել անոնք : Եսանկ մեկ
 ճամբար մը բունելը ո՞րչափ անալատ-
 շաճ՝ ո՞րչափ անալժան է նէ , ալ
 հարկաւոր չէ հոս երկան բարակ զբու-
 ցել : Եմին մարդ գիտէ թէ ասոր
 վերջը բնչպէս գէշ կը լլայ : Աակայն
 քիչ մայրեր կը դդուշանան որ եթէ իւ-
 րենք և եթէ իրենց սպասաւորները
 զաւկընելնուն զլուխը աւելորդա-
 պաշտութեան բաներով չի լեցունեն :
 Ըստ անգամ չէ՞նք մի տեսնար ու-
 նանկ մարդիկ՝ որոնք անսուղի բանե-
 րուն զօրութիւնը՝ որ իրենց մանկու-
 թենեն ընդունեցին , բոլոր կեանքեր-
 նուն մէջ հետերնին կը սլատըսցունեն :

Ենիկա իրենց մէկ մեծ թշուառութիւն մը կրլսայ : Տղի մը միտքը տսանկ վտանգներէն ազատ պահէլուհամար՝ շատ զգուշութիւն աշտք է բանեցունել :

Մէկ կերպ պատիժ մը կայ որ շատ անզամ կրգործածվի , և շատ ալ պարաւելի է : Տղան մութ սենեակի մը մէջ կրգոցէն . խեղճը ասանկով կըսկըսի մութ տեղը վախնալ : Եսիկա երբեմն անանկ ազդու կերպով մը կըներգործէ անոր , որ հնար չէ համոզել անիկա մինակ մութ սենեակ մը երթալու : Երբեմն նաև քնանալնուն ետև կրգախնան մինակ սենեակին մէջը տռանց ձրագի մնալ : Բայց մէկ դժուարութիւն մը չի կայ սորվեցունել տղայոց՝ որ գիշերն ալ ցորեկվան պէս անվախ ըլլան : Եւ շատերը կըրնաս գտնալ որ խիստ մութ գիշերը տանը չորս կողմը կըսկըտըտին , և միտքերնուն ալ չին անցուներ թէ մէկ վտանգ մը ըլլայ : Թէ որ դուն քու

զաւկըներուղ միոքը ասանկ վարժել
կուզես նէ , հարկաւոր է որ գերբնա-
կան երևոյթներու դաղափարներէն
ետ պահէս , և բնաւ սուտումուտ վա-
խերով չի վախսցունես անոնք : Օաւ-
կըներդ անսնկ կերպով մեծցուր որ
առաքինի ըլլան և անվախ :

Մէկ գեղեցիկ կայտառ ու խելացի
տղէկ մը իրեք տարեկան հասակին
մէջը աղջիկ ծառայէն մութ սենեա-
կի մը մէջ զոցված ըլլալով , իր բոլոր
կեանքին մէջը խելագար եղաւ : Են-
միտ աղջիկը առաջ սպառեացաւ
տղին ըսելով թէ մէկ տեղ մը պիտի
խրկէ անիկա , թէ որ ձայնը չի կտրէ .
և վերջապէս անիկա լուցունելու հա-
մար մութ սենեակին մէջ դրաւ , դռւ-
ռը տղին վրայէն գոցեց ու իր բանը
դնաց : Քանի մը ըսպէէն ետև դար-
ձաւ սենեակը ու տեսաւ որ տղան
սաստիկ վախով բռնըլած գետինը
ինկեր էր : Իրաւ տղիկը չի մեռաւ
անկից , բայց իր բոլոր կեանքին մէ-

զը խելագար եղաւ : Տղին ձնողքը էր
 կու օրէն ետեւ երբոր իրենց գացած
 տեղէն տուն դարձան , լսեցին որ իւ
 րենց տղան բանի մը պատահեցաւ ,
 բայց անոր պատճառը չիմացան :
 Ինչեւիցէ սպասաւորը որ դրացինի մը
 աղջիկ էր , տասը տարիէն ետեւ եր
 բոր իր մահուան անկողինին վրայ հե
 տանդ պառկեր էր , չի կրցաւ խաղա
 ղութեամբ մեռնիլ՝ մինչեւ որ տղին
 մայրը կանչեց և իր ըրածը խռատո
 վանելով թողութիւն խնդրեց անկից :
 Ատկայն արդարը խօսելով մայրը ըս
 պասաւորէն էվելի յանցաւոր էր . ըս
 լոր կեանքին մէջը քաշած տրտմու
 թիւնը ու կակիծը պղտի պատիժ մըն
 էր իրեն և իր էրկանը , որ զաւկընիւ
 նին չի փորձրված սպասաւորի մը
 քով ձգելով իրենք ըստ հաճոյից պը
 տըտելու գացին : Հաղարաւոր անձինք
 խելքելնին կորաընցուցին ասոր պէս
 դիպուածներով :

Վեկ ուրիշ տղէկ մալ քանի մը

տարի առաջ վախով յանկարծակի
 մահուան պատահեցաւ : Ես տղին ծը-
 նողը մէկ իրիկուն մը բարեկամի մը
 տուն զացին տեսութիւն ընելու : Տա-
 նը սպասաւորն ալ դրացիննելուն ըս-
 պասաւորները հրաւիրեց ուրախու-
 թիւն ընելու . բայց տանը տիկինը մէկ
 զիպուածով մը ատենէն առաջ տուն
 դառնալով՝ երբոր սենեակը մարդով
 լեցուն և սպասաւորները իրենց պար-
 տաւորութիւնը զանց ըրած տեսաւ ,
 վեր վազեց իր երկու կամերեք տա-
 լեկան տղեկը տեսնալու : Տղին քովը
 որ գնաց , անոր աչքերը բաց՝ բայց
 պաղած զտաւ . շօշափեց անիկա՞ու
 շունչը հատած զտաւ : Շուտ մը բը-
 ժիշկին մարդ խրկըվեցաւ , բայց պա-
 րապ տեղը . ինչու որ տղեկը մեռած
 էր : Ապասաւորը կեղծաւորեցաւ թէ
 աննելին բան մը չիտէ ինքը . բայց
 անկողինին չորս դին նայելով վտրո-
 գուրին վրայ մէկ սոսկալի երեսյթ մը
 տեսան , որ էր բարեկենդանի խեղ-

կատակներուն դրած դիմակներուն մէկ
խիստ այլանդակը : Ասիկա ան չար
սպասաւորը դրեր էր՝ ինչպէս որ խոս-
տովանեցաւ, որ տղան լուռ կենայ,
երբոր ինքը վարը իր բարեկամներուն
հետ ուրախութիւն կընէ : Արդեօք
ան խղճալի տղան դեռ իր հոգին չի
հանած ի՞նչ վախի մէջ ինկած և
ի՞նչ քաշած պիտի ըլլայ ան սարսա-
փելի բանը տեսնալովը . ասիկա մաս-
ծելով մէկը չի կլնոր բաւական խօսք
գտնալ ան զարշելի աղջըկանը ըցած
յանցանքին մեծութիւնը բացատրե-
լու, որ իրօք սպանութիւն դորձեց :

Աս զլուխիս մէջը զաւակաց կըր-
թութեան մէջը գտնըված քանի մը
խիստ հասարակ և զլխաւոր սլակու-
թիւնները ցուցուցի . բայց անոնց ա-
մենը մէկիկ մէկիկ յիշել անհնար է :
Հաւատարիմ մայրը միշտ իր աչքը
բաց պահելու է . և պէտք է որ նայի
թէ իր ջանքը և աշխատութիւնը ի՞նչ
զօրութիւն կունենակոր իր զաւկին

վրայ : Պարտի զգուշութեամբ փնտը
 ռել ու գտնալ ամէն մէկ պղտի պակ
 սութիւնները և սխալմունքները իր
 կառավարութեանը մէջ : Պարտի ին
 քիրենը մտմտալ ու քննել իր ըրածը :
 Անօգուտ է ուրիշէն օգնութիւն դանա
 լու յոյս ունենալ առանց իր յատուկ
 ջանքին : Ուրիշներուն կարծիքները
 իրապէս օգուտ կրնան ընծայել ընդ
 հանուր կանոններ հաստատելով, մեր
 խորհուրդները շարժելով, և հաստատ
 ու հաւատարիմ ըլլալու զրգուելով :
 Սակայն ամէն ասոնց վրայ թէ որ չենք
 կամիր մենք մեզի մտածել մեր ըրածը,
 թէ որ մեր զաւկըներուն բնաւորու
 թիւնները սորվելու ետևէ չենք ըլ
 լար, և մեր անոնց մտացը մէջ որը
 պաւորած դանազան գաղափարնե
 րուն դօրութիւնը չենք նկատեր, շատ
 պակսութիւններ պիտի գործենք՝ ու
 րոնք առանց մեր իմանալուն պիտի
 անցնին, և շատ պատեհութիւններ

պիտի կորսընցունենք՝ որոնք ուրիշ
կերպով կընայինք ձեռք բերել :

ԳԼՈՒԽԸ. Զ.

Վազիստոննեական վաշտուննեան ձեռյ :

Ապիս . Վրդեօք մէկ մայր մը իր տա-
քուկ սենեակին մէջը զաւկըներուն
հետը վառարանին բոլորտիքը շար-
ված ատենը ուրիշ բան մը կրնայ
գտնալ այնչափ հարկաւոր , քան թէ
անոնց Վրիստոնէական վարժութիւն
տալը : Մէկ մայր մը իր զաւկըներուն
փոքրիկ խումբը թող իր բոլորտիքը
ժողվէ , ու անոնք Վրիստոնէական
հաւատքի մէջ վարժելու պարտաւո-
րութիւնը իր վրան թող տոնէ : Կա-
րելի թէ տղաքը դպրատունը իրենց
վարժապետէն Վրիստոնէական վար-
դապետութեան սկզբունքները փոքր
՚ի շատէ սորովին , բայց ամենահար-

կաւոք բան մըն է՝ որ «Ք.քիստոնէական»
վարժութիւնն ընդունելու յատուկ տե-
ղը տունը ըլլայ : Այսը պարտի մէկ
փութաջան և յօժարամիտ առաջնորդ
մը ըլլալ իր զաւկըները դէպի Փրկի-
չին տանելու . անոնց վոքրիկ ձեռքե-
րէն պարտի բունել՝ ու Աստուած-
պաշտութեան ճամբուն մէջը պարտի
խօթէլ անոնք :

Հնար չէ որ մօրը ունեցած դօրու-
թիւնը մէկ ուրիշը ունենայ , և անոր
վայլած դիւրութիւնները վայելէ :
Այսը իր նիւրաքանչիւր զաւկին ի՞նչ
զանազան բնաւորութիւններու տէր
ըլլալը գիտէ . անոնց ի՞նչ բաներու
վրայ խորհուրդ ունենալու ունակու-
թիւնները և միտքերնուն ի՞նչ կերպ
ըլլալը կըճանչնայ : Ասանկով ամեն-
մէկին ընդունակութեանը յարմար
վարժութիւն կընայ տալ անոնց :
Այսը միայն կընայ յառաջացունել
ան անհամար դիպուածները՝ որոնք
կընան անոր միտքը բանալ վարժու-

Ծիւն ընդունելու, և ՚Յ. քիատոնէական
 հաւատոյ տպաւորութիւններուն ըն-
 դունակ ըլլալու : Ո՞յցը անոնց հետ
 է, երբոր անոնք հիւանդութեան կամ
 ցաւի մը մէջ են : Ո՞յցը կընայ
 ձեռք առնել առտրվան խաղաղ ժա-
 մերուն ու իրիկվան խորունկ լուռ-
 թեան պատեհութիւնները : Տրտմու-
 թեան վայրկեաններուն մէջ մայրը
 կընայ անոնց միտքերը դէպի երկնային
 ուրախութիւններու շոկել : Եստ-
 ուած անանկ պատեհութիւններ տը-
 ւաւ մայրերուն, որոնցմէ ուրիշները
 զուրկ են : Ես պատեհութիւններուն
 հետը՝ մայրերը անանկ պարտաւորու-
 թիւններու տակ ալ դրաւ, որ անոնք
 հնար չէ զանց առնել կամմէկ ուրի-
 շն վրայ ձգել : ՚Յ. քիատոնէական
 վարժութեան մէծ պարտաւորութիւնը
 տանը մէջ՝ և ծնողքներէն պարտի
 հաւատարմաբար կատարվել : Տանը
 հանդարտիկ սենեակն է Եստուծոյ
 սրբազան տունը . մայրական սէլն է

խիստ պերճախօս ատենաբանը , և
հնագանդ զաւակն է կրօնական վար-
ժութիւնները ընդունելու խիստ յար-
մար ունկնդիրը : Ասիկա աղէկ թող
իմանան մայրերը , և անատենը հազիւ
թէ պիտի տեսնան որ իրենց զաւկը-
ները առանց Ք.քիստոնէական սկլզ-
բունքներով և ճշմարիտ Ա.ստուած-
պաշտութիւնով ամրանալու իրենց
տանը դունէն դուրս ելեն :

Երկրորդ . Անյբերը ողովուին ոչ առաջ
իշենք Ա.սպասածալաշունաւուն ունենան : Բայ-
լորովին անօգուտ է յուսալ որ դուն
կարող պիտի ըլլաս քու զաւկըներդ
յուղորելու որ իրենց սէրը և յօժա-
բութիւնը հանդերձեալ աշխարհին
վրայ դնեն , երբոր դուն քու սէրդ աս
աշխարհին վրայ հաստատեր ես : Ք.ու
օրինակդ քու տըւած վարժութեանդ
բոլոր դօրութիւնը ոչինչ կընէ : Ամէ
որ Ք.քիստոնէական դգացումները քու
սրտիդ մէջը չեն կենդանարար , յի-
մարութիւն է յուսալ որ դուն անոնք

քու զաւկընելուղ սրտին մէջը պիտի
տպաւորես : Անոնք քու օրինակիդ
կուզեն նմանիլ : Անոնք քու բռնած
ճամբուղ կուզեն հետևիլ : Ատ պղտի
աղջիկը որնոր Աստուած տըւաւ քե-
զի , և որ այսչափ ուրախ ու երջանիկ
է քու սիրոյդ մէջը , կըկարծէ թէ
վտանդ մը չի կայ ան զգացմունքները
ամենալ իր ներախղին , որոնք որ կը-
տեսնայ թէ դուն ունիս : Արդ՝ ավ-
մայր , առ քեզի տպաւինող զաւկիդ
վրայ կընայիս , և իրեն խանդակած
զգուանքները ու գրկախառնութիւն-
ները կըտեսնաս , ու խղճմտանքիդ
մէջը չե՞ս իմանար որ քու օրինակիդ
անիկա Աստուածմէ կըհեռացունէկոր .
ու յաւիտենական տըւամութիւններու
կըմատնէկոր :

Կըսիրես զաւակդ . զաւակդ ալ
քեզ կըսիրէ . և միտքէն անզամ չան-
ցունէր որ զուն անիկա վտանդի մէջ
կըձղետկոր , ու մեղաց և կործանման
ճամբաներուն մէջը իրեն կառաջնոր-

դեսկոր : Արդեօք ինչպէս պիտի դռ
 ղայ և սարսափի , երբոք լսէ թէ դուն
 անիկա իրեն յաւիտենական երջան
 կութենէն զըկող անօրէն մըն եւ :
 Դուն աշխարհիս հարս եղար , անոր
 հետը կապվեցար . քու սիրոդ Վատու-
 ծոյ չի տրւիր : Եւ հերիք չի սեպելով
 ասանկ դուն քու հոգւոյդ կործանողը
 ըլլալը , կուղես քու հետդ տանել
 վայերուն աշխարհը ան աղջիկն ալ ,
 որ իրը իր մայրը և բարեկամը քեզ
 կըսիրէկոր : Վ. Ղ . անանկ մէկ ծանր
 անօրէնութիւն մըն է աս որ հնար չէ
 բացատրել : Մարդ կըխորհի թէ զաւ
 կիդ ամեն մէկ խնդումը քու խաղաղու-
 թիւնդ պիտի աւրէ , ամեն մէկ սիրոյ
 նշանը քու սիրոդ պիտի ծակէ , և քու
 խղճմտանքդ կէս զիշելուն քեզ պիտի
 արթընցունէ , ու քու հանգստու-
 թեան ժամերդ պիտի դառնացունէ :
 Մէկ մարդասպան մը հնար չէ որ
 խղճմտանքին խայթոցներէն ազատ
 մնայ . բայց դուն ով ամբարիշտ

մայր, քեղի կըսեմ, զուն մէկ հոգես-
 պան մըն ես : Եւ որի՞ն հոգին կըս-
 պաննեսկոր . ան քու զաւկիդ հողին՝
 որ քեղի ապաւինած է : Աս մասին վր-
 լայով ասկից պակաս չենք կընար
 խօսիլ : Դատաստան կըկանչենք տը-
 ղայոց եղած ան անհամեմատ անիրա-
 ւութիւնները, որոնք մայրական ծի-
 ծաղ երեսէն և մայրական համբոյր-
 ներէն կըլլան : Աստանան Աղամը-
 դրախտէն դուրս ձգեց, հուզա իր
 վարդապետը մատնեց . բայց մենք ա-
 հա մէկ մայր մը կըտեսնանք՝ որ իր
 զաւակը, իր անմահ զաւակը Աստուծմէ-
 ռւ խաղաղութենէ կըհեռացունէ, ու
 աշխարհի սիրովը անիկա իր Ատեղծո-
 ղէն ապստամբ կընէ : Այս պզտի աղ-
 ջեկը՝ որ քու գացած ճամբուդ կը-
 հետեիկոր, յաւիտենականութեան
 ժառանգ մըն է : Բոլոր գալու տարի-
 ները անցնին նէ, ինըը ողջ պիտի
 մնայ . գերեղմանին մէջը ապականե-
 լէն ետե յարութիւն պիտի առնէ .

յաւիտենական և հոգեոր կացութեան
մը մէջ պիտի մտնե՞ կամ հրեշտա-
կային բարձրաթուիչ թեւրով վերա-
նալով , և կամ տարտարոսական մը-
թութեան մէջ կոյք զկուրայն խար-
խարելով : Դո՞ւն ով մայր , դո՞ւն ես
անոր առաջնորդը անմահութեան վե-
ճակին մէջը մտնալու . երկնից կա-
նանչ մարդագետիններուն կամ յուսա-
հատութեան ամայի անապատներուն
անիկա տանող հասցունողը դո՞ւն ես :
Ուե՞ս որ դուն քու մեղքերուդ մէջը ան-
զեղջ անապաշխար կը առաջանաս ,
խիստ կարելի է որ քու զաւակդ աւ-
քու հետդ պիտի երթայ :

Տղի մը վրայով լսեցինք թէ իր
մահուան անկողինին վրայէն իր աչ-
քերը դէպի իրեն ծնողացը դարձունե-
լով դառնացեալ հոգիով մը կանչեց ,
“ Ավ իմ ծնողքս , դուք մահուան վր-
այով ինձի բան մը չըսիք ընաւ ,
կամ թէ իս չի յորդորեցիք անոր դա-
լուն պատրաստ ըլլալու , և հիմայ՝ ը-

սաւ տղան՝ աչվլներէն արցունքի մը
 դետ դուրս բխելով, և հիմայ ես կը-
 մեռնիմլոր, ու իմ հողիս կըկորսըվի-
 կոր” : Մեռաւ տղան . իր արել մա-
 րը մտաւ յաւիտենական մթութեան
 մէջ : Եւ առ ծնողքները արդեօք ի-
 րենց ներախղին ի՞նչ զգացին . ի՞նչ
 անտանելի ցաւ մը արդեօք իրենց սիր-
 ու պատուտեց : Ի՞նչալէս իրենց կո-
 րուսեալ զաւկին պատկերը բոլոր օրը
 իրենց ամէն դործքերուն մէջը դիրենք
 պիտի հալածէ, և զիշերվան քուներ-
 նին անհանգիստ պիտի ընէ : Բայց
 դուն քու զաւկըներդ նորէն պիտի
 տեսնաս . դատաստանին օրվան փողը
 քեզ ՚Քրիստոսի ատեանը պիտի հըա-
 ւիրէ : Ի՞նչ պատասխան պիտի տաս
 անատենը : Մահէն ետքը դատաս-
 տան է, ու դատաստանէն ետև յաւի-
 տենականութիւն : Ուէ որ դուն քու
 զաւկիդ կործանողն ես՝ բոլոր յաւիտե-
 նականութեան մէջ դուն անոր նախա-
 տինքը պիտի քաշէս : Ե՞նատենը ա-

նոր անմահ հոգին խորտակմանը վը-
 բայ պիտի նայիս , երբոր խղճմուանքդ
 քեզի կըսէ թէ , “Եթէ դուն հաւատու-
 րիմ ըլլայիր , դուն ալ քու զաւակիդ
 ալ երկինքը հանդչեր էիք հիմայ” : Ա՞ն-
 կարծեր թէ դուն մէկ ճամբայ մը կըր-
 նաս երթալ , և զաւակդ ուրիշ ճամ-
 բայ մը երթալու կընաս յորդորել :
 “Դուն ոչ միայն երկիքը ցուցընելու-
 ս անոր , հապա երկնից ճամբուն մէ-
 ջը առաջնորդ ըլլալու ես իրեն : Ո՞էկ
 մօր մը առաջին ընելու բանը առաջ
 իրեն սիրտը Վատուծոյ տախնէ : Ա-
 ռաջ դուն բարեպաշտ եղիր , և անտ-
 ենը կընաս յուսալ որ Վատուծ
 քու աշխատութիւնդ պիտի օրհնէ որ
 կարող ըլլաս զաւակդ դէպի Փրկիչին
 ուղղելու : Վա գլուխը կարդացող
 կամ լսող մայրերուն բոլորին կաղա-
 ցինք , որ ամէն մէկը որովհետև իրեն
 և իր զաւկըներուն երջանկութիւնը
 պատուական կըհամարի , ատեն չան-
 ցուցած իր սիրտը Վատուծոյ թող-

տայ ։ Վրիստոսի հաշտարար արիւնը
բոլոր դժուարութիւնները ճամբուն
վրայէն վերցուց ։ Հողին սուրբ պատ-
րաստ է քու աղօթքներուդ փոխարէն
ամեն հարկաւոր եղած օգնութիւննե-
րը քեզի շնորհելու ։ Վանի որ կու-
շանաս աս պարտաւորութիւնը կատա-
լելու, քու զաւակդ Վստուծմէ կըհե-
ռացունես ։ և թէ որ շարունակես ա-
սանկ առաջ ելթալ, դուցէ անոր
դարձի զալու յոյսը ամեննեին պիտի
կտրես :

Երրորդ . Ասյէոք Վրիստոնեկայտն իւ-
րօնալ սեբախն Կայուրը ու մասն իւ առ պա-
հանեբուդ առջեն ունես : Վրանց Ճշմա-
րիտ կրօնքի Ճշմարիտ երջանկութիւն
մը չըլլար : Արօնքին բնութիւնը մեղ
երջանիկ լնել է, հոս ալ հոսկէց
ետքն ալ . մեր միտքը տրամութենէ,
հեռացունել է, և անիկա ուրախու-
թեամբ լեցունել է : Խրաւ հնար է
որ սխալելով անդի ծոյրը անցնինք,
Վեղաց բնութիւնը, և Վստուծոյ
արդարութիւնը, և իո օրէնքին սոս-

կալի պատիժները բաց ու յայտնի
 կերպով չեցընելով : Տղան պար-
 տի սորվիլ թէ Վատուած անանկ էակ
 մըն է , որ թէսկէտ իր ստեղծուածնե-
 նը կըսիրէ , բայց չի կընար առանց
 զգուելու մեղքի վրայ նայիլ : Յէտ որ
 միայն Ատեղծողին բարութեանը վրայ
 խօսինք տղայոց՝ որնոր մեր ամէն ա-
 ւուր իրմէն ընդունած ողորմութիւննեւ-
 րուն մէջը յայտնի կերևայ , ասկից
 Վատուածային բնութեանը վրայով
 մէկ սխալ կարծիք մը առաջ կու-
 գայ : Արվախցրվե որ շատերը ինքը-
 պինքնին կըխարեն , կարծելով թէ ի-
 րենք կըսիրեն դ Վատուած : Ինչու որ
 իրենց մտացը մէջ կըխորհին թէ Վա-
 տուած քաղցը ու խանդակաթ էակ
 մըն է , որուն ընութիւնը միայն սի-
 րով ու ներողութիւնով բաղկացած է :
 Վասնկ մարդիկ այնչափ հեռու են
 ձշմարիտ Վատուածոյ պաշտօն մատու-
 ցանելէն որչափ որ չնղկաստանի
 քուրմերը : Վատուած անանկ ներկա-

յանալու է մեր մտացը , ինչպէս ոք
ինքը ինքը ինքը ցուցուց մեզի Աստ
ուածաշունչին և բնութեան գործքե
րուն մէջ : Անիկա միանդամայն ողոր
մած և արդար Աստուած է : Անիկա
Աստուած սիրոյ է , և հուր ծախիչ է :
Ուենք անիկա պարսինք պատուել
խիատ ջերմեռանդ սիրով , բայց նաև
յարգութիւնով և երկիւղածութիւ
նով : Ուստի տղաքը թող աղէկ մը
հասկընան , թէ մեզը առանց պատի
ժի չի կրնար անցնիլ :

Բայց թող հասկըցվի ևս , թէ դա
տաստանը Աստուածոյ մէկ , անսովոր
գործն է : Ծատ անդամ անոր բարու
թեանը վրայ խօսէ . անոր ներելու
պատրաստ ըլլալը ցուցուր . տղին եւ
բախտագիտութիւնը շարժէ , երկնից
ուրախութիւններուն վրայ խօսելով :
Ասանկով Քրիստոնէական կրօնքին
պարտաւորութիւնները երկնային ու
բախտութիւնները վայելելու սիրովը և
յաւթենական երջանկութեան դադա

փարներովը միշտ խառնէ , որ անանց
 կով տղան իմանայ թէ տրտմութիւնը
 և տիսրութիւնը միայն ապստամքու
 թեան ու անկրօնութեան հետ կապ-
 ված է : Երկնային ուրախութեանց
 խոստմունքները՝ որ Վատուած ըրաւ
 իր սիրելիներուն , բաւական են տղի
 մը սրտին մէջը խիստ զօրաւոր յօժա-
 րութիւններ արթընցունէլ : Ուրիշ
 նիւթ մը չի կայ որ ասոր չափ ուրա-
 խութիւն պարզեց տղի մը մատղաշ-
 սրտին : Վնոր երախտագիտութիւնը
 արթընցուը , յոյսը շարժէ , Վատու-
 ծոյ խոստացած վարձքերուն վրայով
 իրեն խօսէ : Վամնկովքու զաւակդ իր
 Ատեղծողին սիրոյն մէջը խօթելու , ու
 երկնից համար անիկա պատրաստելու
 աղէկ յոյս մը կրնաս ունենալ : Օրէն-
 քին վախերը պահէ որ երեւելի դիպ-
 ուածներու մէջ զործածես , որ ատեն
 կընաս զաւկիդ մտացը մէջ խորունկ
 մը տապաւորէլ անոնք որ ալ չանցնին :
 Յաէ որ միշտ աս վախերը անոր առջին

զնես՝ միտքը կը կարծը ընսայ անոնց ու-
նեցած զօրութեանը դէմ, կը օնքը ան-
հաճոյ բան մը կը լլայ իրեն, ու մէղքին
հնացեալ սովորութիւնը կը հաստա-
տի :

Չորրորդ . Պատահածուոց ու կողուածու-
թը նոյն ո՞ն է գոչ դնես : Եմինքս աւ-
դիտենք որ երբեմն տղաք կակուդ-
խղմանք մը և մէկ ընդունակութիւն
մը ունին որ ատեն իրենց ըսված բա-
նը դիւրին կը ոպաւորի մտքերնուն
մէջ : Ես փոփոխութիւնները որ ա-
նոնց մտացը մէջ կը լլան, երբեմն ա-
նիմանալի պատճառներէ առաջ կու-
գան : Յը իստոննեայ մը այսօր սաստիկ
ջերմեռանդութիւն մը կղզայ իր ներ-
սիդին և հողեռը վայելքութեան մէջ
կը լլայ, ու վաղը պարապ տեղը կաշ-
խատի նոյնը ունենալ : Են մարդը՝ ո-
րուն սէրը աշխարհիս վրայ հաստատ-
ված է, մէկ օր մը հազիւթէ կը բա-
ւականանայ իր քաղած հաճութիւննե-
լովը : Եշխարհը փառաւոր կերկայ

իրեն . յոյսը կըկենդանանայ . և խա-
բերայ բաներուն ետևէն ինկած՝ նոր
զօրութիւնով տռաջ կըվագէ : Այս
օրը ամէն իրեն բաղձալի բաները բո-
լորովին անհաճոյ կերւան իրեն . իր
բերկրութիւններուն մէջը սիրո չու-
նենալ մը կըզգոյ . իր անձը իր ներ-
սիդին տրտումէ , և գրեթէ իր միտ-
քը կըհասասատէ տշալր՞ը ուրանալ
և ճշմարիտ Քրիստոնեայ մը ըլլալ :
Աեպէ թէ ամէնուն վրայ կըողատահին
առ փոփոխութիւնները : Երբեմն առ
փոփոխութիւնները արտաքին յայտնի
պատճառներէ կըլլան , և երբեմն
ինչու որ ըստինք , անոնց պատճառ-
ները չեն իմացվիր :

Աեկ մայր մը միշտ պատրաստ պի-
տի ըլլայ ասանկ դիպուածները ձեռք
առնելու և անոնցմով բան տեսնալու :
Երբոր իր զաւկին վրայ մէկ անսովոր
հեղահոգիութիւն մը կըտեսնայ , հան-
դերձ տրտմազին երեսով և զիջած
կիրքով , անատենը ջերմեւանդ ա-

զօթքով իր յոյսը Աստուծոյ վրայ
 թող դնէ , ու մայրական սիրոյն բոլոր
 յորդորանքներովը իր զաւակը դեպի
 Փրկիչին առաջնորդելու ջանայ : Եր-
 բոր տղին միտքը առ վիճակին մէջ
 ըլլայ , անատենը անիկա պատրաստ է
 Քրիստոնէական վարժութիւնները
 ընդունելու : Անատենը կիմանայ թէ
 բաց ՚ի Աստուածապաշտութեան վայ-
 ելչութիւններէն՝ ի՞նչպէս անպիտան
 են բոլոր ուրիշ վայելչութիւնները :
 Թող կուտայ աշխարհս որնոր ամուր
 բռներ էր , ու դիւրութիւնով կելլայ
 կը շաղայի իր խորհուրդներովը ան-
 ծայր չունեցող սահմաններուն մէջ ,
 ուր որ ասկէ ետև իր յաւիտենական
 քնակութիւնը պիտի գտնայ : Ո՞հ
 ի՞նչ անուշ բերկրութիւն է կրօնքին
 ուրախութիւնները տղի մը առջին
 ներկայացունել որուն յօժարութիւն-
 ները առ կերպովս պատրաստը ված են .
 ի՞նչ ուրախութիւն է տեսնալ ան սի-
 րոյ արցունքները որ իր աչքերը կը

փայլեցունեն, և իր կուրծքին հետ
լը նոր զգացումներով՝ որոնք իր սըր-
տին մէջը ծնան : Օձէ որ երկրիս վրայ
մէկ ուրախութիւն մը կայ նէ, ասանկ
մէկ տեսարանի մը մէջ կըդտնրվի ա-
նիկա : Երջանիկ մայրը իր անմահ զաւ-
կին աս կերպովս առաջնորդելով՝ ա-
նիկա դէպի իրեն երկնային բնակարա-
նը հասցանելու, իր սրտին մէջը ա-
նանկ զմայլելի կիրք մը կունենայ որ
մարդ չիյտէ : Եսանկ դիպուածներ
շատ անդամ կըպատահին . և մէկ մայր
մը պիտի ջանայ՝ որ իր սիրոը Վրիս-
տոսի սիրովը միշտ ջերմ պահէ, որ
պէս զի ասանկ ժամ մը եկածին պէս
նոյն ջերմութիւնը իր զաւկին սրտին
ալ հաղորդէ :

Կան նաև մասնաւոր ժամանակներ՝
որ յատկապէս կըպատշաճին տղայոց
խորհուրդները երկնից վրայ դարձու-
նելու : Ո՞եր զգայութիւնները մեր
բոլորտիքը եղած տեսարաններովը
կըտարբերին : Ո՞էկ մութ և ալեկո-

ծեալ գիշել մը քու փոքրիկ տղեկդ
 կառնես իր սենեակը կըտանիս : Ենձ
 ըւը պատուհանները կըծեծէ բռնու^ւ
 թեամբ . հովը տաներ չորս կողմէն կը-
 փէ սուբելով : Եմէն բան դուրս
 մութ և տխրադին է : Տարելքներուն
 աս կերպ խուզովութենէն հարկաւ տղին
 միտքը կամբոխի : Եհա աս պատեհու^ւ
 թիւնը դուն ձեռք կառնես և անոր
 դաս մը կըսորվեցունես Եստուծոյ ա-
 պաւինելու վրայ : Տըդատ , կըսես իւ-
 րեն . Եստուած է որ կըպատճառէ
 հովին փչելը և անձրեին դալը : Ոչ
 իս և ոչ քու հայրդ կընանք աս ալեւ
 կոծութիւնը զադրեցունել , կտոր ա-
 նոր բունութիւնը եւլուցունել : Յժէ
 որ Եստուած ուղեկ կընայ հրաման ը-
 նել հովին որ անսանկ սաստիկ փչէ ,
 մինչեւ որ տունը կործանէ : Ատկայն
 Եստուած քեզ պիտի հոգայ և պահ-
 պանէ , թէ որ դուն իրմէն խնդրես
 նէ . ուրիշ մէկը չի կընար քեզ պահ-
 պանել : Կըյուսամոր դուն հիմայ ա-

զօթք պիտի ընես որ Աստուած քեզ
և քու հայրդ և իս պահէ առ գիշեք :
Երբոր Աստուած հրաման ընէ ալեկո-
ծութիւնը պիտի դաղլի , ամսկերը
պիտի տարածնին , բոլորովին խաղա-
ղութիւն պիտի ըլլայ , և պայծառ
լուսինը փալփրլուն աստղերուն հետր
նորէն պիտի ծագէ :

Աս կերպովս տղան կըսորվի իր
բոլորովին Աստուծմէ կախեալ ըլլա-
լը : Անհնար է որ ասանկով իր մը-
տացը մէջ խորունկ չի տպաւուի իր
Ատեղծողին կարողութիւնը : Արնաս ի-
րեն զըռւցել թէ Աստուած ամենալա-
րող է , բայց ասիկա միայն մէկ հա-
րեանցի տպաւորութիւնն մը առաջ
կըբերէ : Ատկայն երբոր Աստուծոյ
կարողութեանը մէկ զործը իրեն ցու-
ցրնես նէ , անառենը իր միոքը կար-
թինեայ , ու ճշմարտութիւնը կըզգայ :
Երբոր մայրը սենեակը կըձգէ դուրս
կերթոյ՝ և տղան մինակ մութը կըմը-
նայ , ու եղած ալեկոծութեան ձայնը

մտիկ կընէ , իր միտքը իրեն Ատեղծու-
 ղին մեծութեանը ու կարողութեանը
 նոր գաղափարներովը չի պիտի՝ ըն-
 դարձակի : Չի պիտի՝ զգայ որ ասանկ
 մէկ Խակ մը սրդողցունելլը սոսկալի
 բան մըն է : Եւ եթէ շխտակ վարժը-
 ված է իր յոյսը Աստուծոյ վրայ դնե-
 լու , տարերքներուն խռովութիւնը ա-
 մենևին չի պիտի վրդովէ իր սրտին
 խաղաղութիւնը : Պիտի զգայ որ Աս-
 տուած իրեն պահապանը ըլլուէն եւ-
 տեւ պէտքը չէ որ զէշ բանէ մը վախ-
 նայ : Ասանկ պարզ դիպուածները
 կարելի է շատ անգամ զործածել , ո-
 րոնք երբեմն անանկ տպաւորութիւն
 մը կընեն որ բնաւ չի մուցրվեր : Անէ
 որ ասոր նման խորհուրդները քու-
 տղիդ մոքին մէջը կըխօթես , հար-
 կաւ անոր միտքը կըբանաս և իր ա-
 ռաքինութիւնը կաճեցունես : Ասանկ
 մէկ կարճատե զիտուած մը աւելի զօ-
 րութիւն ունի , քան թէ բոլոր օրը
 հասարակ կերպով մը կրօնքի վրայ
 խօսիս :

Ամենահարկաւոր պարտքեւ
 ըուն մէկը աս դիմուածներուն սպա-
 սելը և մեծ ջանքով անոնք ձեռք առ-
 նել յառաջացունելն է : Ո՛ և իցէ
 մայր՝ թէ որ հաւատարիմու արթուն
 ըլլայ՝ ասոր պէս անհամար պատե-
 հութիւններ կրնայ գտնալ : Ըսէնք
 թէ փոքրիկ աղջիկդ հիւընդցաւ, ու
 տաքութեան մէջ է և անհանդիսա-
 իր բարձին վրայ : Քովը նատեր իր
 ճակատը կըթրչես՝ որ կերիկոր, ու
 իր լեզուն կըզովացունես՝ որ կըպապա-
 կիկոր . և ինքը կըլսէ որ Վատուծոյ ա-
 ղօթք կընես թէ իրեն առողջութիւն
 շնորհէ : Ո երջապէս ջերմութիւնը
 կանցնի, քիչ մը հանդարտիկ քնանա-
 լէն ետև կարթըննայ իր ցաւէն աղա-
 տած : Վնատենը իրեն կըսես որ, եթէ
 Վատուած չարգիլեր նէ՝ իրեն հիւան-
 գութիւնը անանկ պիտի շատնար մին-
 չե որ մեռնէր : Վանեկով անոր միտ-
 քը Վատուծոյ մարդասիրութեանը աս
 մէկ գործին վրայ զարձունելով՝ որնոր

կըտեսնայ և կըզգայ , ճշմարիտ եւ
բախտագիտութեան կընաս շարժել
անիկա : Եսանկով ճշմարիտ տրտմու-
թեան մը մէջ կընաս խօթել անիկա ,
որ չըլայ թէ երբէք իր երկնաւոր շո-
րը անհնաղանդ գտնըվի :

Դարձեալ ըսենք թէ զլացինեւ-
րուն մէկին զաւակը կըմեւնի՞ և քու
տղադ մրւելին տունը կըզտնըվի : Ին-
քը իր ընկերին անշունչ մարմինը
կըտեսնայ ու ապշած անոր վրայ կը-
նայի : Հիմայ ի՞նչովէս կընայ մէկ
մայր մը զանց ընել ասանկ պատեհու-
թիւնը՝ մահուան ինչ ըլլալը իր զաւ-
կին սորվեցունելու : Երիկունը երբոր
քու տղադ պառկելու կերթայ , ան-
շուշտ պիտի մումտա իր ընկերին վրայ
որ մեռաւ : Երբոր դուն իրեն հետը
կըխօսիս յաւիտենական աշխարհին
վրայ՝ ուր որ իր փոքրիկ բարեկամը
դնաց , Քըիստոսի ատեանին վրայ՝
ուր որ կայնեցաւ , երջանկութեան
կամ թշուառութեան տեսարաններուն

վրայ՝ որոնց մէկին մէջը անիկա հիմայ
 մտաւ, իր մատաղ սիրտը չի պիտի՝ ի-
 մանայ ասոնք. և իր ընկերին վրայ ու-
 նեցած կարեկցութեան արցունքները
 իր աչվըները չի պիտի՝ լեցունեն: Եւ
 երբոր քու տղիդ կրպատմես թէ ինքն
 աւ շուտով պիտի մեռնի, բոլոր իր
 բարեկամները պիտի ձգէ, Վրիստոսի
 առջեր պիտի կայնի իրեն դատաստա-
 նը ընդունելու, և յաւիտենական կա-
 ցութեան մը մէջ պիտի մտնայ, ան
 օրվան դիպուածը ճշմարտութիւն մը
 և ազգուութիւն մը չի պիտի՝ տայ
 քու խօսքերուդ, որ երկան ժամանակ
 քու զաւակդ իր մտքին մէջը յիշէ ա-
 նոնք: Վիչ տղաք կան որոնք ասանկ
 յորդորական խօսքերու դէմ կենան:
 Յիսուս Փրկիչը՝ որ փոքրիկ տղաքնե-
 րը իր գիրկը առաւ՝ ու օրհնեց ա-
 նոնք, ասօր չի պիտի անարդէ անոնք,
 հապա աս կերպը յորդորանքներէն ե-
 ղած զգացումները անոնց ներսիդին
 պիտի արծարծէ, ու իրենց տկար

մետքը պիտի զօրացունէ : Այենք աշ-
մէն կերալ քաջալերութիւնը ունինք
թէ Աստուած իր օրհնութիւնը աս-
ջանքերուն վրայ կըխրկէ , ան որ է-
վելի պատրաստ է իր սուրբ Հոգին
տալու անոնց որ իրմէն կըխնդրէն ,
քան որչափ մէկ մայր մը իր անօթի
զաւակը կշտացունելու :

Այէկ հայր մը անզամ մը իր զաւկին
ձեռքէն բռնեց գերեզմանատունը տա-
րաւ որ անոր ցուցընէ իրեն դասընկե-
րին գերեզմանը որ քանի մը օր ա-
ռաջ մեռեր էր : Փոքրիկ տղեկը քա-
նի մը ըոպէ լոիկ ու տրտում երեսով
իր ընկերին նոր գերեզմանին վրայ
նայելէն ետև հօրը երեսը նայեցաւ ու
ըսաւ . « Հայրիկ , ես մեռնիմ նէ ,
իմ գերեզմանս ասկից երկան կըլլայ » :
Աս սիրուն զաւակը հիմայ ան նոյն գե-
րեզմանին քովիկը պատկած է . բայց
իր ծնողքները իրենց արցունքներուն
մէջը կընեան խնդաւ , որովհետեւ կը-
հաւտան թէ անոր բարեսպաշտ հոգին

Ելկինքը զացած է : Տղաքը ասանկ
տեսարաններուն մէջ խօթելով , և
ասանկ դիալուածները ձեռք առնելով
Է՞ որ Առտուածալաշութեան աղէկ
դասերը յաջողութեամբ կրնանք սոր-
վեցունել անոնց : Վէկ առանկ օրի-
նակ մը էվելի խորունկ կըմտնայ իր
սիրտը , քան թէ երկան բարակ հա-
սարակ խօսակցութիւնները :

Դիցուք թէ ամառվան գեղեցիկ
տուտու մը զաւկիդ հետը ժուռ զալու-
ելար : Գեղեցիկ դաշտերը քու առ-
ջեղ տարածված կեցեր են . թուչուն-
ները անուշիկ կերպենկոր . կըթրւի
թէ բոլոր բնութիւնը ուրախութեան
ձայն մը կուտակոր : Բլուրի մը վրայ
կելաս ու քու առջեղ միշկ գեղեցիկ
և զանազաննեալ տեսարան մը կըբաց-
վի լեռներու և ձորերու ու անտառնե-
րու և առուներու , կանանց մարդագե-
տիններու , և անոնց մէջը ճարակող
կենդանիներու : Հիմայ կրնամա զանց
ընել աս գեղեցկութիւնները քու զաւ-

կիդ ցուցընելու , և անոնցմէ անոր
 միտքը դէպի Անոր դարձունելու , ու
 բուն խօսքովը բոլոր ան բաները ե-
 զան : Չե՞ս կընար իր միտքը ան կա-
 նանչ մարդագետիններուն ու խաղա-
 ղուկ ջուրերուն վրայ դարձունել , ուր
 տեղ որ յաւիտենական հանդիսար կը-
 գտնըվի : Չե՞ս կընար պատմել իրեն
 ան բարի ժովիւին վրայով՝ որ հոն իր
 ոչխարներուն հօտին վրայ պահպանու-
 թիւն կընէ , ճագուկները իր թեւերուն
 տակը ժողվելով , ու անոնք իրեն ծո-
 ցին մէջը հաւաքելով : Չե՞ կընար
 մէկ մօր մը լեզուն հոս տեղու անանկ
 ճարտասանութեամբ ատենաբանու-
 թիւն մը ընել՝ որուն նմանը ամպիսն-
 մերէն լաված չէ :

Ասոր պէս դիպուածները զգուշու-
 թեամբ առաջ տանելով զուկիդ մը
 տացը մէջ անանկ տպաւորութիւն մը
 կընաս ընել՝ որ բոլոր գալու տարի-
 ները չեն կընար աւրել անիկա : Քը-
 րիստոնեական զգացումները միշտ այ-

լայլելի դիպուածներուն՝ և աշխարհիս
 զանազան տեսարաններուն հետը ա-
 նանկ կրնաս միաւորել, որ ամէն օր-
 վան պատահած բաները անոր խոր-
 հուրդները առ Աստուած կրվերցու-
 նեն : Աստիկ ալեկոծութիւն մը, հի-
 ւանդութեան ժամ մը, թալումի հան-
 գէս մը՝ որ իր բոլոր ետքի կեանքին
մէջը կըպատահին, իր միտքը կըձգեն
 մօրը տըւած վարժութիւնները ու ա-
 նոր աղօթքները : Ու որ դաւակդ աս-
 կից ետեւ պանդխտութեան մէջ մըտ-
 նայ, Ալփեան լեռներուն վրայ քալած
 և Ովկիանոսի ջուրերուն վրայ նաւար-
 կութիւն ըրած ատենը, կամոյ ակա-
 մայ իր միտքը դէալի Անոր պիտի վեր-
 ցունէ՝ որ լեռները ու բլուրները շե-
 նեց, և Ովկիանոսին ջուրերը կըկա-
 ռավարէ : Աստուածոյ ու երկնից գաղա-
 փարները ջանա որ աս դիսլուածներուն
 հետ միաւորես, որոնք այսչափ ազդու-
 զօրութիւն կուտան անոր մտացը :

Բնաւ չեմ մոռնար ան տպաւորու-

թիւնը որ իմ մտացս մէջը եղաւ մէկ
 պարզ խօսքով մը , որնոր հասարակ
 դիալուածով մը ժամ մը չի պիտի յիշ
 վէր : Ո՞էկ օր մը իմ մանկութեանս
 ատենը իմ հայրա տղայոց խաղալիկ
 կաշիէ զնտակին ոլէս զնտակ մը տը-
 ւաւ ինձի : Հաբաթ առտու դպրա-
 տունը երբոր կըխաղայի անով , զիալ-
 ուածով մը պատին մէկալ կողմը ին-
 կաւ ու կորարվեցաւ : Երկան ժամա-
 նակ վինտուեցինք անիկա բայց ոչինչ
 տեղը - աս կօրուստը անանկ մեծ բան
 մըն էր ինձի՝ ինչպէս որ մէկ մարդ մը
 իր ստացուածին կէսը կորարնցունէ :
 Տուն զացի ու իմ ցաւս պատմեցի մօ-
 րը . ան ալ ջանաց իս միսիթարել ,
 բայց ի՞նչ ըստ միտքս չէ : Նետե-
 եալ օրը Կիրակի էր : Ե՞ն օրը Կիրակի
 աւուրինտոր կըվայլէ նէ անանկ ան-
 ցուցի , որուն ոլէս ուրիշ Կիրակինե-
 րը անցուցած չէի . իմ սերտելու սո-
 վորական տաղս կատարեալ սորվե-
 ցայ . իմ պղտի աթուիս վրայ նստե-

լով կըակին քովը խաղաղ ու երջա
 նիկ օր մը անցուցի, կարդալով՝ և ան
 սուրբ օրվանը վայլած ուրիշ պարուա
 ւորութիւնները կատարելով : Են օր
 վան իմ վարքիս ծնողքներս անանկ
 հաւներ էին՝ որ իրիկվան երբոր խա
 ղաղ սրտով Գիշեր բարի ըաի անոնց՝
 և պառկելու կերթայի, Առլիս մը լը
 սեցի իրենցմէ : Հետեւեալ օրը ամէն
 աւուր սովորութեանս տէս դպրատուն
 գացի : Ճամբան քալած ատենս կոր
 սընցուցած գնտակս միտքս ինկաւ :
 Պատին անդի կողմի դաշտը անցնելով
 ուր որ Շաբաթ օրը ոչինչ տեղը այն
 չափ փնտրուէր էի անիկա, գրեթէ
 առջի բանը որ աճքիս դիպաւ՝ գնտակն
 էր, մէկ քարի մը տակ մտած : Տղայ
 ական բնութեանը նայելով՝ անատե
 նը իմ ուրախութիւնս անպատմելի եւ
 զաւ . կէս օրին շուտով տուն վաղեցի
 մօրս զըուցելու, դիտնալով թէ իմ
 կորսնցուցած գանձս գտնալուս վրայ
 իմ հետս մէյտեղ պիտի ուրախանայ :

Ե՞նիկա ալ քիչ մը իմ տղայական եր
 ջանելութեանս վրայ կարեկցութիւն
 ցուցընելէն հետեւ ըստւ թէ , “ Եղբ
 ւական մարդ մը կրտէր՝ թէ երբոր ին
 քը մէկ Աիրակի մը աղէկ անցունէր ,
 անշուշտ հետեւեալ շաբթուն յաջու
 ղութիւն կըդտնար : Այսիշե՞ս, տըդաս ,
 շարունակեց մայրս , որ դուն էրէկ
 աղէկ տղայ մըն էիր : Եսիկա քեզի
 կըցուցընէ՞ որ եթէ դուն երջանիկ և
 յաջողութեան մէջ ըլլալ կուղես նէ
 պարտիս Աիրակին չի մունալ ու անի-
 կա սուրբ պահել ” : Ես խօսքին ա-
 ռանց ըացաւութեան ճշմարիտ ըլ-
 լալը քննելու տեղը չէ հիմայ : Քի-
 չերը կան որ տարակուսին անոր ընդ-
 հանրապէս ճշմարիտ ըլլալուն վրայ :
 Բայց ինչեւիցէ ան խօսքը՝ եղած դիպ-
 ուածին հետը յարմարելով , անանկ
 մը տպաւորեցաւ իմ մտքիս մէջը՝ որ
 ընաւ չի պիտի աւրի : Տղայութեանս
 առենին ուրիշ դիպուածները շատոնց
 կորաըլեցան իմ միտքէս . բայց ասիկա

դեռ նոր ու հաստատ կը կենակոր :
 Շատ անդամ անիկա կիրակին զգու
 շութեամբ պահել պատճառեց ինձի .
 Նաև մինչեւ աս օրս ես անոր զօրութիւ
 նը յայտնապէս կրզքամ : Եստուծոյ
 օրհնութիւնը և կիրակիին պահպա
 նութիւնը իրարու հետ միաւորված
 ըլլալը անանկ հաստատված է մտքիս
 մէջ , որ հաղիւթէ կիրակի առոտու
 մը չի յիշեմ անիկա : Կարելի է թէ
 ամէն աս գիրքը կարդացողները կրնան
 միտվընին բերել ասոր պէս դիպուած
 մը , որ անջնջելի տպաւորութիւն մը
 ըրած ըլլայ : Ծէ որ մէկ մայր մը
 միշտ արթուն ըլլայ ասանկ դիպուած
 ները առաջ տանելու , Քրիստոնէա
 կան վարդապետութիւնը ձանձրալի
 և անհաճոյ բան մը ընելու վտանգէն
 հեռու պիտի ըլլայ :

Հաղիւթէ մէկ մարդ մը ըլլայ որ
 անանկ չի հաւտայ յաւիտենականու
 թեան , անանկ հակառակի Քրիստո
 նէութեան , որ դոնէ երբեմն հոգեսոր
 27 է

խօսքերու ականջ չի կախէ : Ո՞էկ
 Վրիստոնեայ պարոն մը անդամ մը
 ճամբորդութիւն կըներ նաւով , ուր
 շատ անդամ իր ականջները կաղտո-
 տէին նաւին մէջի անկիրթ և յանդու-
 գըն նաւաստիի մը պիղծ խօսքերէն :
 Պարոնը միտքը դրաւ որ մէկ պատե-
 հութիւն մը գտնայ անոր հետը խօսե-
 լու : Ո՞էկ իրիկուն մը պարոնը նաւին
 վրայ իր վերաբկուին փաթթրված և
 չուաններու դէզի մը կութրնած Ավ-
 կիանոսի գեղեցիկ տեսարանին վրայ
 կըդուարձանարկոր : Ո՞էկ հեղիկ հով
 մը առագաստները կուռեցուներկոր ,
 և անօնք ծփծփացող ջուրերուն վրայ
 արսղութեամբ առաջ կըտաներկոր :
 Ալեքները փոսփորոնեան լուսով կը-
 փալվայինկոր , ու հաղարումէկ ծա-
 րերէ լուսինին ճառագայթները կը-
 ցոլացունէինկոր : Ծնութեան մէծ
 տաճարին մէջը կախված հաղար հա-
 զարոց կանթեղները մթնցունող մէկ
 ամպ մըն աւ չի կար : Աս մի ջոցին

անանկ պատահեցաւ որ նաւաստին
 քանի մը չուաններ կը յարմարէրկոր
 մօտ ան տեղին՝ ուր որ պարոնը կութը^ւ
 ներ էր իրեն դսնազան խորհուրդնե-
 րուն տուատ վայելչութիւնովը : Առջե
 բերանը քանի մը խօսք ըրին իրարու-
 հետ հասարակ բանի մը վրայով : Ան-
 կէ ետեւ ձեւով մը աստղերուն վրայով
 խօսք բացվեցաւ , ու նաւաստիին
 միտքը դիւրութեամբ մը անոնց վրայ
 դարձաւ : Կաւաստին շատ հաճեցաւ
 ան պարզ բայց ազգու խօսքերուն որ
 պարոնը ըրաւ աստեղաբաշխութեան
 մեզի սորվեցուցած բաներուն վրայ :
 Ասկից նաւաստիին միտքը երկինքի
 վրայ դարձաւ : Կայներ ապշած կընայ-
 էր դէպի աստղերուն՝ երբոր պա-
 րոնը կը խօսէր գալու փառաւորեալ
 աշխարհին վրայ , որուն մէջը գուցէ
 աստղերը ան բնակարաններն են որ
 Վրիատոս գնաց իրեն հաւատացեալ-
 ներուն համար պատրաստելու : Ո՞էկ
 ինջած կիրքով մը և մէկ խորունկ

ունկնդլութիւնով մը մտիկ կընէր ,
 երբոր դատաստանին օրվան ահաւոր
 տեսարանը իրեն առջին բացաւ : Հի-
 մայ իր միտքը պատրաստըվեցաւ շիփ-
 շիտակ իր մեղքերը յիշել տալ անոր :
 Խոնարհութեամբ ականջ դրաւ , եր-
 բոր պարոնը քաղցրութեամբ բայց
 ազդու կերպով մը աղաչեց իրեն դա-
 տաստանին օրը Քրիստոսի դէմը եւ-
 լալու պատրաստ գտնըվելու համար :
 Ես չար նաւաստիին մտացը մէջը եւ-
 ղած տպաւորութիւնը՝ յայտնապէս
 շատ զօրաւոր էր : Ենիկա երկար ժա-
 մանակ մնաց թէ չէ , ան պարոնը չի-
 կրցաւ ստուգելու : Ստկայն իրիկվան
 խաղաղ ժամուն պատեհութիւնը և
 տեսարանին մեծութիւնը ձեւք առնե-
 լով առ նաւաստիին ամբարիշտ ողին
 գոնէ ան ժամանակը խոնարհեցաւ :
 Քրիստոնէական վարժութիւնը իր
 չամեցող բարեկան տրվեցաւ : Եւ հաւանա-
 կան է թէ երբոր Ավելիանոսին ջուրե-
 լուն վրայ ինքը Թափառական կըպը-

ողափի, շատ անգամ կէս գիշերվան աւտենները աստղերուն վրայ նայելով՝ դատաստանին և երկնից վրայ պիտի խորհի :

Ո՞րչափ անգամ մէկ մայր մը ասոնց նման դիպուածները ձեռք առնելով իր զաւակը կրնայ վարժել, նոյն ժամանակը անիկա շահելով՝ ու անոր մոտացը մէջը խորունկ մը տպաւորելով իր վարժութիւնները :

Հինգերորդ . Ենապատշտան ունաւածներէն ուսուցան : Ենանեկ ատեններ կան՝ երբոր մայրերը մեծ վնաս կընեն, զաւկըներնին ստիպելով որ իրենց Քրիստոնէական պարտաւորութիւնները կատարեն : Ըսենք թէ զաւակդ բարկացած է . իրեն կարմըրած երեսները ու կատղած շարժմունքները կըցուցընեն թէ ինչպէս իր միտքը մեղանչական խռովութեան մը մէջ է : Հիմայ պէտք է որ մայրը անոր հետը խօսի աս կիրքերուն չարութեանը և Աստուծոյ անհաճոյ բաները ըլլալնուն վրայ :

ԱԵ . Ժամանակը չէ . մէկ խելագար
 կամ զինով մարդու հետ խօսելու պէս
 անօգուտ է անիկա : Պատժէ անիկա
 իր բարկութեանը համար՝ անանկ կեր-
 պով մը , որ իր կիրքերը իջեցունէ ու
 միտքը հանդարտէ : Ապասէ մինչև որ
 աս կիրքերը աղէկ մը խաղաղին , ու
 ետքը ջանա՛ անոնց անպատշաճութեա-
 նը վրայ անոր հետը խօսիլ , և անիկա
 աւետարանական ճշմարիտ զդ ջման
 մէջ խօթել : « Օռունկ չոքէ իրեն հե-
 տը իրեն լոիկ սենեակին մէջը , և ի-
 րիկվան մտածութեան յարմար ատե-
 նը : Երբոր իր միտքը հանդարտած է
 և իր կիրքը իրեն բանականութեանը
 չի յաղթէրկոր , մտիկ պիտի զնէ քե-
 զի , և հաւանականաբար պիտի զդ ջայ
 իր մեղքին վրայ : Երբոր Պետրոս իր
 Վարդապետը ուրացաւ , երդում ու
 անէծք կարդալով անիկա ուրացաւ .
 բայց երբոր վախը անցաւ ու խելքը
 գլուխը գալով Պիղատոսի գաւիթին
 մէջը սկսեց խորհիլ , անատենը Փըր-

կիչին մէկ պարզ նայվածքը անոր սիրքը ծակեց, “Ու դուքս ելաւ դառնար ցունք լացաւ” :

Մէկ տղայ մը իրեն բերկրութիւն և վայելչութիւն տալու բաներուն վըրայ անանկ իր միտքը կուտայ, որ զրեթէ անհնարին է անոր խորհուրդները մէկ ուրիշ բանի մը վրայ դարձունել : Օժէ որ ասանկ դիպուածի մը ատեն կրծանաս մարդկային վայելչութիւններուն անհաստատ ըլլալը անոր հասկրցունել, իր մեղաւոր ըլլալը և Փրկիչի մը կարօտութիւն ունենալը անոր իմացունել, քու աշխատանքդ ոչ միայն անօդուտ պիտի ըլլայ, հապա նաև զգուելի : Վսոր հակառակը անանկ ատեններ կան երբոր միտքը պատրաստ է քրիստոնէական վարժութիւնները երախտագիտութեամբ ընդունելու : Վսանկ ատենները առաջ տանելու է :

Օժէ որ մէկ որսորդ մը անտառի մը մէջ մտնայ, և աղատաբար իր հրա-

յանը լեցունէ ու պարպէ , կարելի է
թէ դիպուածով քանի մը թռչուն զար-
նէ . բայց անոնցմէ շատերը անշուշտ
պիտի վախցունէ և փախցունէ : Ա-
սանկ ալ մէկ մայր մը որ կոյր և ան-
խորհուրդ նախանձաւորութ միշտ
կըխօսի , զուցէ երբեմն բաղձացած
նպատակին համնի . բայց շատ անգամ
տղին հակառակութիւնը պիտի շարժէ
ու անիկա ապստամբութեան մէջ պի-
տի ձգէ , քան թէ ապաշխարութեան
ու աղօթքի բերէ :

Երկան ու հոգնեցունող խօսակցու-
թիւններ ընելէն զգուշացիր : Տղին
միտքը երկար ժամանակ մէկ բանի մը
վրայ հաստատուն չի մնար առանց
հոգնելու : Երբոր զաւկիդ հոգնած
ըլլալուն նշանը կրտեսնաս , անկէ ե-
տիւ քու խօսքերուդ ամէն մէկը վնաս
կընէ անոր քան թէ օդուտ : Մայրը
խոհեմութիւն դործածելու է , և ա-
նանկով շուտ մը պիտի սորմի թէ ինչ
կերպով իր զաւակը վարժութեան

մէջ առաջ կընայ տանիլ : Գիրքէ
բուն տըւած կանոնները մօրը ունեցած
արթնութեանը և խոհեմութեանը
տեղը չէն կընալ բունել :

ԳԼՈՒԽ · Ե:

Դասընթաւ Բարեսունեամիան վարժաւ
Եւսն վայ :

Երկինքին վրայով մեր ունեցած գա
ղափարները շատ ընդհանուր և ա
նորոշ գաղափարներ են : Բայց աս
երջանկութեան տեղը Առւըր Գրոց
մէջը խիստ երևելի կերպով մը նկա
րագրըված է : Նո՞ւ երկնից վրայ կը
խօսվի որպէս թէ մասնաւոր տեղ մը,
ինչպէս Կոստանդնուպօլիս քաղաքը
կամ ուրիշ մէկ երևելի տեղ մը երկ-
րիս վրայ : Նո՞ւ կըսենք ամենակերպ
գեղեցիկութեամբ զարդարված ուկե-
ղէն քաղաքի մը պայծառութեանը

վրայ , ուսով Ամենակարողին ձեռքը
 կըցաւ անիկա պայծառացուցանել .
 դանազան բնակարաններու վրայ , ու
 լոնք ճարտարապետութեան հոյակառ
 զարդերով կըփալփրլան : Հոնկից
 կըտեղեկանանք ան աշխարհին մէջի
 ընկերական վայելչութիւններուն վր
 այ : Երկնից մէջը Վրիստոնեայն
 հրեշտակներուն հետ ծանօթութիւն
 կըտանայ , անոնց հետը կըխօսակցի ,
 անոնց վայելչութիւններուն կըմաս
 նակցի , և անոնց երջանիկ ընկերու
 թեանը մէկ սիրելի անդամ մը կըլլայ :
 Ոուրը Վրոց մէջէն կըտեղեկանանք
 նաև երկնից Ճշմարիտ դրօսանքներուն
 վրայ : Հրեշտակաց գունդը՝ Վատուծոյ
 ուրախամիտ պատգամաւորները , ան
 դին սաղին կըթուչըտին : Ուեւերնին
 կըբանան և սրբնթաց կըթուչին՝ ուր
 որ բոլոր տիեզերքին փառաւորու
 թիւնները անոնց հետաքրքրութիւն
 ները իրենց վրայ կարթընցունեն , և
 ուր որ մշտնջենաւոր օրվան պայծա

ոռութեանը մթութիւն մը չի յաջոր
դէք : Ա'եք զգայութիւններուն վայեւ
լու բերկրութիւնները ևս Առւրբ Գրոց
մէջը ստորագրըլված են : Եւքը հա
մարձակ և առանց խտորդելու կընայի
Վստուծոյ աթուին սկայծառու
թեանը վրայ : Եկանջը ամենաքաղցր
մեղեդիններուն եղանակովը կըհեշտա
նայ : Վ.րիստոնեային մարմինը գե
րեղմանէն անապական և անմահ պիտի
ելլայ . հոգին և մարմինը առ երջա
նիկ աշխարհին մէջը պիտի միաւորին :
Ա'եք Վ.րիստոնեայ բարեկամներուն
դէմը պիտի ելլանք հոն . պիտի ճանչ
նանք անոնք , պիտի ուրախանանք ի
րենց սիրովը : Վսանկ մեր յաւիտենա
կանութիւնը պիտի անցունենք , եր
գերով և մշտնջենաւոր ցնծութիւննե
րով , ուր տրտմութիւնը և հառաջան
քը հալածական եղած են :

Ի՞նչպէս առոյդ և ազդու են ան
գաղափարները , որ Վստուածաշունչ
Վ.իրքը կուտայ Վ.րիստոնեային ու

սլառնի բնուկարանին , այսինքն՝ երկ
 նից վրայ : Եւ սակայն երկնից վրայով
 ընդունված հասարակ կարծիքը ան է,
 թէ անիկա միայն մէկ ընդարձակ օ-
 դային տարածութիւն մըն է , ուր իմա-
 նալի և աննիւթ հոգիները դադանի և
 անորոշ վայելչութեան մէջ կըհանդ-
 ցին : Երդարեւ կերւայ թէ շատերը
 կըկարծէն որ գրեթէ մեղք է մեր աս-
 տեղը ունեցած ուրախութիւններուն
 դադափարները ան երկնային բնակա-
 րանին մէջի ուրախութիւններուն
 նմանցումնել : Բայց ապահով չէ՞ մի ,
 ովարտաւորութիւն չէ՞ մի Եմտուածա-
 շունչը մեղի առաջնորդ ընենք մեր
 խորհուրդներուն մէջ : Դիցուք թէ
 Եմտուածաշունչին նկարագրութիւնն-
 երը ձև էն , ինչպէս որ իրօք անանկ
 էն : Աակայն ասոնք ան ձևերն էն որ
 Եմտուած գործածեց երկնքին ուրա-
 խութիւններուն դադափարները մեր
 միտքերուն մէջը խօթելու համար : Եւ
 Եմտուած անտարակոյս խիստ յարմար

ձեւը պիտի զատէ , և անանկները՝ որ
շատ մօտ նմանութիւն ունին իրեն
յայտնըվելու ուրախութիւններուն :
Երդ՝

Նախ . Ո՞ւ՞ր արդառնութիւնը և մեր ողոք-
առաջնութեան և՝ ո՞ր մեր պահելու անդուն առաջն
նիութեան երկնուը , ինչու ո՞ր Աստվածա-
նիութեաց անենա մեր առաջնը : Ասանկով
երկինքը աղեկ մը իրենց մտացը մէջ
կըտպաւորենք . ասանկով իրենց
մատղաշ սիրտերուն մեջը մէկ սաստիկ
բաղձանք մը կըյարուցանենք ան եր-
ջանիկ աշխարհը մտնալու : Եւ ինչու
համար Աստուած ան աշխարհին փառ-
քերը մեղի յայտնեց , բայց եթէ մեկ
սրբութեան հրաւիրելու , և մեր
յաւիտենական բնակարանը մեղ ձգե-
լու համար : Դիցուք թէ քու որդիդ
մէկ անսովոր ծարւութիւն մը ունի
գիտութեան : Եթ հետաքրքրութիւնը
միշտ արթուն է . բնութեան գաղտնի
շարժմունքները կըլսեսէ ան , և ա-
նանկի խնդիրներ կըհարցունէ՝ որ
մարդկային միտքը կարող չէ պատաս-

խանել անոնց : Ծաէ իրեն՝ թէ մարդ
 կային գիւտերը և հնարքները սոհն
 ման չունին : գերեզմանը չի կրնար
 կապել միտքին կարողութիւնները .
 ժամանակը չի կրնար պարփակել ա-
 նոր չափը . յաւիտենականութիւնը չի
 կրնար հողնեցունել անոր կարողու-
 թիւնը . անիկա պիտի յաւաջանայ իր
 ստացած կարողութիւններովը , և
 խիստ բարձրերը պիտի վերանայ իր
 թռիչովը , արեգակին լուսինին և
 աստղերուն ծերանալէն ու փոելէն
 ալ շատ ետքը : Ծաէ իրեն՝ թէ ինքը
 երկինքին մէջը Աստուծոյ գործքերուն
 բոլոր դարմանալիքները պիտի հասկը-
 նայ , և ամենակատար բերկըութիւն
 մը պիտի զգայ երբոր բնութեան բո-
 լոր արհեստին վրայ նայի և խմանայ :
 Անկէ ետև կրնաս զրուցել իրեն Փըր-
 կիչին վրայ՝ որ մեռաւ , ինքը աս եր-
 ջանիկ աշխարհը խօթելու համար :

Դարձեալ բանքը թէ քու աղջիկդ
 ականջ մը ունի՝ որ խաղերու և մեղե-

Դիներու ձայնով կը դմայլի : Երաժըշտութիւնը ամենազերազանց վայելութիւններուն աղքիւրը համարվածէ իրեն : Աղէկ . երկինքը երաժշտութիւն չի կայ մի . երկնային երաժիշտներուն մէջը մեղեդի չի կայ մի . հըրեշտակաց դասակարգութիւններուն հետը միաբանելով անոնց ալէլուիաներուն հետը ձայնակից եղած ատենը հոգին զմայլեցունող բան մը չի կայ մի : Աստուած երկինքը ասանկ նկարագրեց մեղե . ուրեմն մենք ինչու համար մեր զաւկըները չարթնցունենք նոյն նկարագրութիւնը ընելով : Դունքու աղջկանդ խորհուրդները պարզ խօսքերով կընաս դարցունել երջանիկ հըրեշտակիներուն ընկերութեանցը վրայ , որոնք երկնային քնարներով և չնաշխարհիկ ձայներով իրենց ուրախութեան եղանակները երկինքին ընդարձակութեանը մէջ ձագէ 'ի ձագ կըհնչէցունեն : Ասանկով անիկա ըստոյգ դաղափար մը պիտի ունենայ ան

վայելչութիւններուն վրայ՝ որոնց որ
ինքը հրաւիրված է : Երկնից ուրս
խութիւնները մեծապէս հրապուրիչ
ոլիտի ըլլան իրեն : Եւ ինքը պլիտի
սկրաի էվելի փափաքով փնտուել
փրկութեան ձանապարհը, և էվելի
ջերմեւանդութեամբ խնդրել Վս
տուծոյ օգնութիւնը՝ մեղքը յաղթելու
և զինքը երկնային բնակարանին հա
մար պատրաստելու համար :

Դարձեալ՝ քու դաւակզ անուշ
բնաւորութիւն մը և բաց սիրտ մը ու
նի, բարեկամութիւն ընդունելու, և
իր սէրը ցուցընելու : Խօսէ իրեն եր
կինքին, Վստուծոյ, և հրեշտակաց
սիրոյն վրայ : Խօսէ իրեն ան սիրոյն
վրայ՝ որ կը կենդանացունէ ան ազնիւ
հոգիններուն կուրծքերը, որոնք ամեւ
նեին պակասութիւն չունին՝ որով ա
նոնցմէ դարշի ան : Օքուցէ իրեն թէ
ինքը նորէն պլիտի տեսնայ բոլոր իր
բարեկամները, որոնք կըսիրեն Փրկի
չը, ան աշխարհին մէջ՝ ուր որ մէկ

անքաղաքավար իսօմք մը , խոժու
նայվածք մը կամ գէշ խորհուրդ մը
ամենևին չի գտներվիր : Առ երբոր դուն
Փրկիչին սիրոյն նշանները իրեն կը-
ցուցընես , իրեն սիրտը պիտի հալի :

Քու զաւակդ բնութեան տեսարա-
նին վրայ անյագ սէր ունի՞ մի . բա-
նաստեղծի աչքով կընայի՞ մի Ովկիա-
նոսին վրայ , աստղալից կամարին վր-
այ , իրիկվան ոսկեփայլ ամպերուն
վրայ : Երկնից տեսարանին մէջը
արդարեւ շքեղութիւն կայ : Հոն հը-
րէշտակաց դէմքերուն վրայ , Վատու-
ծոյ աթուին վրայ , անհամար աշ-
խարհներուն լայնատարած տիեզեր-
քին վրայ անանկ պայծաւութիւն կայ ,
որ տեսնալու արժանաւոր է : Ի՞նչ է
Ովկիանոսը , բայց եթէ Վմենակարո-
վին ձեռքէն կաթած կաթիլ մը ջուր :
Ինչ է Կաէկրայի ջրվէժը որ այս-
չափ երեւելի կըթըրւի մեզի , բայց եթէ
չնչին առու մը՝ որ իր աւազուտ բա-
տակին վրայ կըծփծփայ : Կենդանա-

ցուը քու զաւակդ ան երկնային փառ
 քերուն նկարագրութիւնովը , որոնց
 առջեր երկրիս բոլոր շքեղութիւնը
 ոչնչութեան կըդառնայ : Ո՞ի վախնար
 թէ ասիկա անոր սրտին մէջէն պիտի
 խափանէ բնութեան գեղեցկութիւն
 ներուն վրայ եղած ախորժակը : Ասիկա
 իր միտքը պիտի մաքրէ և բարձրը-
 ցունէ , ու սաստիկ փափաք մը պիտի
 տայ անոր աս փառաւոր աշխարհին
 համար պատրաստ գտնըվելու : Ո՞ի
 վախնար թէ ասիկա անոր սրտին մէ-
 ջը անձնասիրութեան սկզբունքները
 պիտի զօրացունէ , անիկա բարեպաշ-
 տութեան առաջնորդելու տեղը :
 Աստուած թէ որ ասանկ վախեր զգա-
 լու ըլլար , երկինքին ուրախութիւն-
 ները ու դժոխքին վախերը բնաւ մեր
 առջեր չե պիտի զնէր : Հուցուք աս
 ուրախութիւնները որ քու զաւակդ
 իր մեղքերուն վրայ զդ ջում ընէ , չի-
 սուս ֆրկիչն ապաւինի , և իր կեանքը
 անոր ծառայութեանը մատուցանէ :

Ասոնք ՚ի հարկէ քիչ մը ձեւաւոր
 նկարագրութիւններ են, և մենք պար-
 տինք ասոնք իմացունել մեր զաւկը-
 ներուն : Պէտքը չէ որ մենք աս ձեւ-
 ըը գործածելը դանց ընենք . ինչու որ
 ասոնք հանդերձեալ աշխարհին վը-
 րայով ստանալու ամէնեն անախալ
 զաղափարնելը միտքին մէջը կըխօ-
 թէն : Աստուծոյ աս ձեւերը ընտրելը
 մէկ ապացոյց մըն է որ կըցուցընէ
 թէ ուրիշ կերպ խօսք չի կընար հա-
 ւասարապէս յարմարիլ : Աս ձեւերը
 երկնից վայելչութիւններուն ընու-
 թիւնը անանկ կատարելապէս կընկա-
 րագրեն , ինչպէս որ մարդկային լե-
 զուն կընայ նկարագրել անոնք : Իայց
 սակայն ան վայելչութիւններուն խ-
 կութեանը չեն հաւասարիր . ինչու որ
 ոչ աչքը տեսաւ , ոչ ալ ականջը լը-
 սեց , ոչ ալ մարդուն սրտին մէջը ին-
 կան ան ուրախութիւնները՝ որոնք որ
 Աստուծած իր սիրելիններուն համար
 պատրաստեց :

Աստուած զիտէ թէ ինտոր պէտք
 է վարժել մարդուն միտքը . մենք
 աւ իր օրինակին նաևնելու ենք : Եւ
 պարտինք մեր զաւկըներուն առջեր
 դնել երկինքը , ինտոր որ Մատուած
 անիկա մեր առջեր զբաւ անհամար
 զուարձալի ձեւերով : Վ.մէնէն մաքուր
 և աղնիւ ուրախութիւնները որ երկրիս
 վրայ կըվայելէնք , նորէն անոնք ան
 աշխարհին մէջը պիտի գտնանք , մի
 այն թէ անհամեմատ գերազանցու
 թեամբ և մաքրութեամբ : Եւ ան՝ որ
 Ոուրբ Կ.իրքը կարդալով չի հաւտար
 թէ երկինքին մէջը պիտի գտնանք
 պայծառ տեսարան , ներդաշնակեալ
 երաժշտութիւն , հաճոյական ընկե
 րութիւններ , ջերմեւանդ սէր , զոր
 ծունեայ կամաց բերկրութիւն , փա
 ռաւոր օթեաններ , և անվախճան եր
 ջանկութեան բնակարաններ , ան
 մարդը յիմարաբար անտեղի մեկնու
 թիւններ պիտի ընէ ան խօսքերուն
 վրայ : Վ.ս գաղափարներովը ստիպէնք

մեր զաւկըները , մինչեւ որ իրենց սիրտերը տաքնան անոնցմով : Աւրիշ բան մը չե կայ որ էվելի ազդու կերպով կարենայ համոզել անոնք թէ երկրի վրայ գանձ գանձելը յիմարութիւն է : Եւ ասիկտ պիտի առաջնորդէ անոնց որ յօժարութեամբ սորվեն փրկութեան ճանապարհը որ Ք.րիստոնէութեան հիմն է :

Երկրորդ . Ա՞ւշտ Թուրք Շնորհական կայութեան վրայուն է իսկ : Առւրբ Գ.իրքը կը ցուցընէ թէ խաչեալ Ք.րիստոսի քարոզութիւնը մէկ զօրաւոր գործիք մըն է որ Աստուած կը դորձածէ՝ անով մեղի մեր մեղքերը ցուցընելու , և մեղ զղջումի ու երախտազիտութեան բերելու : Ակեղեցական պատմութիւնը ամեն դարերու մէջ՝ մեղի կը ցուցընէ՝ թէ Փրկիչին սիրոյն և մահուանը պատմութիւնը սիրոյը կը հալեցունէ և Ճշմարիտ զղջում կը պատճառէ , երբոր բոլոր ուրիշ ջանքերը ոչինչ են ու անպիտան : Քու

զաւակդ աչքերը արցունքով լեցված
 կըլսէ երբոր դուն պատմես իրեն ՀՅի-
 սուս Փրկիչին երկինքը ունեցած փառ-
 քը . անոր մարդեղութիւնը . իր կեան-
 քին մէջը քաշած նեղութիւնները ու
 հալածանքները , և անոր աղէտալի
 մահը ու խաչը : Աւ երբոր դուն քու-
 զաւկիդ կըզրուցես թէ Վատուած էր
 որ ասանկ մարմինով երևցաւ , և աս
 անիրաւ զըկանքները քաշեց՝ որ իր
 մեղաւոր ստեղծուածները յաւիտենա-
 կան վայերէն ազատէ , անատենը
 դուն անոր մատղաշ մուացը մէջը Վա-
 տուծոյ մարդասիրութեանը ու մեղա-
 ւորներուն ապերախտութեանը վրայ-
 ով անանկ զաղափար մը կըխօթէս ,
 որ աւ ուրիշ բան մը չի կընար ան նոյն
 գաղափարը անոր մոքին մէջը դնել :
 Երբոք Վատուծոյ յաւիտենական ան-
 իմանալի և անտեսանելի ըլլուսւն վը-
 րայ խորհինք նէ , կըսկսինք սքանչա-
 կալ . բայց երբոր բարեգութ հեզ
 ե չարչարեալ Փրկիչին մէջը Վատու-

ծոյ յայտնըվելուն վրայ խորհինք ,
մեր սիրտերը կըհալին : Յաւկիդ
մատղաշ մտացը մէջը մէկ յայտնի
գաղափար մը կրգնես , երբոր իրեն
կըխօսիս անոր վրայովը՝ որ մանտըր-
տիկ տղաքները իր զիրկը առաւ ու
օրհնեց անոնք : Եմէն Ք.րիստոնեայ
Փրկիչին սիրոյն պատմութիւնովը բուն
իր սրտին մէջը առաջ եկած ներգոր-
ծութենէն կրնայ դատել՝ թէ ի՞նչ զօ-
րութիւն ունի անիկա մէկ տղի մը սըր-
տին մէջը զդ ջման և երախտագիտու-
թեան մեծ այլայլութիւն մը արթըն-
ցունելու :

Ես մէկ փոքրիկ բարեկամ մը ու-
նէի Կաթան անունով՝ որ հիւընդցաւ
և մեռաւ : Իր հիւանդութեանը մէջ
հարցուցին իրեն թէ , “ Յաւի մէջ
եղած ատենդ նոր բանին վրայ ամէնէն
էվել կըսիրես մտմտալ ” . պատաս-
խան տըւաւ , “ Ծիսուս Ք.րիստոսի
վրայ ” :

Իմ եղբայրա՞ն որ ան տղին վարքը

գրեց, կըսկատմէ՞ թէ աւաթանը աս
զիշեր շատ հիւանդէ . իր սիրով շատ
ուժով ու արագ կըդարնէկոր, բայց
ինքը իր սովորականէն էվելի երջա-
նիկ է : Հարցուցի թէ ինչու . պա-
տասխան տրւաւ՝ Ենոր համար որ իմ
Փրկիչս շատ կըմօտենակոր ինձի :

Արդ՝ մայլեքը թող ջանան Եռա-
քելոց նմանիլ, և չարչարեալ Փրկի-
չը թող քարողէն իրենց զաւկընե-
րուն : Խող ցուցընեն անոնց թէ
Եստուած Ք.քիստոսով աս աշխարհիս
հետը հաշտրվեցաւ : Եւետարանա-
կան պարզ վարդապետութիւնը ասի-
կա է : Երդարե գրեթէ անկարելի
կերևայ մեղի որ մէկ տղի մը յօժարու-
թիմը փափաքելով յարի կցուի մէկ
բանի մը, որուն վրայով բացայայտ
գտղափար մը չի կրնար ձեւցունել
իր մտացը մէջ : Խօսէ քու զաւկիդ
հետը Ք.քիստոսի վրայով՝ որ զինքը
տուղծեց . Ք.քիստոսի վրայով՝ որ
մարմին առնելով մարդ եղաւ, ու չար-

չարանք քաշեց և մեռաւ դինքը փրկեցու համար . Վրիստոսի վրայով որուն դատողական աթոռին առջելը շուտով ինքը պիտի երեայ . Վրիստոսի վրայով՝ որուն փառաբանութիւնը պիտի երդէ . Վրիստոնեայն երկինքին մէջը անհատնում զարերով : Ասանկով թէ որ կլնամ այսպէս զրուցել , Ասուած պլարզապէս տղին հասկացողութեանը տակը կը մտնայ : Ան մայրը՝ որ շատ անդամ առ Փրկիչը տղին առջելը չենկարագրեր , և անոր չարչարանքները ու մահը իր ամեն աւուր պատմութիւնները չըներ , տակաւին անիկասորված չէ Աւետարանին ունեցած պարզութիւնը և զօրութիւնը : Բոլոր ուրիշ ջանքերը ասոր հետը բաղդատելով ոչինչ են :

Երբորդ . ՕՀ-ԿՐԿԵՐԱ-ԴԿԵ-ԱԿՈՒ-
ՇԵՔ : Աօրը պարտաւորութիւնն է՝
ոչ միայն իր պատկրներուն համար
աղօթք ընել , հապա՞քանի որ անոնք
պղոխիկ են անոնց հետը աղօթք ընելու

է : Յժող քու զաւկըներդ լսեն որ
 ջերմեռանդ սիրով կաղօթես թէ Աս
 տուած անոնք իր բարեկամները ընէ :
 Յժող տեսնան որ մեծ բաղձանք ունիս
 անոնց մեղքէ աղատ մնալնուն, և երկ
 նից համար պատրաստ գոնըվելնուն
 համար : Ան զգացմունքները որ մէկ
 մօր մը սիրտը կըկենդանացունեն ,
 փոքր 'ի շատէ զաւկըներուն սրտին
 վրայ պիտի անցնին : Աս ջերմեռան
 դութեան դործքերը երկար ատեն պի-
 տի յիշատակվին : Եւ թէ որ չի կըր-
 ցար կանուխ տեսնալ քու զաւկընե-
 րուդ բարեպաշտութիւնը՝ իբրև հա-
 տուցում մը քու ջանքերուդ և աղօթք-
 ներուդ , սակայն աս ջերմեռանզու-
 թեան ժամերը անոնց յիշողութեանը
 մէջ անանել նշան մը պիտի ձգեն որ
 ընաւ չի պիտի աւրըվի : Իոլոր զա-
 լու տարիներուն մէջ ան ժամերը իբ-
 րև խափանարարներ պիտի արգիլեն
 անոնք վնասակար մեղքերու մէջ ըն-
 կըղմելէն , և իբրև խղճմտանքին մու-

նետիկները բարձրածայն պիտի կան-
չեն դղման և առաքինութեան դառ-
նալու :

Մէկ մարդու մը վրայ՝ որ իր ունե-
ցած բնական ձիրքերուն համար, աղ-
նուականութեանը և շուայլութեանը
համար երեելի մէկն էր, կըպատմըվի
թէ մէկ իրիկուն մը երբ խաղի սեղա-
նին առջել նատեր էր, մէկ անսովոր
տրտմութեան կամ մտմտուքի մը մէջ
ինկաւ : Իր ընկերները սկսեցին իր ա-
նանկ ծաներ դէմք մը ցուցընելուն վր-
րայ խնդաւ : Առարդը ինքըզինքը վր-
րայ բերելով և ծիծաղական զըոյցներ
ընելով՝ որոնք միշտ կըգործածէր,
աշխատեցաւ որ բան մը չի ցուցընէ
անոնց, և ան կարճատե տրտմութիւ-
նը իրմէն մէկդի ձգէ : Շատ չանցաւ
նորէն խորունկ մտմտուքի մէջ ին-
կած, և ողբալի խորհուրդներով տրտ-
մած ու տիսրած երեաց : Եսիկա իր
ընկերներուն քովը անանկ մը ծաղը
ըլլալու ենթակայ ըրաւ զինքը, որ

չէր կընար ինքըզինքը անոնց ձեռքէն
 խալըտէլ : Երբոր միւսները ծաղը
 ընելով շատ մը կըխնդոյին իր վրան ,
 վերջապէս բերանը բացաւ ու բաւ .
 “Ճշմարիտը զրոցեմ ձեզի . անհրա-
 նար է որ երբեմն իմ միտքս չի գան
 ան աղօթքները որ իմ մայրս կընէր ին-
 ծի համար իմ անկողինիս քովը , տղայ-
 ութեանս ատենը : Քէպէտ և հիմայ
 ծեր եմես , բայց ան առջի տարինեւ
 ըուն իմ միտքիս մէջը եղած տպաւու-
 րութիւնները չեմ կընար մոռնալ” :
 Ասիկա մէկ մարդ մըն էր որ իր միտքը
 շատ աղէկ մշակված էր , և իր ունե-
 ցած բնական ձիրքերը անանկ բարձր
 էին որ իրեն զօրութիւն և մեծութիւն
 տըւին , թէ և ինքը անառակ կեանք
 վարեր էր . և սակայն ոչ ստա-
 ցած զիտութիւնները , ոչ անհամար
 զբաղմունքները և ոչ իր շուսյլութեան
 գործքերը կըցան ջնջել ան նելողոր-
 ծութիւնը որ մօրը ջերմեռանդ ա-
 զօթքները իրեն մոռացը մէջը զրեր է-

ին։ Ո՞րը աղօթքներուն ցած ու մեղ
միկ ձայնը իր յանցաւոր ընկերնեւ
ը ան ձայնէն էվելի ելան։ Ծարեպաշ
տօն մայրը՝ թէպէտ և մեռած, տա
կաւին կրխօսէր, սաւտիկ յանդիմա
նելով իր անառակ որդին։

Ծատ ուրիշ օրինակներ հնար է,
առաջ բերել հոս, որ աս պարտա
ւորութեանը հարկաւորութիւնը ցու
ցընէն։ Հետեւեալը անսնկ յարմար
օրինակ մըն է, և ան մնկ ուրախարար
քաջալերութիւն մը կուտայ, որ չեմ
կընար զանց ընել անիկա ու չի պատ
մել։

Քանի մը տարի առաջ պարոնին
մէկը օտար երկիրէ մը յանձնարա
րութեան գիր մը բերաւ մէկ ուրիշ
պարոնի մը որ մեծ քաղաքի մը մէջ
կըրնակէր։ Աս օտարականին միտքը
ու վարքը պակսութիւն չունէր, բայց
ինքը անհաւատ էր։ Ան պարոնը՝ ու
րուն որ յանձնարարութեան գիրը
բերաւ, և անոր կինը մարդասէր

Վրիստոնեաներ էին : Ուստի օտարականը սիրով ընդունեցին իրենց տունը , և ձեռքերնուն եկածին չափ հիւրասիրութիւն ըրին անոր : Օտարականին եկած օրվան իրիկունը՝ հանգըստութեան սովորական ժամը եկածին պէս , տանըտէրը զիտնալով թէ իր հիւրը ինչ կարծիքի կը ճառայէ , ըստ թէ , “Ճամանակը եկաւ” որ մենք սովորաբար հանդերձ ընտանեօք աղօթք պիտի ընենք . ուրախ կը լամ թէ որ մնաք և մեր հետը միաբանիք աղօթքի . բայց թէ որ էվելօք կը նաւուէք երթաւ հանգստանալը , դուք գիտէք” : Պարոնը մնալու հաճութիւնը ցուցուց . անատենը Աստուածաշունչէն գլուխ մը կարդացվեցաւ և բոլոր ընտանիքը ծունկի վրայ եկան աղօթք ընելու , ան օտարականն ալ հետերնին : Վանի մը օրէն ետև օտարականը ճամբորդութեան պատճառաւ ձգեց ան տունը՝ ուր որ այնչափ հիւրընկալութիւն ընդունեց , և մէկ նաւ

մը մտաւ ուրիշ երկիր մը երթալու :
 Երեք կամ չորս տարի անցնելէն ետև ,
 Աստուած նորէն առաջնորդեց անոր
 ան նոյն բնակարանը գալու : Ծայց
 սակայն՝ զարմանալի՛ բան , ի՞նչպէս
 ինքը փոխված էր : Ինքը հոն դարձաւ
 երջանիկ Վրիստոնեայ մը , բարե-
 պաշտօն և աղօթասէր խոնարհ մարդ
 մը եղած : Երիկվան երբոր խօսակ-
 ցութիւն կընէին՝ լսաւ . “ Անցեալ
 անդամին հոս որ եկայ՝ առջե իրիկու-
 նը երբոր բոլոր ընտանեացը հետ ա-
 ղօթքի կեցայ , առաջին անդամ ծունկ
 չոքելս էր իմ Ատեղծողիս առջել շատ
 տարիներէն հետէ ” : Աս գործս անանկ
 իր մտացը մէջը կենդանացուցեր էր
 իր մօրմէն լսած աղօթքներուն յիշա-
 տակութիւնները , որ բոլորովին տակ-
 նուվրայ եղաւ : Անստենը իր կերքը
 անանկ շարժեր էր՝ որ լսված աղօթ-
 քին մէկ բառը չէր լսեր սկիզբէն մին-
 չե վերջը : Եւ Աստուած ասիկա մէկ
 գործիք մը ըրաւ որ անհաւատութեան

սոսկալի անապատներէն Աստուած
պաշտութեան խաղաղութիւնին և ու-
րախութիւնին մէջը խօթեց անիկա :
Կարծեմթէ իրեն ծնողքը շատոնց գե-
րեզմանը իջեր էին հանդստանալու .
բայց իրենց աղօթքները որ զաւկընուն
համար և անոր հետը ըրին , մէկ զօ-
րութիւն մը ձգեր էին որ բնաւ չէր
կրնար մեռնիլ : Ուէպէտ և անոնք
շատ ջերմեռանդութեամբ աղօթքը ը-
նէին իրենց զաւկին համար՝ բայց թէ
որ անոր հետը աղօթք ըրած ըրլային ,
թէ որ իր քովիկը ծունկ չոքած և ա-
նոր ականջներուն լսել տըւած ըրլ-
լային իրենց սրտառուչ պաղատանք-
ները , իրենց տղան կարելի էր թէ
բոլոր իր կենացը մէջ իր Ատեղծողին
հետը չի հաշտըված պիտի մնար :

Չորրորդ . Առջեցու ու պատեհութեան
ինչերենինու ապօնու ընեն : Կարելի է
թէ շատ օդտակար ըլլայ Տէրունական
աղօթքը և ուրիշ պարզ աղօթքներ
ուրիշներ տղին : Բայց ասկից է-

վելի հարկաւոր է սորվեցունել ա-
 նոր որ բուն իր լեզուովը ու սրտովը
 շնորհակալ ըլլայ Աստուծմէ ան ան-
 համար բարութիւններուն համար որ
 բոլոր օրը վայելեց, ու թողութիւն
 խնդրէ նոյն օրվան իր գործած զանա-
 զան պակսութիւններուն : Տղայոց
 միտքը մասնաւոր բաներու վրայ կը-
 հանդչի . ընդհանուր բաներու վրայ
 կատարեալ ըմբռնում ունենալու սոր-
 ված չեն անոնք : Ենդհանրապէս մե-
 ղաւոր ըլլանիս խոստովանիլը միայն
 քիչ մը մեր կիրքերը կըշարժէ . բայց
 ամէն մէկ մեղքերնիս զատ զատ բա-
 ցատրելը մեծապէս կըխոնարհեցունէ
 մեղ : Աստուծոյ բարերար ըլլալը
 ընդհանրապէս ձանձնանիս շատ պըզ-
 տիկ ներգործութիւն մը կընէ մեր
 միտքերուն մէջը, քան թէ անոր ա-
 մէն մէկ բարերարութիւնները համրե-
 լը : Ուրեմն հարկաւոր է որ քու զա-
 ւակդ սորվի ամէն մէկ օրվան պատա-
 հած բաներուն վրայ մտմտալ՝ երբոր

նոյն օրը իրիկուն կըլլայ : Պէտք է ա-
 նոր միտքը ձգել իր վայելած ողորմու-
 թիւնները և դործած յանցանքները ,
 և պարտի սորվել իր երախտազիտու-
 թիւնը ցուցընել մէկին համար , և
 ներում թողութիւն խնդրել միւսին
 համար : Օրինակի համար ըսենք
 թէ զաւկըներուդ հայրը ճամբորդու-
 թենէ ետ դարձաւ իր տունը եկաւ .
 ասիկանոյն իրիկունը անսառվոր ուրա-
 խութեան մէջ ձգեց անոնք : Երբոր
 քնանալու ժամը կուդայ , ցուցուր ա-
 նոնց թէ ինչպէս երջանիկ իրիկուն մը
 անցուցին : Զքուցէ իրենց թէ Վատ-
 ուած էր որ իրենց հայրը պահպանեց ,
 ու անիկա ողջ առողջ տուն դարձուց :
 Եւ ասանկ Ճշմարիտ երախտազիտու-
 թիւն ձգելով իրենց սրտին մէջը , առ
 երախտազիտութիւնը յայտնել տուր
 անոնց իրենց պարզ ու անարուեստ
 լեզուով : Վասնկ իրենց առջեր ցու-
 ցընելով երևելի գործքերը և Վատու-
 ծոյ իւրաքանչիւր ողորմութիւնները ,

ոչ միայն զիւրութիւն պիտի ունենան
 աղօթքի մէջ, հապա շատ աղջու կեր
 պով պիտի սորվին իրենց բոլորովին
 Վատուծմէ կախեալ ըլլալը : Օգու
 շութիւն պէտք է ընել ևս, որ Վա
 տուծոյ պարզեած հասարակ ողորմու
 թիւնները դանց չըլլրվի : Օմէ որ անձ
 բեային օր մըն է, ցուցուր Վատուծոյ
 բարերարութիւնը անձրեւ խրկելուն
 համար : Օմող տեսնան բայ ու յայտ
 նի, որ իրենց երկնաւոր շայըն է ան
 անձրեւ խրկողը, որ իր զաւկըները
 ուտելու կերակուր ունենան : Օմէ որ
 զիշեր է, ցուցուր անոնց թէ ինչ պի
 տի պատահի թէ որ Վատուած նորէն
 արել մօրմին ելլալ չի տայ ու անոնց
 վրայ չի ծագէ : Օմէ որ հարկաւոր
 հանդերձները շինվեցաւ զիրենք տաք
 պահելու համար, ցուցուր իրենց թէ
 Վատուած ինչպէս կաճեցունէ բուրզը
 որ իրենք տաքնան : Վամէն մէկ մայր
 կրնայ անոնց առջեւ դնել ասանկ ան
 համար մուածութիւններ, որոնք աշ

նոնց մտացը խորհուրդները կընդարձակեն, Աստուծոյ վրայ գիտութիւննին կեվելցունեն, երախտագիտութիւննին կըշարժեն, ու անոնց դիւրութիւնները մը կուտան աղօթք ընելու, որ իրենց հաստատուն և անդին ստացուածք մը պիտի ըլլայ ան: Խորդ ըստ վի թէ ժամանակ չունին: Բայց ան մայրը որ աս բանիս հարկաւորութիւնը պէտք եղածին պէս գիտենէ, ու ըիշ ինչ բան պարտաւորի նէ ընել՝ կարելի է անիկա զանց ընել, սակայն իր գաւկըներուն քովը հաւատարիմ գտնըվելու համար հարկաւ ժամանակ պիտի գըտնայ:

Կոյն ընթացքը բռնելու է նաև անմց մեղքերը խոատովանցունելու: Աստուծոյ աս ողորմութիւնները ցուցընելով քու գաւկիդ, դիւրին կերպով կընաս իմացունել իրեն թէ բաւական երախտագիտութիւն չունենալով մեղաւոր է ինքը: Գուցէ անիկա ան օրը յանցաւոր գտնըվեցաւ սուտ մը ըսե-

լով, կամ անհնաղանդութիւն ընելով, և կամ բարկանալով : Յուցուր իրեն յանցանքը, ու առաջնորդէ իրեն՝ որ իր ըրած բանը Կատուծոյ առջեր խոստովանի՝ ու թոլութիւն խնդրէ : Դիցուք թէ տղադ բարկանալով իր քըոջը զարկաւ, քնանալէն առաջ անոր գործած մեղքը իր միտքը ձգէ : Յուցուր իրեն թէ ինչ չարութիւն էր ըրածը, և Կատուած ինչպէս սրթողած պիտի ըլլայ իրեն : Ըսէ իրեն թէ քընացած ատենը թէ որ Կատուած չի պահպանէ զինքը, պիտի մեռնի : Վասնկ վարժութիւններով գրեթէ ամէն տղայ կըփափաքի թողութիւն խնդրել, և հաւանակաբար աս հետեւեալ աղօթքին պէս աղօթք մը պիտի ըսէ : “Ո՛վ Տէր ես չար տղայ մըն եմ. ես իմ քոյլու ծեծեցի, շատ կըցաւիմ և մէյմալ ասանկ բան չի պիտի ընեմ. ով իմ Կատուածս ներէ ինծի հիսուս Քրիստոս իմ Փրկիչիս համար” : Վզօթքը լըմըննալէն ետեւ մայրը ևս

տղին անկողինին քովեկը թող ծունկ
չոքէ, ու իր զաւկին մեղքը խոստովա-
նի, և աղացէ որ Աստուած թողու-
թիւն շնորհէ :

Ճնողքները երբեմն կըծիծաղին ան-
տղայական խօսքերուն վրայ՝ որ տղաք
կըդործածին աղօթքի մէջ . և երբեմն
կըվախնան որ անոնց խօսքերը անվա-
յել են : Բայց Աստուած խնդիրքին
անկեղծութիւնով ըլլալուն կընայի
պարզապէս : Երկուք ու կէս տարե-
կան պղտի տղէկ մը անդամ մը աս
աղօթքը ըրաւ . «Տէր իմ օդնե, ին-
ծի խնդալ ու չի լաւ, երբոր առտը-
վանց իմ մայրս իս կըլըւայ : Եւ Աստ-
ուած նոյնչափ մարդասիրութիւնով
չի՞ նայիր աս պղտի տղէկն խոնարհ
խնդրուածքին, որչափ մարդասիրու-
թիւնով որ կընայի մէկ մարդու մը
ջերմեւանդ խնդիրքներուն՝ որ տա-
ռապանքի մը մէջ օդնութիւն կըխնդ-
րէ, կամ իր խռոված կիրքը յաղթե-
լու համար զօրութիւն կուղէ : Ասանկ

խնդիրքը որ յօժաբութեամբ տղի մը
սրտէն դուրս կուգայ , հարազատ ա-
ղօթք է , և կըցուցընէ անանկ զգա-
ցութիւն մը որ միշտ արծարծելու է :

Հինդեբորդ . Յայս ա-նեցէն որ առ-
աջիւ ճշարնեա ՚Վ.ը էստոնեայ հը ողեան ըլլոյ :
Են սիրտը որ տրտմութեան և սիրոյ
ենթակայ է , ճշմարիտ զդ ջման և
Վատուածային սիրոյն ալ ընդունակ է :
Ուէկը չի կընար տարակուսիր աս քա-
նիս վրայ , թէ մէկ տղայ մը իր կեանքին
խիստ առջի տարիներուն մէջը բոլոր
ան ընդունակութիւնները ունի , որոնք
հարկաւոր են անիկա ճշմարիտ ՚Վ.ը
րիստոնեայ մը ընելու : Ոչ ալ
տարակոյս մը կընայ ըլլըվել անոր
վրայ թէ ան կանուխ ժամանակին մէ-
ջը միտքը էվելօք ընդունակ է ամեն
տպաւորութիւնները ընդունելու , աշ-
խարհի զօրութիւնը տկար է , ու սիրոյ
առուն դիւրութեամբ կարելի է դէպ
՚ի Վատուծոյ դարձունել : Ամէն մէկ
մայր պարտի ՚Վ.ը րիստոնէական վար-

ժութեանց պատրաստութիւնները կա-
 տարելու տալ ինքը զինքը , ան հաս-
 տատուն յուսովը՝ թէ Շատուած իր
 օրհնութիւնովը իր ըրած ջանքերուն
 յաջողութիւն պիտի տայ : Պարտի
 ան մայրը զգալ ևս որ եթէ իր զաւ-
 կին կանուխ չփցուցընէ նէ բարե-
 պաշտութեան նշանները , յանցանքին
 շատը իր վրայ կիյնայ : Ուստի ամեն
 մէկ մայր իր կարողութեանը չափ թող
 ջանայ իր զաւկըններուն սրտին մէջը
 մեղաց վրայ տրտմելու և Փրկիչին ա-
 պաւիննելու կիրքերը արթընցունել :
 և երբոր աս զգացումները իր զաւկին
 սրտին մէջը ու անոնց վարքին վրայ
 կըտեսնայ , ալ անիկա թող շնորհա-
 կալ ըլլայ Շատուածմէ և թող քաջալե-
 րի : Պարտի ինքը մայրական խնամով
 հըսկել որ փորձութենէ ետ պահվե իր
 զաւակը , և որ ան տկար բոցը հետ-
 զէտէ պայծառ լուսով վառի : Քը-
 րիստոս աս մատղաշ գառնուկը քու
 պահպանութեանդ յանձնեց : Ինչու

համար մեկ մայր մը հաստատ չի պիտի
 յուսայ թէ իր աշխատութիւննեւ
 լուն վախճանը աս պիտի ըլլայ : Եստու
 սած չի քաջալերեց մի անիկա յուսալ , խոստանալով որ իր օրհնութիւնովը օդնութիւն պիտի հասնի :
 Ո՞էկդի կեցիր ուրեմն թերեհաւաստութենէ : Արկբայութիւնը Եստուծոյ խոստմունքներուն չի հաւաալ է :
 Արթէ զաւակդ և աղօթէ քու զաւկիդ համար , և յոյս ունեցիր որ անիկա շուտ մը պիտի ընդունի Եստուծոյ շընորհքը , և բարեպաշտ Քրիստոնեայ պիտի ըլլայ : Եսանկով խիստ հաւանական է որ քու սենեակիդ մէջը քուսած մանկական բարեպաշտութեան պտուղներովը քու սիրտդ ուրախ պիտի ըլլայ . երախտապարտ զաւակները իրենց կեանքին մէջը քեզ պիտի պատուեն , և երկնից մէջը քու ուրախութիւններդ պիտի մեծնան , քուկին սիրական զաւկըններուդ դէմը ելլալով հոն :

ԳԼՈՒԽԸ · Բ:

ՆԵՐԻՆԱՐԱԿԱՆ :

Ա, ախրնթաց գլուխներուն մէջը շատ
անդամ խօսվեցաւ ան չարաչար
հետեւանքներուն վրայ որ ողարտաւու-
րութիւնը զանց ընելէն կըպատճա-
ռին : Ասիկա խմանալով կարելի է թէ
քանի մը մայրեր նեղութեան մէջ
մտնան և տրտմին : Ենտարակոյս
Ճմարիտ է թէ զաւակաց անաւակ
վարքը մայրերը սաստիկ նեղութիւն-
ներու մէջ կըձգէ : Բայց պէտք է
զիտնալ որ երբ Ճնողական հաւասար
մութիւնը Էստուած օրհնէ նէ՞ ինչպէս
որ սովորաբար կընէ, անոր հետեւանքը
անսանկ ուրախութիւն է, որ էվելօք
կըպատշաճի երկինքը եղողներուն
քան թէ երկրիս վրայ : Մարդկային
սիրտը ընդունակ չէ էվելօք աղնիւ-
քերկը ութիւններուն քան որչափ Ճնու-

դական մերձաւորութիւնը ընդունակ է :
 Ինչ ուրախութիւն է երբոք մայրը
 առջե անգամին իր զաւակը իրեն սրտին
 վրայ կըսեղմէ : Ի՞նչ բերկրութիւն է
 անոր երեսին վրայ խաղացած ան առ-
 ջի խնդումը տեսնաւ : Այս մէկ տղէ-
 կի մը բուն ծնած օրվան մանկութիւնը
 անանկ ուրախութիւն մը կըբերէ ոք
 միայն մէկ մայր մը կընայ դիտնաւ
 ան : Օաւկըներնուն վրայ ունեցած
 հոգերը անգամ բերկրութիւն են ի-
 րեն : Եւ երբոք քու փոքրիկ տղադ
 մանկութեան երազի նորան հասակը
 անցուց ու տղայութեան մտաւ, և թե-
 թև է շարժմունքով ու առոյդ տղա-
 յական հանճարով, ուրախութեան
 նոր աղքիւրնելը չե՞ն մի բացվիր քու
 մոքիդ առջին : Քու երջանիկ զաւկիդ
 սրտանց խնդալը լսես նէ, իր առոյդ
 մտացը բացատրութիւնները տեսնաս
 նէ, և իր կաթողին համբոյրը ու սի-
 րալիր գրկախառնութիւնը զգաս նէ
 անպատմելի վայելչութիւններով չե՞ս

մի լենար : Երբոր տեսնաս որ քու
 տղադ դիմացդ կըվագէ իր երեսը ու
 րախութիւնով և իր սիրտը սիրով
 լցված , և երբ լսես որ թոթովախօս
 լեզուով «Վարիկ» կըկանչէ քեղ ,
 մեծ հաճութիւն մը չէ՞ս մի իմանար :
 Երբոր օրբատօրէ իր սիրոյն և հնա
 զանդութեանը նոր փորձերը կընդու
 նիս , և կըտեսնաս որ իր սիրտը վա
 ռած է վսեմ ու ազնուական ոգիով մը ,
 կըդգաս որ քու քաշած ցաւերուդ
 սրամաշութներուդ ու աշխատութիւն
 ներուդ փոխարէնը հարիւրապատիկ
 հատուցում եղած է : Տրանի մը տա
 րիէն ետև քու հոգերդ կըվերջանան ,
 զաւկըներդ կատարելութեան կըհաս
 նին , և ան օրհնութիւնովը որ միշտ
 կըյուսանը թէ մեր ազօթքով եղած
 ջանքերուն հետը կընկերանայ , անոնք
 բարեպաշտութեան հաստատուն ըս
 կըզբունքներովը և ազնուական յօժա
 րութիւններով դարդարված սլիախ
 դտնըվին : Ուրեմն մայրերը ի՞նչ

պեսցումներով չորս կողմերնին կընտ
 յին իրենց երջանիկ և բարեյաջող
 ընտանեացը վրայ : Ա. անոնք երկրիս
 վրայ ըլլալու հատուցումները կընդու^ն
 նինկոր : Քանի՞ քանի՞ ծեր ու որ
 բւարի մայրեր իրենց ծերութեան
 տարիները ուրախութեամբ անցուցին
 իրենց աղջկ մեր կամտղին իրենց վրայ
 ունեցած սիրալեր հոգողութիւններու
 վր : Ո՞վ այնչափ սիրով արթուն պիտի
 հսկէ քու վրադ հիւանդութեանդ ատե^ն
 նը որչափ քու աղջեկդ , որուն սիրալ
 բոլբոքած է Աստուածպաշտութեան
 սկզբունքներով որ դուն անոնք հոն
 տպաւորեցիր : Շօերութեան հասա
 կին մէջը վայելելու դրեթէ մի միայն
 երկրաւոր բերկրութիւնը՝ երջանիկ
 և երախտազէտ զաւկըներու վրայ նա
 յելու բերկրութիւնն է : Ան յար
 գութեան ու սիրոյ նշանները որ ա
 նոնցմէ կընդունիս , քու քաշած բոլոր
 աշխատութիւններուդ փոխարէնը
 վարձահատոյց պիտի ըլլան քեզի ա

մէն օր : Եւ երբոր քու զաւկըներուդ
զաւակները քու բոլորտիքդ կրղիզվին
յարգութեան և սիրոյ անդադար նշան
ներովը , անոնց խանդակաթ սիրովը
քու մանկութիւնդ նորոգված պիտի
դտնաս : Երբոր բոլոր երկրաւոր ու
լախութիւնները թումին , կրակին
քովը շարված մանտրտիկ շատախօսնե
րուն վրայով չի ձանձրանալու վայել
չութիւններ պիտի դտնաս :

Բայց ասկից էվելի փառաւոր եր
ջանկութեան տեսարան մը կայ : Ք.ը.
րիստոնեայ ընտանիքը նորէն մէյտեղ
պիտի հաւաքվի : Օ՞նողքները իրենց
զաւկըներուն հետը պիտի ընկերանան
երկնից մէջը : Ու երբոր բոլոր ընտա
նիքը երջանկութեամբ հոն հաւքըվին ,
երբոր նատին կանանչ մարգադետին
ներուն վրայ ու հանդարտ ջուրերուն
քով , երբոր Աստուծոյ անոնց համար
պատրաստած բնակարանները մտնան
ու ելլան , միայն անատենը պիտի
զգան ան կատարեալ վայելչութիւնը

որով Աստուած պիտի վարձահատոյց
 ըլլայ հաւատարիմ մայրերուն : Ինչ
 պէս ուրախութեամբ լեցուն է մտմը
 տալը թէ բոլոր ընտանիքը նորէն
 կընան մէյտեղ հաւաքիլ քաղցրաց
 նուագ երգերու և յաւիտենական ցըն-
 ծութեան աշխարհին մէջը , ուր
 տրտմութիւնը ու հաւաչանքը յաւի-
 տեան հալածական պիտի ըլլան : Եր-
 բոր ան երջանիկ վիճակիդ կացութե-
 նէն ետ կընայիս երկրիս մէջը քաշած
 պանդխտութեանդ վրայ , ամենեին
 չես կընար զդջալ որ և իցէ քաշած
 աշխատանքիդ և նեղութիւններուդ
 վրայ՝ որ յանձն տուիր զաւկըներդ
 մեծցունեկ քեզի հետ փառաւորեալ
 անմահութեան մը ժառանդ ընելու
 համար անոնք : Այս բաւական քաջա-
 լերութիւն կայ ամեն մէկ մօր , առաստ
 քաջալերութիւն կայ անխոնջ աշխա-
 տելու : Երբոր խորին մայրական սի-
 րով քու հնապանդ և սիլալիր զաւկը-
 նելուդ վրայ կընայիս , որոնք քու կը-

բակիդ բոլորտիքը շարվեր են . քու
խորհուրդներդ հանդերձեալ աշխար-
հին մէջը ըլլալու յաւիտենական և
խխտ գերազանց վայելչութիւններուն
վրայ դարձուր , և ահա ասիկա մեծ
քաջալերութիւն է քեզի :

Կարելի է որ զաւկըներնիս մեզմէ
առաջ դերեղմանը երթան . և ասիկա
սրտապատառ կակիծ մըն է : Բայց թէ
պատճառ ունինք հաւտալու թէ անոնք
Փրկիչին պատրաստած բնակարաննե-
րը գացին , ան լեղի կակիծին մեծ մա-
սը մէկդի կրվերնայ : Անոնք մեզմէ ա-
ռաջ իրենց բնակարանը դացին . ա-
նոնք փոթորիկներէն պահպանված են .
անոնք ամէն տրտմութիւններէն աղա-
տեցան : Հրեշտակային թևերով դէպ
՚ի վեր ելլալով ու յաւիտենական ու-
րախութիւններով կենդանանալով ,
պատրաստ են մեզի բարի եկաք ըսե-
լու , երբոր Աստուած իր բարի ժա-
մանակին մեզ ան երջանիկ աշխարհ-
ներուն մէջը մոցունէ : Անդամ մը

պարոնին մէկուն հարցուցին թէ արդեօք ինքը բնաւ զաւակ մը կոլարնցուցե՞ր է մի (այսինքն մէկ զաւակը մեռե՞ր է մի .) “ Չէ . պատասխան տրաւ մարդը . երկու հատ ունիմ երկինքը , բայց մէկ զաւակ մը չի կորսընցուցի ես” :

Երկրորդ . Այսրեւը այնշտէ ուստահանելու գործունեութիւն ունին իրենց և եպաւ գործունեութիւն երջանիւն և եպաւ վըստէ ունի եպաւ իրենան ունենաւ : Այինչեւ հիմայ աշխարհի պատմութիւնները պատերազմի ու արունի վրայ եղած են : Պատերազմը իր անհամար վայերը ամէն կողմերը տարածեց : Եղեալներուն աղաղակը անդադար երկինքը ելաւ : Ուր պարտինք փնտրուել ան զօրութիւնը որ առ տեսարանը պիտի փոխէ , ու երկիրը խաղաղութեան ու բարերարութեան պտուղներով պիտի լեզունէ : Այսրեւուն սորվեցուցած քրիստոնէութեան մէջը պարտինք փընտը

ուել անիկա : Վանդի տասնեն ինը
 Ճշմարիտ է , թէ մարդուս բնաւորու-
 թիւնը որոշողը իր առջե վեց կամ եօ-
 թը տարիներն են : Ենատենը աշխար-
 հը ուրիշ կերպարանքի մը պիտի
 մտնար : Ենատենը այսչափ ապելջա-
 նիկ ընտանիքներ և սիրտերնին կոտ-
 րած մայրեր չե պիտի տեսնայինք :
 Ուեկ նոր մարդկային ցեղ մը պիտի
 յառաջ գար , և անողորմութիւնը ու
 պատիժը ընաջինջ պիտի ըլլային :
 Ով մայրեր , մտմտացէք ձեր Ատեղ-
 ծողին ձեր ձեռքը տըւած իշխանու-
 թեանը վրայ : Ուրիշ երկնաւոր դօ-
 րութիւն մը չի կայ որ ձերինին հետը
 բաղդատվի : Ենհամար պատճառներ
 մէյտեղ եկած այնչափ դօրութիւն
 չունին մեր մարդկային ցեղին երջան-
 կութիւնը կամ թշուառութիւնը պատ-
 ճառել , որչափ որ տունը տըրված
 վարժութիւնները ունին : Եստուած
 մէծ աստիճանի մը մէջ ձեզ մարդկայ-

ին ցեղին մեծ ընտանեացը պահապանները ու վերակացուները ըրաւ :

Երրորդ . Կառույէ մէկը իւն հարցունէ լիէ ,
հայրենուն ընթաւ բան իւն չէ իսկ մէ : Ան-
տարակոյս անոնք աւ ընելու բաներ
ունին , և խիստ շատ բաներ : Բայց
աս գրքոյկո մայրերուն պարտաւորու-
թիւնները իրենց մտացը մէջ տպա-
ւորելու համար պատրաստվեցաւ :
Սակայն աս գրվածներէն չի հասկըց-
վելու համար թէ ընտանեկան կառա-
վարութեան բոլոր պարտաւորութիւն-
ները մօրը վրայ կիյնայ , համառօտ
մը կըկամիմ նշանակել , թէ մէկ հայր
մը չի կայ որ կարող ըլլայ ինքը ինքը
արդարացունելու մօրը պարտաւորու-
թիւններուն կէսը հաւասարապէս իր
վրան չառնելով : Ո՞էկ հայր մը շատ
անդամ զանազան պատճառներ կըգըտ-
նայ ինքը ինքը իր պարտաւորութիւնը
կառարելէն ազատելու համար . բայց
ափառս . անիկա ասանկ ընելով ո՞չ իր
զաւկըները կընայ կործանմանէ ազա-

տել , ոչ ալ ինքը զինքը ան վայեւ
 րէն , որ իր ղանցառութենէն կը պատ-
 ճառին : Ամօթով ու տրտմութիւնով
 զերեզմանը իջած առենը անօդուտ
 մխիթարանք մըն է իրեն մոտածել թէ
 ինքը ոչ ծուլութեամբ հապա ուրիշ
 զըաղմունքներով իր առենը անցու-
 ցեր էր , երբոր իր զաւկըները ձղեր
 էր որ ընկերութեան մէջ վատահամ-
 բաւ ու խայտառակ ըլլալու համար
 մեծնան : Ի՞նչ պարտաւորութիւններ
 կան որ զաւկըներնուս վրայ մեր ու-
 նեցած պարտաւորութիւններէն էվե-
 լի մեծ ըլլան : Երբեմն Եկեղեցակա-
 նը կըսէ թէ շատ գործ ունի կատարե-
 լու . իր ժամանակը ըոլորովին իրը չէ .
 և թէ պարտաւորած է իր զաւկըները
 զանց ընելու : Հիմայ անոր հարցու-
 նէնք թէ , Արի՞ վրայ պէտք է առաջ
 հող տանիլ , իր ժողովուրդի՞ն թէ
 իր զաւկըներուն : Աստուած անիկա
 ժողովուրդի մը վրայ զրաւ , ու նաև
 ինքը մէկ տան մը հայր ըրաւ . և հիշ

մայ նոր պարտաւորութիւնը Վասուած
 առաջ կըխնդրէ իրմէն : Եւ սակայն
 շատ դիպուածներ հնարէ ցուցընել ,
 որոնց մէջ մինչև անդամ ջերմեւանդ
 Վասուածպաշտութիւն և ընդհանուր
 օգտակարութիւն ունեցող Նկեղեցա-
 կանները ինքը ինքնին բոլորովին աշ-
 խատութեան և ընդհանուր պարտա-
 ւորութիւններնին կատարելու տըւին ,
 և իրենց ապէրջանիկ զաւկըները թո-
 ղուցին որ անկիրթ ու մոլի մեծնան :
 Ո՛վ որ հայր է , անիկա զանազան
 պարտաւորութիւններ ունի կատարե-
 լու , որոնք ժամանակ և ջանք կըպա-
 հանջեն : Եւ ո՞ր ժամանակը էվելօք
 օգտակար կերպով մը գործածված
 կըսեպվի , քան թէ ան ժամանակը՝ որ
 անցած է վարժելով տանը զաւկընե-
 րը՝ որոնք աշխարհի մէջ բարիք ընե-
 լու համար պիտի ապրին , զերեզմա-
 նին մէջը մենք լուիկ պատկենուս
 ետքը : Վասուածանը զաւկըներուն
 դօրութեանը հաւասար մէկ զօրութիւն

մը կրնանք մի ձգել : Ի՞նչ մեծ բան
 կրնանք կտակով ձգել աշխարհիս
 քան թէ ջերմեռանդ Աստուածովաշ-
 տութիւնը և փութաջան օդտակարու-
 թիւնը մեր բաղմաթիւ զաւկըներուն :
 Ելս . ուրիշ մեղք մը չի կայ որ այս-
 չափ հեռուն հասնի , և այսչափ լայ-
 նատարած աւերմունք գործէ , որչափ
 որ ծնողքներուն զանցաւութիւնը կը-
 նէ : Չի կրնար մէկ հայլ մը ինքը զին-
 քը արդարացունել աս իր պարտաւո-
 րութիւններէն ետ կենալով : Ուեր
 վրայ պատուէր դրված առաջին պար-
 տաւորութիւնը է՝ բուն մեր սիրտէրը
 ջանացողութեան մէջ պահել : Երկ-
 րորդը՝ մեր ընտանիքը դէպ ՚ի Աստու-
 ծոյ ուղղել : Երրորդը՝ մեր դրացի-
 ներուն հողեռը բարութեանը վրայ
 մտմտալ : Չորրորդը՝ աշխարհի լու-
 սաւորութեանը համար ձեռքերնուս
 եկածը ընել : Եւ սակայն ո՛րչափ Եւ-
 կեղեցական անձինք իրենց զօրութիւ-
 նը ունայնացուցին , մտքերնուն խա-

ղաղութիւնը աւրեցին , և իրենց սիրտէրը կոտրեցին , իրենց զաւկըներուն պարտքերնին եղած պարտաւորութիւնները զանց ընելով : Ասկէց՝ ի դատ մեր բնակած քաղաքներուն մէջը խիստ երեւելի անձինքներէն շատերը աս կերպովս նեղութեան ու անպատութեան մէջ ինկան : Եւ աննեղութիւնները պարտին էվելօք մեծնաւ երբոր իրենց խղճմուանքը կըդրուցէ իրենց թէ ինչ որ ցանեցին նէան կըժողվենկոր : Ես չեմ ուզեր աս զիրքին երեմները կարդացող ծնողքներուն մէկին սիրտը ցաւցունել , բայց չեմ կրնար զգուշութեան ձայն մը տալէն ետ կենաւ , ան աւերմունքներուն նայելով՝ որ մեր հիմակվան ցուցըցած պատճառներէն եղան ու կըլւանկոր ալ : Ունծապէս կըսխալին անհայրերը՝ որոնք ուսումնականութեան պատաղած , կամ առուտուրի հոգերով ծանրաբեռնած ըլլալով զաւկըներնին վարժապետի մը կըյանձնեն , ու անոր

ամսականը վճարելով կրկարծեն թէ
 իրենց պարտաւորութիւնը կատարեցին : Եսիկա ինչպէս աւերմունիք պատճառող բան մըն է օգտակարութեան և երջանկութեան : Ըստ աղէկ է մէկ մարդու մը աղքատ ըլլալ, և շատ աղէկ է խոնարհ ըլլալ, քան թէ մեզ իրենց հայր կանչողներուն խառնազնաց վարքովը բոլոր կեանքելնու մէջ անպատիւ ըլլալ, և մեռնելու ատեննիս մեր զաւկըներուն ձեռքովը փուշերով լեցուցած բարձի վրայ դընել երեսնիս : Եմէն մէկ մարդ՝ իւ կեանքին մէջը ինչ վիճակի մէջ ըլլայ թող ըլլայ, կապված է իր զաւկըներուն վրայ ունեցած պարտաւորութիւններուն զգուշութիւն ընել, գիտնալով որ բոլոր իր կատարելու պարտաւորութիւններուն մէջը ամենէն երևելինները անոնք են : Ուէ որ անոնք զանց ընէ, անտարակոյս լեղի հետեւանքներ պիտի քաղէ անիկա : Ինքը հով ցանեց և պարտի փոթորիկ քաղէլ :

Այէկ ուրիշ բան մըն ալ պարտիմ
 հոս նշանակել , որ շատ հարկաւոր է
 հայրերուն : Հայր մը միշտ պարտի
 աշխատիլ որ իր զաւկըներուն սորվեց
 յունէ իրենց մայրերը պատռել : Իձէ
 որ Հայրը աս բանս չընէ , մօրը դըժ
 ւարութիւնները խիստ շատ պիտի
 ըլլան : Բայց ուր որ կըտեսնըվի թէ
 ձնողքները իրենց մէջը իրարու հա
 մաձայն կամք մը ունին , հոն մայրա
 կան զօրութիւնը էվելօք կուժովնայ :
 Մայրական սիրոյն ու պատիւին մէջը
 բան մը կայ , որ մէկ հաճելի ներդոր
 ծութիւն մը կընէ տղոց սրտին վրայ :
 Ենանց վարքը կըզոէ ու կըկատարեց
 լագործէ , և անոնք անպատռութեան
 մէջ ձգելու մոլութիւններուն դէմ
 զօրաւոր պահապան մըն է ան : Մաս
 նաւորաբար մանէ զաւկըները երկան
 տուեն չեն պատռէր իրենց մայրը թէ
 որ տէսնան թէ իրենց հայրը սիրով ու
 յարդութեամք չի վարիր անոր հետը :
 Հաղեւ թէ կընառ մէկ անպատակ մարդ

մը դանաւ որ իր մանկութենէն սոր
 ված ըլլայ սիրով ու պատուով նայիւ
 իր մօրը : Ո՞էկ տղայ մը ընդհանրա
 պէս մօրը անհնաղանդութիւն ըրած
 առենը կըսկըսի մոլութիւններուն
 ճամբան բունել : Վասնկով ճամբայ
 կըրացվի անոր բոլոր ծնողական իշ-
 խանութիւնը զանց ընել բանի տեղ
 չի սեպել : Ալ անառենը շուտով
 կրյառաջանայ յանդնաբար արհա-
 մարհել բոլոր օրէնքները Վատուծոյ
 և մարդկան : Շատ թշուառական
 մահապարտներ կախվելու առեննին
 դառն որ իրենց չարութեանը ընթաց-
 քը իրենց մանկութեան առեննին էր ,
 երբոր սկսեր էին իրենց մոյըներուն
 հրամանին անհնաղանդութիւն ընել .
 և իմացան ու խոստովանեցան թէ ա-
 նատենը հնաղանդիւ սորված ըլլոյին
 նէ , իրենց վարած բոլոր ետքի կեան-
 քը կարելի է թէ տարբեր ըլլար :
 Ուստի առաջին հարկա որ բանն է՝ ա-
 մեննեին զանց ընել մէկ բան մը՝ որ

մեծ ու մշտնջենաւոր զօրութիւն մը
կուտայ մօրը իր զաւկըներուն մոտացը
վրայ :

Չորրորդ . Օստան իբլեւը առհետու
պիտք է ոք յաբարութիւն առջև ծնողընէ-
ռը : Եւ սակայն որչափ ծնողըներ կան
որ աս պարտաւորութիւնը դանց կը-
նեն : Վրդարեւ ուրիշ բան մը այնչափ
հարկաւոր չէ ծնողըներուն ու զաւկին,
որչափ որ ընտանեաց կառավարու-
թեան համար աղէկ կանոն մը ունենա-
լը : Ուստի ծնողըները պարտին աս
նիւթին վրայով զրված գիրքերէն ի-
րենց օգնութիւն փնտըռել , ու ան-
ընթացքով իրենց զաւկըները վար-
ժել : Տղոցը միտքերը կառավարելու
ու զօրացունելու արհեստը զրեթէ ան-
սահման կատարելութեան ընդունակ
է , և մենք մեր զաւկըներուն անհաւա-
տարիմ կըլլանք թէ որ ուրիշներուն
ըրած փորձերը չի կարդանք և չի դոր-
ծածենք նէ : Պէտքը չէ որ խաւարին
մէջը գլուորելով քալենք , երբոր լոյսը

մեր չորս կողմը կրծագէ : Ինչպէս որ
ուրիշ գիտութիւնները զլիսաւոր ըս-
կղըունքներ ունին , անանկ աւ զո-
ւակ կրթելու գիտութիւնը : Եւ շատ
ծնողքներ կըսխալին և իրենց զաւկը-
ներուն կըվնասեն , թէ որ խրատ ու
խորհուրդ չառնեն զաւակաց վարժու-
թեան վրայ եղած գիրքերէն՝ որոնք
շատ դիւրին կերպով հնար է ձեռք
ձգել :

Ինչպէս մեծ պիտի ըլլայ ան մօրը
տրտմութիւնը , որ իր ըրած զանցա-
ռութեանը պատճառաւ իր ընտանիքը
թշուաւութեան մէջ ձգեց : Անիկա-
իր անսաւակ որդոցը վրայ կընային և
ինքըզենքը կընախատէ արդարու-
թեամբ մտածելով որ եթէ մէկ տար-
բեր ճամբայ մը ըռնած ըլլար նէ ,
կարելի է թէ անոնք իրեն սրտին ու-
րախութիւնը և երջանկութիւնը պի-
տի ըլլային : Պուցէ բուն իր զաւկընե-
րըն աւ ինքը կընկախատեն , և իրեն դ
բուռը յանցանքները ու թշուաւու-

Թիւնները անոր անկարդ կառավարու
 թեանը կուտան : Ենառակ որդիի մը
 ըրած ասանկ դաստախաղութիւնը արդ
 եօք ի՞նչ չպէս պիտի ծակէ մէկ բարե
 պաշտ մօրմը սիրտը : Ինքը կընալ
 սորվել իր պարտաւորութիւնը . բայց
 զանց ըրաւ անիկա սորվելը , և աննե
 լելի տգիտութիւնով իր զաւակը կու
 ծանեց : Ոէկ խանդակաթ մայր մը թէ
 որ տգիտութեամբ թունաւոր դեղ մը
 տայ իր զաւկին և հետեւապէս տեսնայ
 որ իր զաւակը հոգեվարութեան ցա
 ւերու մէջ ինկած հոգին աւանդելու
 վրայ է , անպատմելի վեշտով անոր
 սիրտը կըլենայ : Բայց որչափ էվելօք
 սոսկալի բան է տեսնալ որ մեր վնա
 սակար տգիտութիւնովը զաւկընելիս
 բարոյապէս կըկործանենք : Ով էվե
 լօք չուզէր իր տղան կամ աղջիկը գե
 լեզմանին մէջը պառկած տեսնալ ,
 քան թէ անոնք անառակութեամբ
 թշուառ և անշնորհք եղած տեսնալ :
 Օք որ մեր զաւկընելը պահպանել

կուզենք, պարտինք մեր պարտաւութիւններուն վրայով տեղեկութիւն ստանալու ետևէ ըլլու :

Բայց սակայն միայն կարդալը բաւական չէ : Պարտինք մենք մեր խորհութիւններուն բանեցունել, և մեր տեսածին վրայով զգուշութեամբ հոգ տանել : Ես մէկ մայր մը կըճանչնամ, որ իր զաւկին մանկութենէն անոր օր ըստ օրէ զարդանալուն վրայով շարունակ օրագրութիւն մը կը նէր : Զգուշութեամբ կըդրէր ամեն զործքերը որ իր տըւած կըթութեանը կըվերաբերէին, և կըդիտէր թէ իր բռնած ճամբայէն ինչ զօրութիւն յառաջ կուզար իր զաւկին վարմունքին վրայ : Ինչպէս որ մէկ բժիշկ մը կընայի կըդիտէ իր զրած զեղերուն զօրութիւնը, ասանկ և ասկէց ալ է վելի հաստատութիւնով ու զգուշութիւնով կընայէր իր տըւած բարոյական զեղերուն և զեղթափիններուն զօրութեանը : Տղին բացիւլու կարողութիւն

ները, իր յօժաբութիւններուն բացա-
 յայտութիւնները, իր բնական բարե-
 խառնութիւննը, իր զլիստւոր տկո-
 րութիւնները, մօրը ամէն օրվան մըտ-
 մբոտալու բանները եղած էին : Ենոնց
 ամէնը մի ըստ միոջէ զրված էին : Ե-
 սանկով ան մայրը էվելի շուտով տե-
 ղեկութիւն կրատանար քան որչափ
 կարող էր ստանալ մեկ ուրիշ ճամ-
 բով մը . իր միտքը սորմէցուցած էր
 նորանոր հնարքներ ու խորհուրդներ
 գտնալու : Զանազան շարժառիթնե-
 րուն իր միտքին տրւած դօրութիւննեն
 ամէն օր դիտութիւն կրատանար : Եւ
 իր ունեցած զօրութիւնը իր զաւկին
 վրայ, օր է օր կեվելնար : Եհա ասի-
 կա հիմայ մայրական հաւատարմու-
 թեան կընմանի : Եսիկա կըցուցընէ
 թէ մայրը կիմանար որ ինքը կարօ-
 տութիւն ունի իր զաւակը վարժելու
 կերպին տեղեակ ըլլալու, և կըջանայ
 անիլ ո ձեռք ձգելու : Եւ կըցուցընէ
 ևս թէ ինքը կրկտմի որ իր միտքը

Հոգինեցունեէ , որպէս զի կարող ըլլոյ
իր պարտաւորութիւնները կատարե-
լու :

Որ և իցէ մայր թող առ կերպը
համբայ մը բռնէ , և անանկ խիստ
շուտով պիտի յառաջանայ մանկական
մուաց առաջնորդութիւն ընելու գի-
տութիւնին մէջ : Իր դաւակը առջե-
անգամը բարկութիւն ցուցընելուն ,
անոր բարկութիւնը իջեցունելու հա-
մար ինչ ճամբայ բռնեց նէ , և իր
ըրած ջանքերը ինչ կերպով յաջող
դանըվեցան նէ թող զրէ :

Ասանկ մէկ օրագրութիւն մը բռու-
նելու ընդհանուր կերպը դիտնալու
համար մէկ օրինակ մը կըկամիմ զը-
նել հոս :

Յունվար . 10 , 1839 : Եսոր գրի-
դորը շատ բարկութիւն ունեցաւ իր
քրոջը վրայ , ու հրեց դետինը ձգեց
անիկա : Գրիգորը պատժելու համար՝
մարիամին խնձոր մը տըւի , ու իրեն
չի տըւի : Բայց ինձի երեւաց որ Գր-

ըիգորը իր բարկութենէն զիջանելու
տեղը էվելօք նախանձեցաւ ու բոլբո-
քեցաւ իր քրոջը վրայ :

15. Ասօր մարիամը սիրով չի վար-
վեցաւ իր եղբօրը հետը : Որտմտացի
որ մէկ ուրիշ ճամբայ մը բռնեմ մա-
րիամը վարժելու , տարբեր գրիգորին
համար բռնած ճամբայէս : Ենոնց
երկուքն ալ քովս կանչեցի ու ըսի ,
«Ուարիամ Աստուած չի հաւնիր եր-
բոր կըտեսնայ որ դուն ասանկ գէշ
կիրքեր ունիս քու վրադ : Ուստի դուն
ինչպէս կրնաս աս իրիկուն Աստուծմէ
խնդրել որ միշերը քեզ պահպանէ ,
երբոր դուն ասօր անհնազանդ դտնը
վեցար իրեն» : Ես կերպովս քիչ մը
ատեն խօսելով իրեն , աչքերէն ար-
ցունք գալ սկըսեց ու իր եղբօրմէն
ներում խնդրեց : Ծուտ մը սկըսեցին
նորէն իրարու հետ խաղալ անանկ
ուրախ և սիրով ինչպէս որ միշտ էին :
Ուարիամ աս իրիկուն քնանալու հա-
մար անկողին մանալէն առաջ , Ես

տուծմէ թողութիւն խնդրեց , ու խոս-
տացաւ որ ջանք ընէ ալ մէյմալ բը-
նաւ չի բարկանալու : Անձ յոյս ունիմ
որ երկուքին մտացը մէջ ալ անանկ
մը տպաւորեցաւ թէ բարկութիւնը
մեղք է , որ շուտով չի պիտի մունան
ան տպաւորաւթիւնը :

18 . Գրիգոր ղիպուածով մեծաղին
կանթեղ մը կոտրեց ասօր : Կարծեմ
թէ առանց իրաւունքի չեխեցի անի-
կա : Պիտի ջանամ որ ասկէ ետև իմ
կիրքերս էվելօք կատարելապէս
յաղթեմ :

Յունվար . 22 . Աարիամ կըսկը-
սիկոր չափազմնց սէր մը տալ հագ-
վելու , որ չի վոյլեր : Աս օրերս շատ
հիւրեր ունեցանք , և շատերը իր գե-
ղեցիկ Փիստանը գովեցին իրեն : Պար-
տիմ անանկ հագվեցունել անիկա՞ որ
պարզ ըլլայ , և ուրիշներուն նկա-
տումը չարթընցունէ :

Թէ որ ասօր պէս ճամբայ մը բըւ-
նըվելու ըլլայ յարատեռութեամբ , ան-

տարակոյս կառավարութեան արհես-
տին մէջը մեծ վարժութիւն կըստա-
նայ մէկ մայր մը : Այսուը պարտի աս-
բանիս վրայ մտմտալ . պարտի աղէկ
մը նկատել թէ իր գաւկըներուն բնա-
ւորութիւնները ի՞նչ ատկութիւններ
ունին :

Ա երի պարբերութիւնը գրելէս
ետքը մէկ դիր մը հասաւ ինձի : Անի-
կա մէկ մայր մը դրեր էր, որ շատ ա-
տեն աս մեր վերը ըսած կերպը գոր-
ծածեց, անոր համար շատ կըհաճիմ
անոր գրածը հիմայ հոս տեղ դնել :

Գուցէ քանի մը մայրերու առջե-
բերանը անհնար երեայ վայելուչ
կամ անսըխալ կերպով կանոնաւոր
օրագրութիւն մը բանելը : Ճշմարիտ
է որ առջե բերանը քիչ մը ջանքի
կարօտ է : Բայց աս բանս թէ որ օդ-
նութիւն ընէ նէ իր պարտաւորու-
թիւնները կատարելու ատենը, ալ
ուր է ան խղճմտանքի տէր եղող մայ-
րը որ ասան' մէկ ջանքէ մը վախնա-

լով մէկ դի քաշվի : Շ աս օդուտներ
կըսուսացվի ասանկ մէկ յիշտակարան
մը բռնելէն , և անիկա կարճ յիշա-
տակարան մը թող ըլլայ , որ շատ
ժամանակ չի կորարնցունեն անոր վրայ
ան մայրերը որոնք իրենց ժամանակին
մեծ մասը իրենց ընտանեացը վերա-
բերեալ ուրիշ պարտաւորութիւն-
ներուն վրայ ծախելու պարտաւոր են :

Առաջին օդուտը աս է՝ որ կըհար-
կաւորի մայրերուն կանոնաւոր կեր-
պով ամէն օր մտմտալ ու եղածը զը-
րել , որ մէկ վարժութիւն մըն է ի-
րենց : Ո՞էկ մանկամարդ մայր մը՝ որ
իր ընտանեացը հոգերովը ու պարտա-
ւորութիւններովը բեռնաւորած է ,
կարելի է թէ առջե բերանը անանկ
զգայ՝ որպէս թէ ժամանակ չունի միտք
հոգնեցունելու . բայց միայն տասը
բոպէ աս բանիս տալը շուտով պիտի
հասկրցունէ իրեն որ իր ուրիշ պար-
տաւորութիւնները էվելի աղէկ կեր-
պով մը կըկատարինկոր ասանկ ընե-

լրւն համար : Եթ զաւկըներուն վրայ
ունեցած պարտաւորութիւնները է՝
վելոք հաճութեամբ կըսկըսի կատա-
րել ան , և ասանկ դիւրին կերպով
վարժըվելով անոնց վարժապետը ու-
առաջնորդը ըլլալու կըյարմարէ ին-
քըլինքը :

Երկրորդ՝ ասանել յիշատակարան
մը բռնելու սովորութիւնը կըհամողէ
մայրը էվելի հոգողութիւնով նայել
իր գործքերուն ինչ շարժաւիթներէ
յառաջ եկած ըլլալնուն վրայ , ու ըն-
տանեկան կառավարութեան համար
ունեցած սկզբունքներուն վրայ . և
կըյորդորէ ևս ան բռն իր սիրուը ու
վարքը կառավարել , և էվելոք ջանք
ընել անանկ հոգի մը ունենալու որուն
տմէն մոյր կարօտ է . այսինքն՝ աղօ-
թասէր հոգի մը :

Աս (յիշատակարանը կամ օրադը-
րութիւնը) ինչ կերպ ըլլալու է նէ
քիչ մը հասկըցունելու համար , հե-
տեւեալ ծանօթութիւնները կըկամիմ
տալ :

1. Օաւկիդ պղտիկութեան ատենը
առջի ցուցըցած բարկութեան նշան
ները նշանակէ, ու անիկա նուածելու
և յաղթելու համար քու ըրած պարզ
փորձերէդ ինչ որ յառաջ եկաւ նէ
զրէ :

2. Կշանակէ օրագրութեանդ մէջ
թէ քու ղաւակդ որ բանի վրայ եվե
լօք հաճութիւն ունի, ու ցուցուր թէ
ինչպէս ան հաճոյական առարկայէն
հանած բարոյական և Քրիստոնէական
գաս մը սորվեցունելու պատեհութիւ
նը յառաջ տարիը :

3. Կշանակէ թէ ինչ ճամբայ բըռ
նեցիր զաւկիդ հնազանդութիւն սոր
վեցունելու : Դրէ ևս պատահած դըժ
ուարութիւնները, ու ինչպէս անոնց
յաղթելու :

4. Առաջին Քրիստոնէական վար
ժութիւնը ինչ ճամբով սկսեցիր անոր
տալ նէ նշանակէ . ու նաև որ բանին
վրայ որ ընդհանրապէս զօրաւոր հա
ճութիւն մը կըցուցընէ զաւակդ իրեն
սուացը մէջ :

Հետևեալ պարբերութիւնը ասանկ
յիշատակարանի մը մէջէ հանած է ,
որն որ մէկ մայր մը սովորութիւն ու
նէր բանելու :

Կարելի է թէ քիչ բնաւորութիւն
ներ կան որ էվելի խոհեմհատատուն
և միօրին սկ կառավարութիւն մը պա-
հանչեն , որչափ որ կամակորութիւնը
կամ պինտ զլուխութիւնը կըպահան-
չէ : Երդարե չի կայ մէկ ուրիշ պակ-
ռութիւն մը որ տակից էվելի յարմար
ըլլայ մօրը սիրտը տրտմութեամբ գե-
րեզմանը իջեցունելու , և զաւակը ո-
մենաթշուառ պատանի մը ու երիտա-
սարդ մը ընելու , քան թէ կամակո-
րութիւնը՝ թէ որ զանց ըլլըրվի ան ,
կամ թոյլտուութիւն ըլլայ զօրանա-
լու : Անիկա տղին հասակին հետը կը-
մեծնայ ու անոր ուժին հետը կուժով-
նայ : Եւ սակայն շատ մայրերէն լսե-
րեմ որ կըսեն թէ , “Տղան շատ կա-
մակոր է , իր կամքը կուզէ ընել . և
կարծեմ անիկա դեռ չափէն էվելի”

պղտիկ է հասկընալու , ու յաճախ
 պատիժը միայն անոր սիրտը պիտի ա-
 մուրցունէ” : Ո՞ւ էկ տղայ մը բան սոր-
 վելու համար չափէն էվելի պղտիկ չի
 կընար ըլլալ . այսինքն մէկ տղայ մը
 ձայնին եղանակը ու երեսին նշանները
 նկատելու և իմանալու սկսածին պէս ,
 բարոյական համարներ սորվելու չափ
 մեծած է ան : Ենտարակոյս Ճմա-
 րիտ է թէ պատիժը ջանալու է անսանկ
 կերպով մը ընել որ անոր սիրտը կա-
 կուղցունէ ու նուածէ , և ոչ թէ տ-
 նիկա էվելօք բորբոքէ : Տայց տղին
 պէտք է իմացունել թէ իր կիրքը մօ-
 րը իշխանութեանը տակը պիտի ըլ-
 լայ : Օրինակի աղագաւ ըսենք թէ
 քու տղադ մէկ արդելեալ բանի մը
 հետ կըխաղակոր . դուն իրեն անու-
 շութեամբ բայց հաստատուն կերպով
 մը կըսէս որ ան բանը վար դնէ , և
 ինքը չուղէլ քու հրամանդ կատարել :
 Թէ որ ցաթկես ու ան բանը յափըշ-
 տակէս անոր ձեռքէն , կըսկըսի լալ ,

կըքարկանայ որ իր կամբը կատարելու
 յուսէն կըզըկըվի : Վասը հակառակը
 թէ որ ան բանը ցուցընելով ըսես թէ
 «Պարտիս» պարտիս դուն առ բանը
 վար դնել” , ու անիկա կուղէ , երկ-
 բորդ հրաման մը և ծանր և իշխանա-
 կան ձայնով մը եղած , շատ անդամ
 պիտի հնագանդեցունէ անիկա : Վնա-
 տենը տըսն քու երեսիդ վրայ խնդում
 պէտք է որ տեսնայ իրեն ըրած հնա-
 դանդութեանը հաւնելուդ համար . ու
 թէ որ անիկա գիրկդ առնելով ուրիշ
 բանով մը զըօսցունես որն որ աղէկ
 գիտես թէ հաճելի պիտի ըլլայ իրեն ,
 ալ ան չի պիտի մոռնայ իրեն որըած
 համարդ , մանաւանդ թէ որ ջանառ
 բաղդատել ան արդելեալ բանը ու
 րիշ բանին հետը որն որ իրեն հաճու-
 թիւն պատճառեց : Պարձիր նորէն
 ու ըսէ իրեն , “Պուն աս բանին ամեւ
 նկին դպչելու չես” , և ասիկա քանի
 մը անդամ կրկնէ : Ետքը տուր իրեն
 ուրիշ բան մը ու ըսէ , “Պուն ասիկա

կընաս ունենալ , ա՛ռ աս՞ : Տասը
կամ տասներկու ամսու տղէկ մը աս
կերպովս հնազանդութեան աղէկ հա-
մար մը կընայ սորվիլ : Ծէ որ չուղէ
քու կամբիդ դիջանիլ , թեթև պա-
տիժ մը տալու է անոր՝ որով իմացու-
նես իրեն թէ անհնազանդութեան ե-
տևէն պատիժ կուգայ միշտ : Բայց
ետքը զգուշանալու է տղին միտքը հա-
ճեցունել , և քու դէմբիդ վրայ ա-
մենսկին երևալու չէ բարկութիւն կամ
կիրք մը :

Իրեք տարուէն պղտի իմ տղաս իր
յամառ բնաւորութիւնովը շատ անգամ
նեղութիւն կուտար ինձի : Եթ յան-
ցանքին համար շատ սաստկապէս կը-
պատժըվէր , բայց միայն երբոր խիստ
հարկաւոր ըլլար : Ենդամ մը մեծ
կամակրութիւն մը ընելէն ետև ,
հարկաւորեցաւ պատժել անիկա : Պա-
տիժը լրմըննալէն ետքը ըսաւ թէ ա-
մենսկին չեմզդջար իմ ըրած յանցան-
քիս վրայ : Ինքը ամենսկին մութ տեղ մը
բանտարգրված չէր պատիժի համար ,

• Երովհետեւ շատ պղտի տղոցը երբեմն
շատ վտանգաւոր է աս կերպ պատի-
ժը . բայց իմացայ որ մութ մնալէն
ալ չի վախնարկոր ան : Ակացի ան
փորձը ընել , ու եղած խօսակցութիւ-
նը հոս կըդնենք Ճիշտ ինտոր որ պա-
տահեցաւ :

Առյօն . Կըցաւիմ որ դուն ասանեկ ա-
նաւակ ես . քեզ մութ սենեակի մը
մէջ պիտի դնեմ , ուր որ մարդ մը
քեզ չի կլնար տեսնալ :

Տղան . Ես չեմ ելլար ու աղէկ տղայ
մը ըլլար ըստ ան ծանր կերպով մը :

Առյօն . Ես իմ խօսքս պահեցի , և
նոյն ատենը ըսի իրեն , « Երբոր աղէկ
տղայ ես , կանչէ , ու ես դուռը կըբա-
նամ . բայց հիմոյ հանդարս պիտի
կենաս , որ բանի մը չի պիտի դպչիս » :
Հոն տասը ըոպէին էվելի կատարեալ
լուռ կեցաւ , ետքը ամուր մը զարկաւ
դուռը :

Առյօն . Հիմոյ աղէկ տղայ եղան մի :

Տղան . Չէ , թէ որ դուրս ռամ նէ
աղէկ տղայ չեմ :

Առաջ · Ենանկ է նե ինչո՞ւ զուռք
կըղարնեսկոր :

Տպան · Դուլս ելլալ կուղեմ :

Առաջ · Օմէ որ աղէկ տղայ ես նե
զուռք պիտի բանամ · բայց դուն շատ
անառակ էիր ու ինձի նեղութիւն տը-
ւիր : Աղէկ տղայ պիտի ըլլաս մի :

Տպան · Չէ · ես ոչ աղէկ եմ ու ոչ
արտում (իմ ըրածիս վրայ) · չեմ ու-
ղեր դուլս դալ :

Առաջ · Շատ կըցաւիմ տըղաս ոյր
ասանկ անզգամ ես : Դուն հիմայ ատ
խիստ մութ սենեակին մէջ ն ես , ու
քու մայրդ քեզ չի կըցաւիմ տես-
նալ . բայց Աստուած կընայ տեսնալ
քեզ : Աստուած քեզի սրդողած է :
Կուղեմ որ իմ տղաս , ասօր վրայ մըս-
մըսաս · դուն կընաս մի Աստուածոյ
վրայով մտմտալ ու իրմէն ինդրել
որ քեզ պահպանէ , երբոր ասանկ ա-
նառակ ու անզգամ ես :

Պաղէի մը չոփ լոիկ կեցաւ տղան ,
ու ետքը մէկ հաճելի ցածկուկ ձայ-
նով մը ըստ , “Ոայրիկ , ես հիմայ

աղեկ տղայ եմ։ Ուստի դուքս եկաւ
ու իր խաղալուն զնաց, որպէս թէ իր
խաղաղութիւնը աւրելու բան մը պա-
տահած չէր։ Ես ամենեւին տարակոյս
չունիմ որ աս դիպուածը մէկ դշրաւոք
ու մնայուն տպաւորութիւն մը պիտի
ընէ, ու հաղաքումէկ ցաւերէ պիտի
աղատէ իմ սիրտս գալու ատեններուն
մէջ, և սաստիկ պատմելու հարկա-
ւորութիւնը պիտի խափանէ”։

Հատերուն միտքը բան մը կայ տը-
պաւորված է, թէ կառավարութեան
վարպետութիւնը ընտկան պէտք է
ըլլալ, և ոչ թէ սորվելով կամ մըտ-
մըտալով ձեռք բերվիլ։ Եայց դուն
նայէ ան ծնողըներուն՝ որ շատ յաջո-
ղակ եղան ընտանեկան կառավարու-
թեան մէջ, ու պիտի գոնաս որ ա-
նոնք ան տեսակը մոյրեր էին որ ջան-
քով և միօրինակ հաստատութեամբ
աս բանիս ետևէն ինկան և անանկ
ձեռք բերին անիկա։ Կարելի է թէ
դուն մէկ երեւելի ուսումնականի մը
տուն երթաս, և անոր անկարգ զաւ-

կըներուն վրայ նայելով դուցէ քու
 սիրտդ կոտրի : Ենատենը դուն քեզի
 կըսես , թէ որ աս մարդը իր զօրաւոր
 ու աղէկ վարժեալ միտքովը իր ըն-
 տանիքը չի կընար կառավարել նէ ,
 ես ինչպէս կընամ յոյս ունենալ աս
 գործին մէջը յաջողութիւն գտնալու :
 Շայց քիչիտիկ մը նկատես նէ քու
 միտքդ պիտի համոզվի թէ աս մարդը
 իր ժամանակը ու մտմտուքը ուրիշ
 բաներու տըւած է : Ենիկա իր զաւ-
 կըները դանց կընէկոր , ու անոնք
 ճիշտ ան բնաւորութիւնները կըստա-
 նանկոր որոնք որ կընանք յուսալ ա-
 սանկ անկարգ իշխանութեան մը տակ
 լյնալէն : Տղայ մը որչափ լաւ վարժը-
 վինէ բացարձակապէս ստոյդ չէ թէ
 անիկա բարեպաշտօն պիտի ըլլայ :
 Շայց թէ որ մենք մեր կառավարու-
 թեանը մէջը առանց կանոնի կամ մըտ-
 մըտալու կամ զգուշութիւն ընելու
 յառաջանանք նէ անտարակոյս շատ
 լեղի հետեւանքներ պիտի քաղենք :
 Ամէն մայր պէտք է որ իր պարտաւո-

բութեանը վրայ մտածէ : Պէտք է ոք
 զգուշութեամբ նայի ու քննէ իր վար-
 ժութիւն տալու կերպէն յառաջեկած
 արդիւնքը : Կիրքէրուն մէջէն միայն
 քիչտիկ մը օգուտ կրնայ քաղվիւ ,
 թէ որ անոնց մէջի եղածներուն վրայ
 բարակ չի մտմտանք նէ : Կրնան ու
 բիշները շատ աղէկ խորհուրդներ
 տալ մեղի . բայց մենք ան խորհուրդ-
 ները առնելու և անոնց վրայ մտածե-
 լու ենք , անոնց զօրութիւնները քննե-
 լու և մեր մտքերուն մէջը մեր ուրիշ
 խորհուրդներուն հետը մէյտեղ խառ-
 նելու ենք անոնք : Ո՞ենք մեզ սորվե-
 ցունելու ենք նոր հնարքներ ու խոր-
 հուրդներ գոնալու : Ան մայրը որ աս
 բանը կընէ անտարակոյս իմաստու-
 թեան մէջ պիտի յառաջանայ : Օրէ
 օր պիտի իմանայ ան որ էվելի դիւրու-
 թիւն կըստանակոր իրեն ուղած բնա-
 ւորութիւնը իր զաւկին վրայ հաստա-
 տելու : Եւ անոնցմէ ընդունած հնա-
 զանդութիւնը ու սէրը՝ որ օրէ օր կէ-
 վելսան , իր մշտնջենաւոր վարձքը

պիտի ըլլոյ : Մէկ ընտանիք մը վար
 ժելու համար հոգ ու աշխատութիւն
 պէտք է : Ըստ մէկ ուրիշ հոգ մը
 այսչափ առատօրէն վարձք չընդու
 նիր . մէկ ուրիշ աշխատութիւն
 այսչափ մնայուն և ծշմարխտ վայի
 չութիւն չի տար : Դուք ով մայրէ
 պահէլու համար ձեզի տրված անմա
 հոգիներ ունիք : Են հոգիներուն յա
 լիտենական վիճակը ըստ մեծի մասին
 ձեր ձեռքն է . ձեր տղիտութիւնը
 կամ անհաւատարմութիւնը կարելի է
 թէ վայերուն աշխարհը կիջեցունէ
 անոնք : Ձեր հաւատարմութիւնը կա
 րելի է թէ երկնից բնակարանները
 կրհանէ անոնք : Դուք և ձեր զաւկը
 ները կարելի է թէ շատ չանցած հը^շ
 րեշտակային թևերով երջանիկ հոգի
 ներուն գտնըլված սահմաններուն մէջը
 պիտի թուքրտիք , թէ որ հոս հաւա
 տարմութեամբ կաղօթէք , ու կաշ
 խատիք որ անոնք եղինքը բնակելու
 համար մեծ չունէք

